

ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆ

Ժողովրդավարության բանալին.

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ**

Մենագրություն

ԵՐԵՎԱՆ - 2008

Մենագրությունը տպագրության է երաշխավորել ԵՊՀ
Ժուռնալիստիկայի ֆակուլտետի խորհուրդը:

Յեղիևակ՝ **Շուշան Դոյրոյան**
բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Խմբագիր՝ **Լենդրուշ Ալոյան**
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մենագրությունում ներկայացված է տեղեկատվության ազատության դե-
րը եւ նշանակությունը ժողովրդավարական հասարակության ձեւավոր-
ման գործընթացում: Յեղիևակն անդրադառնում է տեղեկատվության
ազատության իրավական երաշխիքներին, ազգային եւ միջազգային
իրավական կարգավորման առանձնահատկություններին, Յայաստա-
նում տեղեկություն ստանալու իրավունքի իրացման ընթացքում ծագող
հիմնախնդիրներին, ինչպես նաեւ՝ այս իրավունքի ոտնահարման պա-
տասխանատվության մեխանիզմներին եւ կիրառման պրակտիկային:
Մենագրությունը հասցեագրված է ոչ միայն ոլորտի մասնագետներին,
այլեւ՝ ընթերցողների լայն շրջանակին:

Բովանդակություն

ՉԼՈՒՄ Ա Տեղեկատվության ազատության նշանակությունը.....	4
ՉԼՈՒՄ Բ Տեղեկատվության ազատության ծագման եւ զարգացման պատմական ակնարկ	13
ՉԼՈՒՄ Գ Տեղեկատվության ազատության սկզբունքները	31
ՉԼՈՒՄ Դ Տեղեկություն ստանալու գործընթացը	48
ՉԼՈՒՄ Ե Տեղեկության տրամադրման մերժումը	68
ՉԼՈՒՄ Զ Լրագրողների հավատարմագրման որոշ հիմնախնդիրներ	81
ՉԼՈՒՄ Է Տեղեկություն ստանալու իրավունքը եւ պետական գաղտնիքի պաշտպանությունը.....	94
ՉԼՈՒՄ Ը Տեղեկատվություն ստանալու իրավունքի արտադատական եւ դատական պաշտպանությունը	118
ՉԼՈՒՄ Թ Պատասխանատվություն տեղեկություն ստանալու իրավունքի ոտնահարման համար	152
ՎԵՐՋԱԲԱՆ	158

Տեղեկատվության ազատության նշանակությունը

Տեղեկատվության ազատությունն այսօր դիտվում է որպես քաղաքացիական հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքներից մեկը: Իրազեկ եւ ակտիվ քաղաքացիական հասարակության ձեւավորման, իշխանության գործունեության վերահսկողության, ինչպես նաեւ կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն եւ արդյունավետ միջոցը տեղեկատվության ազատությունն է: Ինչպես նշվում է Եվրոպական խորհրդարանական ասամբլեայի դեռեւս 1979թ. փետրվարի 1-ի որոշման մեջ. «Ժողովրդավարությունը կարող է պատշաճ կերպով գործել միայն այն դեպքում, եթե ողջ ժողովուրդը եւ նրա կողմից ընտրված ներկայացուցիչները լիովին իրազեկված են»¹: Ասամբլեան այն կարծիքն է հայտնել, որ

«որոշ անհրաժեշտ բացառություններից բացի, հասարակությունն իրավունք ունի ստանալ պաշտոնական տեղեկատվություն: Տեղեկատվության ազատությունը կօգնի հաղթահարել կոռուպցիան եւ պետական միջոցների վատնումը»²:

Անժխտելի է այն իրողությունը, որ տեղեկատվության վերահսկողությունը ցանկացած իշխանության համար սեփական սխալները եւ ձախողումները թաքցնելու լավագույն միջոց է: Չէ՞ որ իրազեկ հասարակությունում տեղ չի մնում կոռուպցիայի գարգացման համար: Այս իսկ հիմնավորմամբ իրազեկ եւ բանիմաց հասարակության հայեցակարգը դրվում է ժողովրդավարության հիմքում: Չի կարող լինել ժողովրդավարություն առանց իրազեկ եւ բանիմաց քաղաքացիների առկայության:

1. Civil Liberties: Legal Principles of Individual Freedom, Edwin Shorts & Claire de Than, Sweet & Maxwell, էջ 243:
2. Civil Liberties: Legal Principles of Individual Freedom, Edwin Shorts & Claire de Than, Sweet & Maxwell, էջ 244:

Կառավարությանը հսկելու եւ երկրի կառավարմանն ակտիվորեն մասնակցելու համար քաղաքացիներն անհրաժեշտ տեղեկատվության կարիք ունեն: Նրանք իրավունք ունեն ստանալ հասարակական հետաքրքրություն ներկայացնող կամ իրենց անձնական շահերը շոշափող տեղեկություններ, պետական մարմինների գործողությունների մասին տեղեկություններ, ինչպես նաեւ տեղեկացվել նախատեսվող կամ ընդունված որոշումների մասին: Միայն այս կերպ քաղաքացիները կարող են պատշաճ վերահսկողություն իրականացնել պետական իշխանության գործունեության վրա:

Այս համատեքստում ԱՐՏԻԿԼ 19-ը՝ արտահայտվելու ազատության միջազգային հասարակական կազմակերպությունը տեղեկատվությունը բնութագրել է որպես «Ժողովրդավարության թթվածին»³:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1992թ.-ի ապրիլի 29-ի «Կարծիք հայտնելու եւ տեղեկատվության ազատության մասին Յոչակագրում» առաջ է քաշվում հետեւյալ գաղափարը.

3. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003 p. 3: *Թորի Սենդելը ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպության իրավական ծրագրերի ղեկավարն է (Շ. Դ.):*

«Տեղեկատվության եւ ՋԼՄ-ի ոլորտում պետության առջեւ դրված են հետեւյալ խնդիրները՝ պետական սեկտորում բաց տեղեկատվական քաղաքականությունը (ներառյալ՝ տեղեկատվության մատչելիությունը, որն անհրաժեշտ է քաղաքացիների կողմից քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային հարցերի ընկալման ունակության բարձրացման համար) եւ նմանատիպ հարցերի ազատ քննարկման հնարավորությունը»:

Եվրախորհրդի մեկ այլ փաստաթղթում՝ նախարարների կոմիտեի 2002թ.-ին ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականում նշվում է⁴, որ տեղեկատվության ազատությունը՝

- **հանրությանը հնարավորություն է ընձեռում** ճիշտ ընկալել եւ առանցքային կարծիք կազմել այն հասարակության վերաբերյալ, որում ինքն ապրում է, եւ այն իշխանությունների վերաբերյալ, որոնք ղեկավարում են իրեն՝ միեւնույն ժամանակ խթանելով հասարակության շահերին առնչվող խնդիրների լուծմանը քաղաքացիների մասնակցությունը,
- **խթանում է** պետական կառավարման մարմինների արդյունավետությունն ու օգտակարությունը եւ օգնում վերջիններիս պահպանել իրենց ամբողջականությունը՝ խուսափելով կոռուպցիայի վտանգից,
- **նպաստում է** պետական կառավարման մարմինների օրինականության հաստատմանը՝ իբրեւ հանրային ծառայություններ մատուցողների, եւ պետական իշխանության

4. Ձանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում, Երեւան, 2003, էջ 210:

նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը:

Ներկայումս տեղեկատվության ազատությունը հատկապես դիտվում է որպես կոռուպցիայի դեմ հաջող պայքար իրականացնելու լավագույն միջոց: Պատահական չէ, որ հակակոռուպցիոն պետական ռազմավարական փաստաթղթերում զգալի տեղ է հատկացվում տեղեկատվության ազատությանն ու հրապարակայնությանն ուղղված միջոցառումներին⁵:

ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդեի հայտնի արտահայտությունը հիմնավորում է այս միտքը. «Մի փոքր արեւի լույսը լավագույն փստահանումն է»⁶: Սա է թերեւս պատճառը, որ ԱՄՆ մի քանի նահանգներում տեղեկատվության ազատության օրենքները պարզապես անվանվում են արեւի լույսի օրենքներ, դրանք թափանցում են իշխանական մութ միջանցքներ եւ կանխում կառավարության «մութ» գործողությունները:

Տեղեկատվության ազատության մասին առաջին իրավական ակտն ընդունվել է Շվեդիայում դեռեւս 1766 թվականին: Սակայն տեղեկատվության ազատության դասական ձեւակերպումը մարդու իրավունքների ժամանակակից համատեքստում ձեւակերպվել է Մարդու իրավունքների մասին հանրապետական հռչակագրում:

1946 թվականին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի որոշմամբ ընդունվում է.

5. Տեւ, օրինակ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը www.gov.am ինտերնետային կայքում:

6. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003, p. 4:

«Տեղեկատվության ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է եւ մյուս բոլոր ազատությունների անկյունաքարը: Այն կենսական նշանակություն ունի աշխարհում խաղաղություն եւ առաջընթաց ապահովելու համար: Պետությունների միջեւ փոխըմբռնումը եւ համագործակցությունն անհնար է առանց զգոն եւ առողջ հասարակական կարծիքի, որն էլ, իր հերթին, ամբողջովին կախված է տեղեկատվության մատչելիությունից: Տեղեկատվության ազատությունը ներառում է անարգել կերպով տեղեկատվություն հավաքելու, փոխանցելու եւ տարածելու իրավունքը այլուր եւ ամենուր»⁷:

Մարդու իրավունքների ժառանգությունը դիտարկելով՝ պարզ է դառնում, որ տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է եւ պատկանում է քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների թվին: Այս իրավունքի իրավական պաշտպանությունը քաղաքացիներին հնարավորություն է տալիս ոչ միայն ազատորեն փնտրել եւ ստանալ տեղեկություն, այլեւ լիարժեք գործադրել իրենց քաղաքական մյուս իրավունքներն ու ազատությունները:

Այսինքն, առանց այս իրավունքի անհնար է իրականացնել ընտրելու եւ ընտրվելու, միավորվելու, պետության կառավարմանը մասնակցելու եւ մյուս քաղաքական, ինչպես նաեւ տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքները (բնակարանի իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, առողջության պահպանման, կրթության իրավունքներ

7. International Law Governing Communications and Information (A Collection of Basic Documents), Edward W. Ploman, Greenwood Press, 1982, p. 127.

եւ այլն): Այն ծառայում է նաեւ սոցիալական, քաղաքական եւ տնտեսական հավասարության հասնելու համընդհանուր ձգտումին: Տեղեկություն փնտրելու եւ ստանալու իրավունքը հռչակվում է նաեւ՝

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածով,
- Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ հաղորդելու իրավունք տեղեկատվության ցանկացած միջոցներով եւ անկախ պետական սահմաններից:
- Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածը եւս ամրագրում է այս սկզբունքը:
- Այս իրավունքը սահմանվում է նաեւ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության եւ բնապահպանական խնդիրների արդարացի լուծումների մատչելիության մասին Օրիուսի կոնվենցիայով⁸, 1982թ.-ի ապրիլի 29-ին ընդունված խոսքի եւ տեղեկատվության ազատության մասին հռչակագրով:
- Հասարակական իշխանության մարմինների մոտ առկա տեղեկատվության մատչելիության վերաբերյալ N'R (81)19 Հանձնարարականով,

8. Ընդունվել է 1998թ. հունիսի 25-ն Դանիայի Օրիուս քաղաքում:

- Արխիվների մատչելիության վերաբերյալ եվրոպական քաղաքականության մասին N° R (2000) 13 Հանձնարարականով⁹:

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի 10-րդ հոդվածը խոսում է այն մասին, որ տեղեկություն ստանալու իրավունքը չի կարող սահմանափակվել իշխանության մարմինների կողմից: Այս հոդվածը քաղաքացիներին ապահովում է պաշտոնական ինֆորմացիա ձեռք բերելու իրավունքով:

1981թ.-ին Եվրահանձնաժողովն այն կարծիքն է հայտնում, որ չնայած 10-րդ հոդվածով երաշխավորված տեղեկատվություն ստանալու իրավունքը «հիմնականում երաշխավորում է տեղեկատվության ընդհանուր աղբյուրների մատչելիությունը, չի կարելի բացառել, որ որոշակի հանգամանքներում այն ներառում է այնպիսի փաստաթղթեր ձեռք բերելու իրավունքը, որոնք մատչելի չեն բոլորին»¹⁰:

Այսպիսով, հանձնաժողովը ծայրահեղ դեպքում «in abstracto» ընդունել է, որ պաշտոնական տեղեկատվության մատչելիության իրավունքը որոշակի հանգամանքներում կամ որոշակի տեղեկատվության դեպքում պաշտպանվում է 10-րդ հոդվածով:

1982թ.-ի ապրիլի 29-ին տեղեկատվության եւ կարծիքների արտահայտման ազատության մասին հռչակագրի մասնակից պետությունները հռչակեցին սկզբունքներ, որոնց հետեւելու

9. www.coe.int.

10. Законодательство о СМИ, Учебно-практические материалы, 1999, стр. 33-35.

են մասնավորապես տեղեկատվության ազատության եւ լրատվության ոլորտում:

«Պետական սեկտորում իրականացնել բաց տեղեկատվական քաղաքականություն՝ ներառյալ ինֆորմացիայի մատչելիության ապահովումը քաղաքական, սոցիալական, տնտեսական եւ մշակութային հարցերն ազատորեն քննարկելու՝ քաղաքացիների հնարավորությունները զարգացնելու նպատակով»:

Եվրոպական հանձնաժողովն ընդունել է «Կանաչ փաստաթուղթ» (Green Paper) տեղեկություն ստանալու իրավունքի մասին, որը հաստատում է, որ եվրոպական եւ ազգային օրենքները պետք է ապահովեն պաշտոնական տեղեկատվություն ստանալու օրինական իրավունքը, որի սահմանափակումները եւս պետք է հստակ որոշարկված լինեն: Այս կարելու-րագույն փաստաթղթերը անդամ պետություններին պարտավորեցնում են հարգել տեղեկատվության ազատությունը, իրենց օրենսդրությամբ ապահովել այս իրավունքի պաշտպանությունը, դրական մեխանիզմներ կիրառել պաշտոնական տեղեկատվության մատչելիության համար:

Տեղեկատվության ազատության օրենսդրությունը կարող է վերահսկողության ճիշտ մեխանիզմ սահմանել (օրինակ՝ օմբուդսմենի՝ մարդու իրավունքների պաշտպանի միջոցով), այն կարող է նաեւ ձեւավորել պրակտիկա բոլորի համար, նույնիսկ նրանց, ովքեր քիչ են հակված հետեւել դրան:

Այն կարող է շրջադարձել սովորական դարձած գաղտնիության կանխավարկածը: Այն քաղաքացիներին օրինական իրավունք է տալիս ծանոթանալ պաշտոնական փաստաթղթե-

րին, առանց հիմնավորելու, թե ինչու են հետաքրքրված դրան-
ցով, իսկ մերժումն արդարացնելու բեռը դրվում է պետական
վարչակարգի վրա: ՏԱ օրենսդրությունները սահմանում են
կոնկրետ ժամկետներ, որոնց ընթացքում վարչակարգը պար-
տավոր է պատասխանել տեղեկատվության տրամադրման դի-
մումներին, ինչպես նաև տեղեկատվության որոշակի կատե-
գորիաների ժանոթանալու իրավունք է նախատեսում¹¹:

11. Շատ երկրներում արտահայտման ազատության եւ տեղեկատվության
ազատ փոխանակության սկզբունքներն ամրագրված են սահմանադրու-
թյան մեջ: Սակայն, քաղաքացիների կողմից այդ իրավունքներն իրականաց-
նելու համար պահանջվում է տեղեկատվության ազատության մասին հա-
տուկ օրենսդրություն: Օրինակ՝ Հարավաֆրիկյան Հանրապետության
1996թ.-ի Սահմանադրությունը պարունակում է իրավունքին վերաբերող
դրույթներ, ըստ որոնց այդ իրավունքները պետք է ամրագրվեն առանձին
օրենքով: Տեղեկատվության ազատության պաշտպանության մասին օրենքն
այնտեղ ընդունվեց 2000թ.-ի փետրվարին: Մեզանում գործընթացը հակա-
ռակ ուղղությամբ ընթացավ: Նախ, ընդունվեց «Տեղեկատվության ազատու-
թյան մասին» ՀՀ օրենքը, հետագայում՝ 2 տարի անց 2005թ.-ի նոյեմբերին,
այս իրավունքն ամրագրվեց նաև ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածում:

ԳԼՈՒԽ Բ

Տեղեկատվության ազատության ծագման եւ զարգացման պատմական ակնարկ

Տեղեկատվության ազատությունը սկիզբ է առել արեւմտ-
յան երկրներում՝ հարուստ հասարակություններում՝ Շվե-
դիայում, ԱՄՆ-ում, Կանադայում եւ Ավստրալիայում՝ դառ-
նալով անհատ քաղաքացուն իշխանությունից պաշտպա-
նելու միջոց: Այսօր աշխարհի ավելի քան 70 պետություննե-
րում¹² ընդունված է Տեղեկատվության ազատության մասին
օրենք: Տեղեկատվության ազատությանն առնչվող առաջին
իրավական ակտը Շվեդիայի 1766թ.-ի Մամուլի ազատու-
թյան մասին օրենքն է: Սակայն երկրորդ օրենքն աշխար-
հում ընդունվեց միայն երկու դար անց՝ 1966թ.-ին Միացյալ
Նահանգներում:

ԱՄՆ-ում տեղեկատվության ազատության մասին օրենքն ըն-
դունվեց անմիջապես Ուոթերգեյթյան սկանդալից հետո, երբ
երկու լրագրողների (Բոբ Վուդսվորդ եւ Կարլ Բերնսթայն)
լրագրողական հետաքննության շնորհիվ ԱՄՆ-ի պատմության
մեջ առաջին (*առայժմ միակ*) անգամ ստիպված եղավ հրաժա-
րական տալ երկրի նախագահը՝ Ռիչարդ Նիքսոնը: Մինչ ՏԱ
մասին օրենքի ընդունումը՝ ֆեդերալ մարմինների փաստաթղ-

12. 2007թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ըստ Դեյվիդ Բենիսարի ուսում-
նասիրության՝ www.freedominfo.org:

թերն ԱՄՆ-ում փակ էին, եւ միայն ԱՄՆ-ի նախագահ Լինդոն Ջոնսոնի կառավարման ժամանակ՝ 1966թ.-ի հուլիսի 4-ին Կոնգրեսն ընդունեց Ինֆորմացիայի ազատության մասին օրենքը:

Նախագահ Լինդոն Ջոնսոնն այդ օրենքի վրա հետեւյալ մակագրությունն արեց. «Չպարտության մեծ զգացումով հայտարարում եմ, որ Միացյալ Նահանգները բաց հասարակություն է, որտեղ ժողովրդի տեղեկատվություն ստանալու իրավունքը պաշտպանվում եւ երաշխավորվում է»¹³:

Տեղեկատվության ազատության գաղափարը, փաստորեն, լայն ճանաչում ստացավ միայն վերջին տասնամյակում: Դրա վկայությունն է այն իրողությունը, որ աշխարհում ընդունված 66 օրենքներից 37-ն ընդունվել է 1989թ.-ին Բեռլինի պատի փլուզումից հետո: Այսօր արդեն ավելի քան 20 երկիր այդպիսի օրենք մշակելու կամ ընդունելու գործընթացում է: ՏԱ գաղափարի տարածմանը մեծապես նպաստեց նաեւ այն, որ շատ միջազգային կառույցներ, ներառյալ ՄԱԿ-ը, ճանաչեցին այս իրավունքի, ինչպես նաեւ այս իրավունքը երաշխավորող օրենսդրության հիմնարար կարեւորությունը:

13. Շատ քչերին է հայտնի այն փաստը, որ ԱՄՆ նախագահ Լինդոն Ջոնսոնն արհամարում էր այս Ակտը: Ամերիկյան լրագրող Բիլ Մոյերսը, ով Ջոնսոնի մամուլի քարտուղարն էր, ասում էր, որ Ջոնսոնը «ատում է այն միտքը, որ լրագրողները կարող են տակնուվրա անել կառավարության առանձնասենյակները, ատում է նրանց, ովքեր կասկածի տակ են դնում պաշտոնական տեղեկատվության հավաստիությունը»: Նախագահն օրենքը ստորագրեց միայն այն բանից հետո, երբ ազդեցիկ թերթերի խմբագիրները սպառնացին, որ չստորագրելու դեպքում նախագահը կվարկաբեկվի: Իհարկե, ավելի ուշ Ջոնսոնն օրենքի ընդունումն իրեն վերագրեց: Միաժամանակ Ֆեդերալ հետաքննությունների վարչությունը սկսեց գաղտնի հետապնդել այն կոնգրեսմենին, ով պայքարել էր օրենքի ընդունման համար:

Շատ երկրներում տեղեկատվության ազատությունն առաջ մղվեց «սկանդալների» հետեւանքով: Այսպես՝ Կանադայում օրենքն ընդունվեց 1982թ.-ին, երբ հասարակությունն աղմուկ բարձրացրեց արդյունաբերության ոլորտում ոստիկանության ուժեղ հսկողության եւ պետական կարգավորման դեմ: Այդպես եղավ նաեւ Ճապոնիայում, որտեղ օրենքն ընդունվեց 1999թ.-ին՝ երկու տասնամյա գաղտնիությունից հետո:

Այս միտումը նկատվում է գրեթե բոլոր զարգացած ժողովրդավարական երկրներում: Ի հակադրություն՝ նորանկախ երկրներում, հատկապես, որոնք ձեւավորվել են սառը պատերազմից հետո նոր ժողովրդավարության ալիքի ներքո, տեղեկատվության մատչելիության օրենքների շարժիչ ուժը մասնակիորեն կախված է ժողովրդավարական կառավարության կամքից՝ լույս սփռել նախկին վարչակազմի գործունեության վրա՝ պաշտոնական փաստաթղթերը բացելով հանրության առաջ: Օրինակ՝ Չունգարիայում տեղեկատվության մատչելիության մասին օրենքն ընդունվեց 1992թ.-ի սկզբին: Ավելի ուշ արդեն 1990-ականների վերջին եւ 2000թ.-ի սկզբին հետեւեցին Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Չեխիան, Ալբանիան, Սլովակիան եւ Բուլղարիան:

Գործընթացն անշեղորեն հասավ նաեւ աշխարհի ամենագաղտնի համարվող պետությունները: 2001թ.-ին Մեծ Բրիտանիայի միացյալ թագավորությունը ընդունեց տեղեկատվության մատչելիության մասին օրենք, որի կիրառումը, սակայն, հետաձգվեց մինչեւ 2005թ.-ի հունվարի 1-ը: 2003թ.-ի հոկտեմբերին Թուրքիան եւս ընդունեց տեղեկատվության ազատության մասին օրենք: Գերմանիայում 2004թ.-ի դեկտեմբերի 17-

ին Բուճեթագն առաջին ընթերցմամբ ընդունեց Տեղեկատվության ազատության մասին Ֆեդերալ օրենքը: Ի դեպ, Լյուքսեմբուրգը միակ եվրոպական երկիրն է, որտեղ չկա ՏԱ մասին ազգային օրենք:

Բուլղարիայի Հանրապետության կենտրոնական կառավարության եւ վարչական բարեփոխումների նախարարությունը պետական կառավարման համակարգում իրականացվող մյուս բարեփոխումներից բացի զբաղվում է նաեւ տեղեկատվության ազատության հետ կապված խնդիրներով: Մասնավորապես, բոլոր պետական մարմիններում ստեղծվել են հատուկ վարչություններ, որոնք պատասխանատու են տեղեկություններ հավաքելու, տրամադրելու եւ վերլուծելու համար: Այդ վարչությունների հիմնական առաքելությունը կայանում է քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու, քաղաքացիների առաջարկություններն ու բողոքները վերլուծելու եւ հետադարձ կապ հաստատելու մեջ:

Ավելին, նրանք տվյալ հիմնարկի յուրաքանչյուր պաշտոնատար անձի պարտականությունների եւ քաղաքացիների իրավունքների մասին տեղեկությունները փակցնում են տեղեկատվական վահանակների վրա, որոնք գտնվում են այդ պաշտոնյաների գրասենյակների հարեւանությամբ: Այդ վահանակների վրա հատուկ ընդգծվում է տեղեկություններ տրամադրելու պարտականությունը եւ տեղեկություններ ստանալու իրավունքը:

«Տեղեկատվության մատչելիության ծրագիր» անվանում ունեցող բուլղարական հայտնի ՀԿ-ներից մեկը հաճախ վերա-

պատրաստման դասընթացներ եւ սեմինարներ է կազմակերպում Բուլղարիայում եւ Հարավ-Արեւելյան Եվրոպայում տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը կիրառելու վերաբերյալ: Դասընթացներին մասնակցում են տեղական եւ պետական կառավարման մարմինների, ՁԼՄ-ների, ՀԿ-ների ներկայացուցիչներ եւ քաղաքացիներ: Դասընթացները կազմակերպվում են մի շարք բուլղարական եւ միջազգային գործընկերների աջակցությամբ: Դասընթացների նյութերի մի մասը տեղադրված է կազմակերպության վեբ-կայքում՝ www.aip-bg.org հասցեով:

Հանրության հետ կապերի գործառնությունները եւ համապատասխան վարչությունների ու ծառայությունների գործունեությունը (տեղեկությունների հավաքում, տրամադրում եւ վերլուծություն) առանցքային դեր են խաղում Կիպրոսի Հանրապետության կառավարման համակարգում: Հատկապես կարեւորվում է տեղեկությունների դասակարգման, պահպանման եւ տրամադրման էլեկտրոնային համակարգը: Էլեկտրոնային տեղեկատվական համակարգը քաղաքացիների կողմից տեղեկություններ ստանալը առավել դյուրին է դարձնում: «Մեկ պատուհան» էլեկտրոնային համակարգի միջոցով քաղաքացիները կարող են ծանոթանալ կառավարությունում պահվող տեղեկություններին եւ փաստաթղթերին՝ առանց ժամանակ կամ դրամ վատնելու: Վիճակագրական տվյալների համաձայն, տեղեկություններ պահանջող քաղաքացիների հարցումների 89.9 տոկոսը բավարարվում է 10 րոպեում:

Բուլղարիայում, Կիպրոսում եւ Ֆրանսիայում լայնորեն կիրառվում է կառավարման տարբեր մարմինների կառուցված-

քի, գործունեության, կանոնադրության եւ վարվող քաղաքականության արդյունքների մասին տպագիր նյութերի, գրքույկների եւ ուղեցույցների տարածման պրակտիկան: Այդ փորձը կարելի է կիրառել նաեւ Հայաստանում, որպեսզի կառավարման մարմինների գործունեության մասին տեղեկություններն ավելի մատչելի լինեն քաղաքացիների համար:

Միացյալ Թագավորությունում տեղեկատվության ազատության խնդիրներին վերաբերող դասընթացները մտնում են Սահմանադրական հարցերի դեպարտամենտի (ՍՀԴ) պարտականությունների մեջ: Դեպարտամենտը պարբերաբար բազմաթիվ դասընթացներ է անցկացնում պաշտոնատար անձանց համար: Այն մշակել է նյութերի համապարփակ մի հավաքածու, որի նպատակն է ուղղություն ցույց տալ պետական սեկտորի անենատարբեր ներկայացուցիչներին, որոնք առնչվում են ՏԱ-ի հետ:

ՍՀԴ-ն կազմակերպում է նաեւ տեղեկատվության հետ կապված իրավունքների մասին հետբուհական դասընթացներ, որոնք որոշում կայացնողներին ուղրտի բարդ օրենսդրությունը եւ անընդհատ զարգացող նախադեպային իրավունքն ուսումնասիրելու հնարավորություն են ընձեռում: Դասընթացի ավարտին մասնակիցներն ստանում են համապատասխան որակավորում, որի շնորհիվ պետական ծառայության ուղրտում ստեղծվում է փորձառու եւ բանիմաց պաշտոնյաների մի բանակ: Պետության եւ կառավարման ուղրտի համատեքստում տեղեկատվության հետ կապված իրավունքների մասին ամբողջական եւ համապարփակ գիտելիքներ տրամադրելու նպատակով մշակվել է պաշտոնական ուսուցման դասընթաց:

Այն մշակվել է ՍՀԴ-ի եւ Նորթումբրիայի համալսարանի կողմից եւ ուսուցանվում է հիմնականում հեռակա կարգով՝ ինտերնետի օգնությամբ¹⁴:

Բոլոր այս երկրներում տեղեկատվության թափանցիկությունը դարձավ օրենքով ամրագրված սկզբունք, իսկ գաղտնիությունը՝ բացառություն: Հատկանշական է, որ 90-ականների վերջին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «տեղեկատվության ազատությունը» կամ «թափանցիկությունը» բացակայում էին եվրոպական ժողովրդավարական երկրների իրավաբանական տերմինաբանությունում, ներառյալ՝ դատարանների որոշումներում: Հետագա տասնամյակում տեղեկատվության ազատությունը եվրոպայում սկսվեց ընկալվել որպես անձի անկախության երաշխիքների հիմքերից մեկը: Ինչպես նշում է Ռիչարդ Գալլանդը իր «The Right to Know, The Right to live»¹⁵ աշխատության մեջ, այդ գործընթացի վրա ուժեղ ներգործություն ունեցան հետեյալ գործոնները՝

- Ժողովրդավարական երկրներում խոսքի ազատության լիակատար երաշխավորվածություն, պետության կողմից տեղեկատվության ազատության սահմանափակման նկատմամբ հասարակական բացասական վերաբերմունք,
- «սառը պատերազմի» ավարտ, որն իշխանություններին զրկեց տեղեկատվության ազատությունը սահմանափակելու բազմաթիվ փաստարկներից,

14. Դասընթացի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռքբերել Նորթումբրիայի համալսարանի վեբ-կայքում՝ www.northumbria.ac.uk:
15. Richard Galland, The Right to Know, The Right to live, 2003, South Africa.

- տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխական զարգացում, պետական մարմիններում, հիմնարկներում, կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում եւ բնակարաններում ի հայտ եկած միլիոնավոր համակարգիչներ եւ ինտերնետ կապի մատչելիություն, որի շնորհիվ հնարավոր դարձավ առանց հսկողության կամ վերահսկողության փնտրել, ստանալ եւ տարածել ցանկացած տեղեկատվություն ողջ աշխարհով մեկ:

Ասիայում ճապոնիայից բացի միայն Թաիլանդն ունի առանձին տեղեկատվության մատչելիության օրենք, որն ընդունվել է 1997թ.-ին, չնայած Ֆիլիպինների սահմանադրական իրավունքը եւ 1987թ.-ին ընդունված Հանրային ծառայողների եւ պաշտոնյաների վարքագծի եւ էթիկական չափանիշների կանոնագիրը հանրային փաստաթղթերի մատչելիության առավել բարձր մակարդակ են ապահովում¹⁶:

Լատինական Ամերիկայում դանդաղ ձեւավորումից հետո սկիզբ առավ մեծ շարժում: Բելիզում տեղեկատվության մատչելիության օրենքն ընդունվեց 1994թ.-ին, Թրինիդադում ու Թոբագոյում՝ 1999թ.-ին, Մեքսիկայում եւ Յամայկայում՝ 2002թ.-ի կեսերին, Պերուում՝ 2002թ.-ի հուլիսին:

Գործընթացը բավականին դանդաղ է ընթանում նախկին խորհրդային երկրներում: Առաջիններից էին Էստոնիան, Լատվիան, Լիտվան, այնուհետեւ՝ Հայաստանն ու Վրաստանը: Ռուսաստանում թեեւ տեղեկատվության ազատության մասին

16. Այս տարածաշրջանում տեղեկատվության ազատության արդի զարգացումների մասին տես նաեւ՝ «Տեղեկացնելու իրավունք», Համաշխարհային բանկի ինստիտուտ, Երեւան, 2003, էջեր 272-273:

օրենքի առաջին նախագծերն ի հայտ եկան դեռեւս 1996թ.-ին, սակայն մինչ օրս օրենքը դեռեւս ընդունված չէ: Ադրբեջանում օրենքն ընդունվեց 2005թ.-ին՝ տեղի հասարակական կազմակերպությունների եւ միջազգային ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպության համատեղ ջանքերով:

ՏԱ զարգացման հայաստանյան փորձը

Հայաստանի Հանրապետությունը ԱՊՀ երկրներից առաջիններից էր, որ նախաձեռնեց եւ ընդունեց տեղեկատվության ազատության մասին առանձին իրավական ակտ: Որպես երկրում ընթացող ժողովրդավարական բարեփոխումների մի մաս՝ 2003թ.-ի սեպտեմբերի 23-ին ընդունվեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ նույն տարվա նոյեմբերի 15-ին:

Մեկ կարելուր հանգամանք. եթե նորանկախ երկրների մեծ մասում այս օրենքի ընդունումը պետության վրա միջազգային հանրության կողմից արտաքին ճնշման արդյունք էր, ապա Հայաստանի պարագայում օրենքի ընդունումը ներքին պահանջով եւ հասարակական այն գիտակցությամբ էր պայմանավորված, որ օրենքն անհրաժեշտ է երկրում իրական ժողովրդավարական կառավարում ապահովելու համար:

Օրենքի ընդունումը Հայաստանի մի խումբ հասարակական կազմակերպությունների կողմից էր խորհրդարանի միջեւ երկու տարվա արդյունավետ համագործակցության եւ համառ աշխատանքի արդյունք էր: Հատկապես մեծ էր Տեղեկատվության ազատության քաղաքացիական նախաձեռնության

ներդրումը, որը միավորում է երեք հասարակական կազմակերպություններ՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն (նախագահ՝ Շուշան Դոյոյան), Տեղեկատվական իրավունքի ինստիտուտ (նախագահ՝ Կարեն Անդրեասյան) եւ Քաղաքացիական հասարակության ինստիտուտ (նախագահ՝ Արտակ Կիրակոսյան): Այս կազմակերպությունները 2001թ.-ին նախաձեռնեցին ոչ միայն օրենքի ընդունումը, այլեւ՝ օրենքի ընդունումից հետո 2003թ.-ի սեպտեմբերից սկսեցին իրականացնել չորսամյա ռազմավարական ծրագիր՝ ուղղված օրենքի պատշաճ կատարման ապահովմանը¹⁷:

Այս օրենքը միջազգային փորձագետների կողմից ճանաչվել է որպես լիբերալ եւ առաջընթաց ապահովող իրավական ակտ: Մանուկի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտիի կողմից 2006թ.-ի օգոստոսին հրապարակած Հայաստանում լրատվամիջոցների ազատության վիճակի վերաբերյալ հաշվետվության մեջ նշվում է, որ Հայաստանն ընդունել է ԱՊՀ երկրներում գործող տեղեկատվության ազատության վերաբերյալ ամենաազատական օրենքներից մեկը¹⁸:

Արտիկլ 19 միջազգային կազմակերպության կողմից 2006թ.-ի սեպտեմբերին արված հայտարարության մեջ մասնավորապես նշվում է. «ՀՀ-ում Տեղեկատվության ազատության մասին օրենքի ընդունումը կարելի է քայլ էր Հայաստանում տեղեկատվության ազատությունը բոլորի համար իրականություն

17. ՏԱ մասին օրենքի կիրառման ռազմավարական ծրագիրը տես Ինֆորմացիայի ազատության կենտրոնի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.foi.am:

18. Աղբյուրը՝ www.ocse.org/fom

դարձնելու եւ այս ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ»¹⁹:

Ըստ միջազգային կառույցների գնահատականների եւ անցկացրած մոնիտորինգային ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետությունում բավականին բարձր է տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության մակարդակը: Պետական մարմինների կողմից տեղեկություն ստանալու հարցումներին պատասխան տալու 64 տոկոս ցուցանիշով Հայաստանը գերազանցել է մոնիտորինգում ընդգրկված բոլոր 13 երկրներին: Թե որքանով են քաղաքացիների հարցումները պատասխանվում լիարժեք, պետք է նշել, որ այստեղ, սակայն, Հայաստանը զբաղեցրել է երրորդ տեղը՝ 56 տոկոս ցուցանիշով:

Ներկայումս ՀՀ-ում իրականացվում են լուրջ բարեփոխումներ՝ ուղղված կառավարման համակարգի թափանցիկության եւ հրապարակայնության ապահովմանը եւ տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառմանը: Մասնավորապես, կազմակերպվում են տեղեկատվության եւ հանրության հետ կապերի ոլորտում աշխատող քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներ, նրանց պաշտոնական անձնագրերի բարեփոխումներ, էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում եւ շահագործում կառավարման համակարգում եւ այլն: Աստիճանաբար կառավարությունում ձեւավորվում եւ արմատավորվում է այն գաղափարը, որ հրապարակային եւ բաց գործելակերպը ստեղծում է վստա-

19. Աղբյուրը՝ www.article19.org/pdfs/analysis/armenia-foi.pdf:

հույսը կառավարման համակարգի նկատմամբ, հետեւաբար եւ այն առավել ուժեղ դարձնում: ՀՀ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման, գործունեության եւ որոշումների ընդունման գործընթացների մասին բնակչությանը իրազեկելու նպատակով սահմանվել եւ հաջողությամբ կիրառվում են որոշակի ընթացակարգեր:

Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարության (ՄԶՆ) Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրով (ՀՀՈԲԾ) (2003-2007թ.թ.) Հայաստանում մի շարք կարելու-րագույն գործընթացներ իրականացվեցին՝ ուղղված տեղեկատվության մատչելիության եւ քաղաքացիների մասնակցության ապահովմանը: Այդ տարիների ընթացքում հանրությանը մատուցվող ծառայությունների բարելավման նպատակով ՀՀՈԲԾ-ն սերտորեն աշխատել է 3 նախարարությունների եւ 2 մարզպետարանների հետ: Մասնավորապես իրականացվել են հետեւյալ գործողությունները.

- Մշակվել է տեղեկատվություն տրամադրելու եւ քաղաքացիների հարցումներին պատասխանելու համար արդյունավետ համակարգեր եւ ընթացակարգեր: Տեղեկատվական կենտրոնի ստեղծում էրեւանում, Կառավարության 3-րդ մասնաշենքում, որտեղ տեղակայված են յոթ նախարարություններ, ինչպես նաեւ երկու տեղեկատվական կենտրոնների ստեղծում գործընկեր մարզպետարաններում՝ քաղաքացիների համար տեղեկատվությունն ավելի մատչելի դարձնելու եւ կառավարության կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին արձագանքելու կարողությունը բարելավելու նպատակով: Տեղեկատվական կենտրոնների շնորհիվ կանոնակարգվել է քաղաքա-

ցիների մուտքն այստեղ տեղակայված 7 նախարարություններ, առավել մատչելի է դարձել նախնական տեղեկատվության ստացումը: Էապես բարելավվել, հեշտացել եւ արդյունավետ է դարձնել քաղաքացի-պետական մարմին հաղորդակցությունը: Նմանատիպ տեղեկատվական կենտրոններ են հիմնվել եւ գործում նաեւ Գեղարքունիքի եւ Տավուշի մարզպետարաններում:

- Ստորաբաժանումների ստեղծում պետական կառավարման մարմիններում: 2007թ.-ի ՀՀ Կառավարության սեպտեմբերի 20-ի N1083 որոշմամբ՝ պետական կառավարման մարմիններում ստեղծվեցին տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումներ, ինչը հանգեցրեց դրանց գործառույթների եւ հանրության հետ կապերի քաղաքականության միասնականացմանը: Բարելավվել են այս ստորաբաժանումների աշխատակիցների մասնագիտական կարողություններն ու հմտությունները, մշակվել են աշխատանքի կազմակերպման ուղեցույցներ, իրականացվել են վերապատրաստման մի շարք դասընթացներ:

- Հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների կանոնակարգերի եւ տեղեկատվական թերթիկների մշակում եւ տարածում (օրինակ, Տավուշի եւ Գեղարքունիքի մարզպետարանները, Կրթության եւ գիտության նախարարությունը գրքույկների տեսքով հրապարակել են ամբողջական ուղեցույցներ Քաղաքացիներին մատուցվող ծառայությունների վերաբերյալ): Բարձրացվել է քաղաքացիների իրազեկությունը ծառայության չափորոշիչների եւ 3 գործընկեր նախարարություններում առկա ծառայությունների վերաբերյալ՝ տարածելով ծա-

ռայությունների մասին տեղեկատվություն, 3 նախարարությունների համար մշակելով եւ հրատարակելով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ուղեցույցեր:

Ի լրումն այս գործընթացների, ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդը եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը համատեղ (ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի աջակցությամբ) 2008թ.-ի մայիսին կազմակերպեցին հատուկ դասընթացներ պետական կառավարման համակարգի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի 77 աշխատակիցների համար: Դասընթացների արդյունքում մասնակիցները հմտություններ եւ հիմնավոր գիտելիք ձեռք բերեցին տեղեկատվության ազատության եւ հանրության հետ կապերի ոլորտում:

Միաժամանակ, էապես լրամշակվեցին հասարակայնության եւ տեղեկատվության հետ կապերի ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ ներառելով հատուկ պարտականություններ տեղեկատվության մատչելիության ապահովման ոլորտում: Մասնավորապես, պաշտոնական անձնագրերում նշվում է, որ ստորաբաժանման ղեկավարները եւ մասնագետներն ապահովում են հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը տարին առնվազն մեկ անգամ, իսկ դրանցում կատարված փոփոխությունների դեպքում՝ 10-օրյա ժամկետում, ինչպես նաեւ կազմակերպում են տեղեկություն տալու կարգի մշակումը եւ հրապարակումը՝ այն փակցնելով գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Հրապարակային հաշվետվության ապահովման տեսանկյուն

նից խիստ անհրաժեշտ է, որ պետական մարմինները հրապարակեն իրենց գործունեության հաշվետվությունները: Ներկայումս միայն մի քանի մարմիններ են հետեւում այս սկզբունքին: Կարելի է առանձնացնել ՀՀ Կրթության եւ գիտության, ՀՀ Տրանսպորտի եւ կապի նախարարությունների օրինակը, որոնց ինտերնետային կայքերում հրապարակվում են նախարարության գործունեության տարեկան հաշվետվությունները (սակայն 2008թ.-ի հուլիսի 31-ի դրությամբ զետեղված վերջին հաշվետվությունը 2006թ.-ինն է):

Իրավական ակտերի մատչելիության ապահովմանն ուղղված նախաձեռնություն էր Հայաստանի Իրավական Տեղեկատվության Համակարգի (ՀԻՏՀ- Armenian Legal Information System (ARLIS) ստեղծումը եւ գործարկումը:

Այն զետեղված է www.laws.am, www.arlis.am կայքերում, որտեղ իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պաշտոնական էլեկտրոնային հրապարակումը: Համակարգը մշակվել է Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ՝ «Դատաիրավական բարեփոխումների ծրագրի» շրջանակներում: Համակարգի մշտական շահագործումն իրականացնում է Արդարադատության նախարարության «Պաշտոնական տեղեկագիր» Փակ բաժնետիրական ընկերությունը: Համակարգի բաց տեղադրումն ինտերնետային կայքում հնարավորություն է ընձեռում սպառողին՝ որոնման տարբեր միջոցներ կիրառելով, ունենալ ցանկացած իրավական ակտի ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակը, ինչը նպաստում է օրենսդրական դաշտի եւ դրանում կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատ-

վության լայն տարածմանը:

Չնայած ներդրված լուրջ ընթացակարգերի եւ իրականացված ծրագրերի, կառավարման համակարգում առկա են բազմաթիվ խոչընդոտներ, որոնք էականորեն խանգարում են հրապարակային գործունեության եւ հանրության հետ կապի արդյունավետ իրականացմանը:

● **Պաշտոնական տեղեկատվությունը որոշ դեպքերում մատչելի չէ հանրությանը:**

Մի կողմից, պետական մարմինները բավարար միջոցներ չեն ձեռնարկում իրենց տնօրինման տակ եղած տեղեկատվությունը հանրության համար մատչելի դարձնելու համար, եւ մյուս կողմից՝ պետական մարմինները պատշաճ կերպով ընթացք չեն տալիս մարդկանց տեղեկատվություն ստանալու հարցումներին: Որոշ դեպքերում մարդիկ հնարավորություն չեն ունենում մասնակցել համայնքի ավագանիների նիստերին՝ դրանց կազմակերպման օրի եւ վայրի մասին պատշաճ եւ ժամանակին չժամկետով պատճառով: Որոշ համայնքներում ավագանիների եւ համայնքների ղեկավարների որոշումները կայացվում են գաղտնիության մթնոլորտում, իսկ դրանց պատճեններն ստանալու վերաբերյալ մարդկանց եւ/կամ կազմակերպությունների հարցումներն անհիմն մերժվում են կամ մնում անպատասխան:

● **Մարմինները չեն կատարում օրենքի պահանջը՝ տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկությունները, ներառյալ հանրության համար մատչելի վայրում փակցնելու միջոցով:**

Ինտերնետային կայքերում, ցուցատախտակներին փակցնելու միջոցով կամ որեւէ այլ մատչելի մեխանիզմով չի իրականացվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների, մարմինների տարեկան եւ ընթացիկ գործունեության մասին հաշվետվությունների հրապարակումը: Նույնիսկ այն գերատեսչությունները, որոնք հրապարակում են հաշվետվություններ, այս պարտավորությունը չեն կատարում կանոնավոր եւ համակարգված (օրինակ, Տրանսպարտի եւ կապի նախարարության ինտերնետային կայքում զետեղված է միայն 2006թ.-ի գործունեության տարեկան հաշվետվությունը):

Ոչ կանոնավոր եւ չհամակարգված է իրականացվում նաեւ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների կանոնակարգերի եւ տեղեկատվական թերթիկների մշակումն ու տարածումը: Գործող պաշտոնական կայքերը, որոշ բացառություններով, ծառայում են ոչ թե հանրությանն անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելուն, այլեւ գերատեսչության ղեկավարի գովազդն ապահովելուն:

● **Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության Հայաստանին տրված 23-րդ հանձնարարականում նշվում է, որ ընդունված չեն ենթաօրենսդրական այն ակտերը, որոնք անհրաժեշտ են տեղեկատվության մատչելիության օրենսդրության առավել արդյունավետ կատարման համար:**

Այս առնչությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Միկելոշ Հարաշտին. «Ենթաօրենսդրական ակտերի հրապարակային քննարկումն ու ընդունումն անհրաժեշտ են ՏԱ օրենքի պատշաճ կիրառումն ապահովելու համար, 5-րդ եւ 10-րդ հոդվածները կարելու էր ազդեցություն ունենալ տեղեկատվության ազատության համար, ուստի դրանք չպետք է ենթարկվեն հետագա փոփոխությունների կամ բարեփոխումների»²⁰: Նշենք, որ ՀՀ-ում ընդունվել են նույնիսկ դատական որոշումներ, որոնցով դատարանը մերժել է տեղեկատվության տրամադրումը՝ տվյալ մարմնում կարգի բացակայության հիմքով:

Այս ընթացակարգերի բացակայության հետեւանքով մարմիններում չի գործում տեղեկատվության տրամադրման մեկ միասնական համակարգ: Այս բացը գործնականում առաջ է բերում չհամակարգված իրավիճակ, երբ տեղեկատվությունը պետական մարմիններում չի մշակվում, հավաքվում, դասակարգվում եւ պահպանվում մեկ միասնական համակարգով:

Առկա մյուս հիմնախնդիրներին առավել հանգամանալից կանդորադառնանք մենագրության հետագա գլուխներում:

20. Աղբյուրը՝ www.article19.org:

ԳԼՈՒԽ Գ

Տեղեկատվության ազատության սկզբունքները

Քաղաքացիների իրական մասնակցությունը, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը եւ իշխանության գործողությունները վերահսկելը որպես ժողովրդավարության հիմքեր հնարավոր չէ իրականացնել առանց տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատության ապահովման եւ առանց տեղեկություն ստանալու իրավունքի իրավական պաշտպանության: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) կարգավորվում են տեղեկություն տնօրինողներից տեղեկություն ստանալու հետ կապված իրավահարաբերությունները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիմնական խնդիրներն են.

- սահմանել տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքի իրականացման հստակ մեխանիզմ,
- սահմանել պետական մարմիններից եւ կազմակերպություններից, ինչպես նաև հանրային նշանակության մարմիններից տեղեկություններ պահանջելու եւ ստանալու կարգը, նաև՝ մարդկանց տեղեկություն ստանալու հարցումները բավարարելու կարգը,
- փոխել կառավարման համակարգում արմատավորված գաղտնիությունը,

- ապահովել ոչ միայն տեղեկատվության, այլև պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը,
- սահմանել ՏԱ բացառությունների սպառիչ ցանկ,
- սահմանել տեղեկություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման եւ պատասխանատվության մեխանիզմներ,
- սահմանել վերահսկողության անկախ մեխանիզմ (օրինակ՝ օմբուդսմենի՝ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի միջոցով):

Սկզբունքներն այն ելակետային եւ հիմնարար դրույթներն են, որոնք արտահայտում են տեղեկատվության ազատության առավել ընդհանուր հատկանիշները եւ օրինաչափությունները: Սկզբունքները, որպես համընդհանուր գաղափարներ, ձեւավորվում եւ զարգանում են հասարակական հարաբերություններին զուգընթաց եւ ստանում են իրենց օրենսդրական ամրագրումը:

Օրենսդրական ամրագրման միջոցով սկզբունքները ձեռք են բերում իշխանական բնույթ եւ դառնում պարտադիր: Նշենք, որ գլխավորը ոչ միայն սկզբունքների օրենսդրական ամրագրումն է, այլ նաեւ՝ դրանց իրականացման համար հասարակական, քաղաքական համապատասխան նախադրյալների առկայությունը: Կարելի է նաեւ, որ սկզբունքները կրեն ոչ թե հռչակագրային բնույթ, այլ կենսագործվեն կյանքում:

ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպությունը մշակել է ձեւակերպել է Տեղեկատվության ազատության օրենսդրության

հիմնական սկզբունքները, որոնք են.

- 1.** Տեղեկատվության ազատության օրենսդրությունը պետք է ապահովի առավելագույն հրապարակայնություն:
- 2.** Պետական մարմինները պարտավոր են հրապարակել առանցքային տեղեկությունները:
- 3.** Պետական մարմինները պետք է ակտիվորեն խթանեն բաց կառավարումը:
- 4.** Բացառությունները պետք է հստակ եւ սպառիչ սահմանված լինեն:
- 5.** Տեղեկատվություն ստանալու հարցումներին պետք է հնարավորինս արագ եւ արդարացի ընթացք տրվի: Դրանք պետք է անկախ քննության առարկա լինեն:
- 6.** Մարդիկ չպետք է խուսափեն տեղեկատվություն ստանալու հարցումով դիմելուց բարձր վճարների պատճառով:
- 7.** Պետական մարմինների նիստերը պետք է բաց լինեն հանրության համար:
- 8.** Առավելագույն հրապարակայնության սկզբունքին հակասող օրենքները պետք է փոփոխվեն:
- 9.** Ապօրինի գործողությունների մասին տեղեկատվություն տրամադրած պաշտոնյաները պետք է պաշտպանված լինեն:

Այս սկզբունքները բխում են նաեւ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1981թ.-ի Պետական իշխանությունների կողմից պահվող տեղեկատվության հանրային մատչելիության մասին եւ 2002թ.-ի Պաշտոնական փաստաթղթերի մատ-

չելիության մասին հանձնարարականների սկզբունքներին²¹:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվող Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները եւս անառարկելիորեն բխում են վերոնշյալ դրույթներից:

SU մասին օրենքով սահմանվող սկզբունքներն են.

- 1.** տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանումը,
- 2.** տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը,
- 3.** տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը,
- 4.** հրապարակայնությունը:

Այս սկզբունքներից յուրաքանչյուրն ունի իր առանձնատուկ դերը եւ կոչված է ապահովելու տեղեկատվության ազատության խնդիրների իրականացումը: Սրանք գործում են միասնական համակարգում եւ իրենց էությամբ ու նշանակությամբ միասնական են: SU բոլոր սկզբունքները բխում են միմյանցից, պայմանավորված են մեկը մյուսով, եւ ցանկացած սկզբունքի խախտում հանգեցնում է մեկ այլ սկզբունքի խախտման: Սա նշանակում է, որ ամեն սկզբունք երաշխիք է մյուսի իրականացման համար, եւ այն միջոցները, որոնք ապահովում են որեւէ կոնկրետ սկզբունքի կիրառումը, միաժա-

21. <http://www.article19.org/pdfs/tools/foitrainersmanual.pdf>

մանակ երաշխիք են սկզբունքների ամբողջ համակարգի համար: Անդրադառնալով SU սկզբունքներից երեքին՝ հրապարակայնությանը, տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովմանը եւ տեղեկատվության ազատության սահմանափակումների սպառնիչ ցանկի սահմանմանը:

Հրապարակայնության սկզբունքը

Հրապարակայնության սկզբունքն ապահովում է իշխանության բոլոր թեւերի թափանցիկ գործունեությունը եւ մարդկանց մասնակցությունը երկրի կառավարմանը: Իսկ առանց բավարար տեղեկատվության մարդիկ չեն կարող հսկել պետական մարմինների գործողությունները, ազդել որոշումների կայացման գործընթացի վրա:

SU հրապարակայնության սկզբունքի էությունը հետեւյալն է. վերջինս հաստատում է այն կանխավարկածը, որ պաշտոնական փաստաթղթերը հասարակական բնույթ ունեն եւ պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարելիոր հանրային կամ պետական շահ տեղեկությունը չհրապարակելու համար: Անգամ եթե քաղաքացին դիմում է գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից հասարակության հետաքրքրությունը, տեղյակ լինելու իրավունքը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը:

Քաղաքացիների առջեւ պետք է բաց լինեն ոչ միայն պաշտոնական փաստաթղթերը, այլեւ՝ օրենսդիր, գործադիր եւ դա-

տական մարմինների գործունեությունը: Որոշ երկրներ ընդունել են նաեւ բաց նիստերի մասին հատուկ օրենքներ, որոնք ապահովում են օրենսդիր եւ դատական մարմինների նիստերի թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

- Օրենսդիր եւ դատական իշխանությունների թափանցիկության, հրապարակայնության եւ հասարակության առջեւ բաց լինելու սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածով. «Ազգային ժողովի նիստերը դռնբաց են»,
- 19-րդ հոդվածով. «Յուրաքանչյուր ոք ունիանկախ եւ անկողմնապահ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:
- Սահմանադրական այս նորմը ամրագրվել է նաեւ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում: Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Գործերի դատական քննությունը դռնբաց է»:
- Սրան հավելում է Քաղաքացիական դատավարության ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածում նշվում է. «Դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է»:
- ՀՀ Դատական նոր օրենսգրքի 20-րդ հոդվածը՝ «Գործերի քննության հրապարակայնությունը» սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության դատարաններում գործերի քննությունը դռնբաց է:

Նույն հոդվածի 2-րդ կետով թեւ սահմանվում է, որ դատական քննությունը կամ դրա մի մասը կարող է անցկացվել դռնփակ

օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով, սակայն դռնփակ անցկացնելու դեպքում եւս դատական ակտի եզրափակիչ մասը պետք է հրապարակվի դատարանի դռնբաց նիստում (3-րդ կետ):

- Սահմանադրական դատարանի գործունեության հրապարակայնության սկզբունքն ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 6-րդ հոդվածում: Նույն օրենքի 2-րդ հոդվածը նշում է, որ ՍԴ նիստերը դռնբաց են, իսկ ՍԴ որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն:

Այս ամենը կենսականորեն անհրաժեշտ է, որպեսզի հասարակական խնդիրները բոլորի կողմից քննարկման առարկա դառնան, իշխանությունների համար անօրինական գործողությունները թաքցնելու հնարավորությունները հասնեն նվազագույնի, որպեսզի պետական մարմինները հաշվետու լինեն հասարակության առջեւ յուրաքանչյուր որոշման ու գործողության համար, իսկ մարդիկ գիտակցեն, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ պետական մարմինների կողմից ընդունված որոշումների վրա, եւ վերջապես, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամ ակտիվորեն մասնակցի երկրի կառավարմանը:

Նկատելի է նաեւ, որ չափից ավելի հրապարակայնությունը կարող է խանգարել պետական պաշտոնյաների միջեւ կարծիքների ազատ եւ անկեղծ փոխանակմանը, եւ որ պաշտոնյաները չեն կարող արդյունավետ գործել թափանցիկ «ակվարիումում»: Այս փաստարկը կարելի է, սակայն այն պետք է հաշվեկշռել գաղտնապահության եւ հաշվետվության բացակայության հետ:

Կարո՞ղ է արդյոք որեւէ մեկը լրջորեն պնդել, որ առանց հաշվետու լինելու որոշումներ ընդունելն առավել արդյունավետ է: Մի բան ակնհայտ է, որ հրապարակայնությունն իրական կարող է լինել միայն, եթե առկա է քաղաքական եւ սոցիալական կայունություն, քանի որ այս պարագայում կառավարության համար ավելի հեշտ է վստահել ինքն իրեն եւ իր ժողովրդին:

Տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովման սկզբունքը

Այս սկզբունքից բխում է, որ պետական իշխանության մարմինները ՏԱ ապահովման նպատակով պարտավոր են հանրությանն ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ: Այս սկզբունքի իրականացմանն աջակցող միջոցներն են պետական մարմինների կողմից տեղեկությունների պարտադիր հրապարակումը, ՏԱ համար պատասխանատու անձի նշանակումը, փաստաթղթերի՝ մեկ միասնական կարգով հավաքումը եւ պահպանումը, պաշտոնատար անձանց իրազեկումը, վերապատրաստումը եւ այլն:

Այսպիսով, պետական մարմինները պարտավոր են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկատվության մատչելիությունը հեշտացնելու ուղղությամբ:

Այս նպատակով ՏԱ մասին ՀՀ օրենքը սահմանում է, որ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է պարբերաբար, սակայն առնվազն տարին մեկ անգամ պարտադիր հրապարակել որոշակի խումբ տեղեկություններ: Հրապարակում ասելով՝ օ-

րենսդիրը հասկանում է տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, Ինտերնետով, ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը:

Սովորաբար իշխանությունները տարածում են այնպիսի տեղեկատվություն, որն իրենց կարծիքով է կարելու, որ հասարակությունն իմանա: Որոշակի տեղեկատվություն տարածելու կառավարության պարտականությունը չպետք է շփոթել հասարակության կամ լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու կառավարության պարտավորության հետ, մի բան, որ շատ հաճախ է պատահում պրակտիկայում:

Եվրախորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականում նշվում է.

«Պետական իշխանությունը պետք է իր սեփական նախաձեռնությամբ իրականացնի անհրաժեշտ միջոցառումներ իր մոտ պահվող պաշտոնական տեղեկատվության հրապարակման ուղղությամբ, երբ նշված տեղեկությունների տրամադրումը հանրային կառավարման թափանցիկությանը կամ վարչակարգերի ներսում արդյունավետությանը նպաստելու համար կարելու նշանակություն ունի, կամ խրախուսական կլինի հանրային նշանակության խնդիրների լուծմանը հասարակության գիտակցված մասնակցությունը խթանելու համար»:

Նման մասնակցությունը ժողովրդավարության եւ արդյունավետ կառավարման համար կարելու գործոն է: Ավելին, տե-

ղեկատվության հրապարակումը, նախքան դրա տրամադրման վերաբերյալ դիմում-խնդրանքի ստացումը, ունի այն առավելությունը, որ պետական իշխանության մարմինը ստիպված չի լինի արձագանքել լրացուցիչ դիմումների, քանի որ պահանջվող տեղեկատվությունն արդեն մատչելի կլինի բոլորին: Ի դեպ, պետական իշխանության մարմինն ազատ է ընտրելու տեղեկատվության հրապարակման առավել հարմար տարբերակը (ցուցատախտակներ, պաշտոնական հրատարակություններ, ինտերնետային էջեր կամ այլ հանրամատչելի միջոցներ):

Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանվում է օրենքով: ՏԱ մասին ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

- հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
- բյուջեները,
- հաստիքացուցակները,
- մարմնի/կազմակերպության կողմից տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տրամադրման կարգը,
- տվյալ մարմնի՝ շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
- հասարակական միջոցառումների ծրագրերը,
- քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,

- աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
- տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
- ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը եւ այլն:

Ի դեպ, պարտադիր եւ անհապաղ հրապարակման են ենթակա նաեւ դրանցում կատարվող փոփոխությունները:

Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է նաեւ իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Օրենքի նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը անհապաղ հրապարակում է կամ այլ մատչելի միջոցով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

Տարբեր երկրներում օրենսդրությունը պետական մարմիններին պարտավորեցնում է հրապարակել նաեւ այլ տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ ԱՄՆ-ում Տեղեկատվության ազատության մասին ակտով ԱՄՆ-ի պետական մարմինները պար-

տավոր են Ֆեդերալ Ռեզիստրում հրապարակել իրենց ընդունած կամ պատրաստած յուրաքանչյուր փաստաթուղթ՝ քաղաքացիներին հնարավորություն տալով ծանոթանալ դրանց, անհրաժեշտության դեպքում պատճենել: Բացի այդ ԱՄՆ պետական հաստատությունները կանոնավոր կերպով պետք է հրապարակեն տեղեկատուներ անհրաժեշտ փաստաթղթերը հեշտությամբ գտնելու համար: Այս պահանջները մեր օրենսդրության մեջ ներառելը բխում է ՏԱ ապահովման շահերից:

Բացի անհրաժեշտ տեղեկատվություն հրապարակելու պահանջից, օրենսդրությունը մատչելիությունն ապահովելու եւս մեկ միջոց է նախատեսում: Տեղեկատվություն տրամադրելու գործընթացն արդյունավետ իրականացնելու համար յուրաքանչյուր պետական մարմնում պետք է նշանակվի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ: Վերջինս տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը, անհրաժեշտության դեպքում օգնում է նաեւ դիմում-հարցում գրել: Պատասխանատու անձը նաեւ մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

Սահմանափակումների սպառնիչ ցանկի սահմանումը

Հաջորդ սկզբունքը ՏԱ սահմանափակումների սպառնիչ ցանկի սահմանումն է: Ինչպես ամրագրված է ՏԱ միջազգային չափանիշներում՝ տեղեկատվության մատչելիությունը պետք է լինի կանոն, իսկ գաղտնիությունը՝ բացառություն այն դեպքերում,

երբ գերակայում են այլ օրինական շահեր: Սահմանափակումները պետք է հստակ ամրագրվեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակարգում եւ ուղղված լինեն օրինական շահ(եր)ի պաշտպանությանը:

Խոսքի եւ տեղեկատվության ազատությունը հռչակող Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում բերվում են այս իրավունքների սահմանափակման հիմքերը, որոնք են.

- 1.** Հասարակական շահերի պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության, հասարակական անվտանգության, առողջության կամ բարոյականության պաշտպանության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու նպատակ):
- 2.** Այլոց իրավունքների պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ:
- 3.** Դատական իշխանության հեղինակության եւ անկողմնակալության համար անհրաժեշտ սահմանափակումներ:

Ինչպես արդեն նշվեց, տեղեկատվության ազատության ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով: Այն պետք է անհրաժեշտ լինի 10-րդ հոդվածում տեղ գտած նպատակներից որեւէ մեկի պաշտպանության համար, այսինքն՝ լինի արդարացված:

Եվ, վերջապես, սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավար հասարակության համար: Սա վերջնական եւ

որոշիչ նշանակություն ունեցող չափանիշ է: Այն ենթադրում է, որ սահմանափակումը կիրառելու համար պետք է.

ա) Առկա լինի սոցիալական սուր պահանջ:

բ) Պետության միջամտությունը համաչափ լինի իրավաչափ նպատակին հասնելու համար:

գ) Պետության միջամտությունը արդյունավետ է եւ արդարացված:

Բացարձակ սահմանափակումն անընդունելի է:

Որպեսզի ճիշտ կիրառվեն վերը նշված սահմանափակումների հիմքերը, ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպությունն իր մշակած ՏԱ մոդելային օրենքում առաջարկում է երեք մասից բաղկացած ստուգում²², որը պետք է կատարի պետական մարմինը տեղեկատվության տրամադրումը մերժելուց առաջ: Ըստ այդ ստուգման թեսթի՝ տեղեկատվությունը կարող է դասվել սահմանափակումների շարքը, եթե՝

- տեղեկատվությունը վերաբերում է օրենքում շարադրված նպատակներին,
- բացահայտումը կարող է զգալի վնաս հասցնել այդ նպատակին,
- նպատակին հասցված վնասը կարող է շատ ավելի մեծ լինել, քան հասարակության հետաքրքրվածությունն այդ տեղեկատվության նկատմամբ:

Երկրի պաշտպանությունը, ազգային անվտանգությունը, ար-

22. <http://www.article19.org>

տաքին հարաբերությունները, օրինականությունը եւ անձնական կյանքի անձեռնմխելիությունը եւ, ինչ-որ չափով, պետական մարմնի ներքին գործընթացները կարող են ՏԱ օրենսդրության բացառություն լինել: Օրինակ՝ Շվեդիայի Գաղտնիության մասին օրենքում նախատեսված են 250-ի հասնող բացառություններ, որոնց մի մասն առնչվում է օրենքով պաշտպանվող շահերին, իսկ մյուսները՝ փաստաթղթերի որոշակի խմբերի:

Բացառությունների մեծ մասը սահմանվում է որոշակի ժամկետով՝ 70-ից մինչեւ երկու տարի: Որոշ այլ բացառություններ իրենց ուժը պահպանում են մինչեւ որոշակի դեպքի երեւան գալը: Տարբերակները շատ են եւ բազմազան, սակայն խնդրի կարելիությունն աստիճանաբար մեծանում է քաղաքացիական հասարակություններում եւ տարածվում աշխարհով մեկ:

Ըստ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը «կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Կարելի է, սակայն, որ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին հարցումով դիմելու եւ տեղեկատվություն պահանջելու իրավունքը, որը սահմանվում է ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածով, չի չի ներառված ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանափակ-

ման ենթակա իրավունքների շարքը:

SU կարելուրագույն սկզբունքներից է այն, որ այս սահմանափակումների շրջանակը պետք է սահմանված լինի օրենքում եւ լինի սպառիչ:

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են բոլոր SU սահմանափակումները: Դա այն տեղեկությունն է, որը`

- 1.** պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,
- 2.** խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում` նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,
- 3.** պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
- 4.** բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
- 5.** խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

Օրենքը նաեւ նշում է, որ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ: Ըստ վերը նշված հանձնարարականի` եթե սահմանափակումը վերաբերում է միայն տվյալ փաստաթղ-

թուն պարունակվող տեղեկատվության մի հատվածին, ապա մնացած հատվածը պետք է տրամադրվի սովորական կարգով: Անհրաժեշտ է պարզ մատնանշել, թե որ հատվածում եւ որքան տեղեկատվություն է ջնջվել:

Եթե փաստաթուղթը տպագիր է, ապա ջնջումները կարելի է կատարել պատճենելիս սահմանափակման ենթակա հատվածը սպիտակ թղթով ծածկելու միջոցով: Էլեկտրոնային փաստաթղթի դեպքում պատճենի վրա պետք է հստակ նշվի, թե փաստաթղթի որ հատվածներն են ջնջվել, օրինակ` այդ հատվածները բաց (չգրված) թողնելով: Բացի այդ, փաստաթղթի տրամադրման ժամանակ չպետք է ընտրել այնպիսի ձեւ, որը կբացահայտի գաղտնի տեղեկատվությունը²³:

23. Սահմանափակումների կիրառման տեղական դատական պրակտիկային ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ Շուշան Դոյրոյանի «Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը եւ «ՀՀԸ-ն ընդդեմ Մաքսային պետական կոմիտեի» դատական նախադեպը» հոդվածում, Ժուռնալիստիկա, պրակ Գ, ԵՊՀ, 2002, 21-26 էջեր:

ԳԼՈՒԽ Դ

Տեղեկություն ստանալու գործընթացը

Տեղեկատվության մատչելիության օրենսդրությունը մարդկանց տեղյակ լինելու օրինական իրավունք է տալիս: Գործնականում օրենսդրության կոնկրետ դրույթները ուրվագծում են այն սահմանը, որ քաղաքացիները կարող են ստանալ իշխանության գործունեության մասին տեղեկատվություն: Սրա նպատակն այն է, որ պետական մարմինների գործունեության մատչելիությունն եւ հրապարակայնությունն ապահովվի բոլոր այն դեպքերում, երբ բացահայտումը ծառայում է հասարակությանը, եւ ո՛չ պաշտոնյաներին, որոնք ցանկանում են գաղտնիություն քողի տակ գործել:

Շատ երկրներում տեղեկատվության ազատության սկզբունքն ամրագրված է երկրի հիմնական օրենքում՝ սահմանադրության մեջ: Ավստրիան, Նիդեռլանդները եւ Շվեդիան ապահովում են պաշտոնական տեղեկատվության մատչելիության սահմանադրական պաշտպանություն: Շվեդիայում այս իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ (1989թ., *Գլուխ 2-րդ, հոդված 1*)²⁴:

Նիդեռլանդներում այս իրավունքը կարգավորում են Սահմանադրության 110-րդ հոդվածը եւ Տեղեկատվության հասա-

24. Ձանգվածային լրատվության միջոցներ. օրենքներ եւ պրակտիկա, «Արտիկլ 19», Երեւան, 1999, էջ 117:

րական մատչելիության մասին օրենքը²⁵:

ԱՄՆ-ում եւս առկա է տեղեկություն ստանալու իրավունքի սահմանադրական պաշտպանություն, որի հիմքը Առաջին լրացումն է: Թեեւ Առաջին լրացման տեքստն ուղղակի հղում չի կատարում ինֆորմացիայի մատչելիության իրավունքին եւ լրահավաքության իրավունքը բառացի ամրագրված չէ նրանում, սակայն ԱՄՆ-ի Գերագույն դատարանը նշել է, որ Առաջին լրացման բուն նպատակը «պետության գործունեությանը վերաբերող խնդիրների շուրջ հաղորդակցության ազատություն ապահովելն է»: Ի՞նչ իմաստ կունենար իշխանության գործողությունների մասին խոսելու իրավունքը, եթե քաղաքացիները չկարողանային ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն այն մասին, թե ինչով է զբաղված կառավարությունը: Սա նույնն է, թե մարդուն խոսելու իրավունք տան, բայց արգելեն լսել մյուսներին:

Յայաստանում եւս այս իրավունքը 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում վերջապես ստացավ իր սահմանադրական ամրագրումը 27.1 հոդվածում: Մինչ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումը՝ 2003 թվականի սեպտեմբերի 23-ը, մեզանում ՏԱ հարցերը կարգավորվում էին հիմնականում Սահմանադրության 24-րդ հոդվածի շրջանակում, որը սահմանում է յուրաքանչյուրի տեղեկություն եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը:

Բացի վերոնշյալ սահմանադրական նորմից, ՏԱ հարաբերու-

25. Закон и СМИ в одиннадцати демократиях мира, Москва, 1997г., стр. 87

թյունները կարգավորվում էին նաև մոտ 30 իրավական այլ ակտերի միջոցով, որոնցից կարելի է մասնավորապես նշել «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները, բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը: Այն կարգավորում էր պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց կողմից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առաջարկությունները, դիմումները եւ բողոքները օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում քննարկելու առնչությամբ ծագող հարաբերությունները: Այսօր արդեն ՀՀ-ում տեղեկություն ստանալու իրավունքն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ առանձին իրավական ակտով՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, որով եւ կարգավորվում են տեղեկություն տնօրինողներից մարդկանց տեղեկություն ստանալու հետ կապված իրավահարաբերությունները:

Օրենքի կարգավորման հիմնական խնդիրներից առանցքային է այն, թե ովքեր ունեն տեղեկություն ստանալու եւ տեղեկություն ստանալու հարցում ներկայացնելու իրավունք: Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությամբ տեղեկություն ստանալու իրավունքը յուրաքանչյուրի՝ ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց իրավունքն է՝ անկախ նրանից՝ քաղաքացի է, օտարերկրացի, թե քաղաքացիություն չունեցող անձ:

Այս իմաստով հետաքրքիր է Կանադայի ՏԱ մասին օրենքի ձեւակերպումը, որի համաձայն տեղեկություն ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, ով ֆիզիկապես գտնվում է Կա-

նադայում: Սա վերաբերում է նաև իրավաբանական անձանց, կազմակերպություններին:

Քննարկումների տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք տեղեկատվության մատչելիություն ապահովող օրենքները պե՞տք է լրագրողներին տան տեղեկություն ստանալու հավելյալ երաշխիքներ: Արեւմտյան երկրների մեծ մասում տեղեկություն ստանալու իրավունքը համարվում է բոլոր քաղաքացիների հավասար իրավունքը (ԱՄՆ, Շվեդիա, Ռուսաստան, Ֆրանսիա):

Շվեդիայում «Մամուլի ազատության մասին» օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր շվեդ, կարելի է մամուլի ներկայացուցիչ, թե ոչ, կարող է այցելել պետական կամ տեղական ինքնակառավարման հաստատություններ եւ խնդրել ծանոթացնել իրեն ցանկացած փաստաթղթի հետ, անկախ նրանից, թե որքանով է այդ փաստաթուղթն առնչվում իրեն: Իշխանություններն օրենքով սահմանված կարգով պարտավոր են գտնել փաստաթուղթը, անգամ տալ փաստաթղթի պատճենը, եթե քաղաքացին պահանջում է այդ: Որպես կանոն՝ իշխանություններն իրավունք չունեն դիմողից պահանջել ինքնությունը հաստատող վկայական կամ հարցման բացատրություն եւ հիմնավորում:

ԱՄՆ-ում եւս տեղեկություն ստանալու իրավունքը ոչ միայն մամուլի ներկայացուցիչներինն է, այլեւ՝ հասարակության յուրաքանչյուր անդամինը: 1965 թվականին ԱՄՆ-ի Գերագույն դատարանը մերժել է այն գաղափարը, թե մամուլը պետք է տեղեկություն ձեռք բերելու հատուկ արտոնություններ ունենա²⁶:

26. Տես՝ ԱՄՆ-ի Գերագույն դատարանի քննած *Zemel v. Rusk* (1965), նմանապես՝ *Branzburg v. Hayes* (1972) դատական գործերը:

ՀՀ-ում եւս տեղեկություն ստանալու իրավունքը յուրաքանչ-յուրինն է, եւ լրագրողները չունեն հավելյալ իրավունքներ: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմելու եւ տեղեկություն տնօրինողներից պահանջելու տեղեկություններ: «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

Այնուամենայնիվ, պրակտիկան փոքր-ինչ այլ ուղղությամբ է զարգանում: Մեր կողմից հարցման ենթարկված Հայաստանյան 105 լրագրողների ճնշող մեծամասնությունն այն կարծիքն է հայտնել, որ տեղեկություն տրամադրելիս պաշտոնյաները խտրականություն են դնում քաղաքացիների եւ լրագրողների միջեւ, հոգուտ վերջիններիս²⁷: 105 հոգուց միայն երեքն է կարծում, որ տարբերություն չկա, բայց նրանցից 2-ն այդ հանգամանքը բացատրում են այն բանով, որ թե՛ լրագրողներին, եւ թե՛ քաղաքացիներին պաշտոնյաներն անհրաժեշտ ինֆորմացիան չեն տալիս: Իսկ պաշտոնյաների խտրական վերաբերմունքը 102 լրագրողների մեծամասնությունը բացատրում է այն բանով, որ պաշտոնյաները վախենում են լրագրողներից կամ նրանց հետ առավել զգաստացած են: «Վախենում են, որ քննադատության կենթարկվեն լրագրողների կողմից կամ

27. Հարցումներն իրականացվել են 2007թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ 105 լրագրողների շրջանում, որոնք ներկայացնում են ՀՀ բոլոր մարզերը եւ Երեւանը: Հարցումների ամփոփ վերլուծությունը տես Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հրապարակած «Լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքը» գրքույկում, Երեւան, 2008:

կկորցնեն իրենց աթոռը», - այսպես է մեկնաբանել իր պատասխանը Սյունիքի մարզային լրագրողներից մեկը:

Կան նաեւ մի քանի այլ բացատրություններ, ինչպես օրինակ՝ լրագրողները տեղյակ են իրենց իրավունքներից եւ կարողանում են պաշտպանել դրանք, մինչդեռ քաղաքացիներն առավել անտեղյակ են իրենց իրավունքներից:

Լրագրողները նաեւ նշում են, որ պաշտոնյաները հաճախ խտրականություն են դնում նաեւ տարբեր լրագրողների միջեւ. մեկին մերժում են տալ տեղեկատվություն, իսկ մեկ ուրիշ լրագրողի սիրով տրամադրում են: Այս խտրական վերաբերմունքը հիմնականում նկատվում է ընդդիմադիր եւ իշխանամետ լրատվամիջոցների ներկայացուցիչների դեպքում:

Գյումրիի լրագրողը պատմում է մի դեպք, երբ թաքցնելով իր լրագրող լինելը՝ փորձել է այլ քաղաքացիների հետ սպասել, թե պաշտոնյան երբ կտրամադրի պահանջվող տեղեկատվությունը: Ժամեր շարունակ ստիպված է եղել սպասել, քանի որ, քարտուղարուհու խոսքերով, պաշտոնյան խորհրդակցության է եղել, սակայն երբ ցույց է տվել իր լրագրողական վկայականը, պաշտոնյան վերջապես դուրս է եկել առանձնասենյակից:

Արմավիրի մարզի լրագրողներից մեկը նույնպես փաստում է, որ գործնականում առկա է խտրականություն մարդկանց՝ տեղեկություն ստանալու եւ լրագրողների իրավունքի միջեւ: Նա սա բացատրում է այն հանգամանքով, որ պաշտոնյաները հաճախ ժամանակ չեն ունենում բոլոր դիմողներին տալ տեղեկատվություն եւ նախընտրում են աշխատել լրագրողների հետ, որոնք իմանալով՝ այնուհետեւ տեղեկությունը կհայտնեն

հանրությանը: Այսպիսով, ինչպես վկայում են լրագրողների հետ անցկացրած մեր հարցումները՝ պրակտիկայում հաճախ է դրսևորվում խտրական վերաբերմունք լրագրողների եւ հասարակ քաղաքացիների միջեւ:

ՏԱ մասին օրենքի 6-րդ հոդվածից պարզ է դառնում, որ մարդիկ ունեն ոչ միայն տվյալ տեղեկատվությանը ծանոթանալու կամ տվյալ փաստաթղթում առկա տեղեկությունը ստանալու իրավունք, այլեւ տվյալ պաշտոնական փաստաթղթի պատճենը ստանալու իրավունք: Ինչպե՞ս է սահմանվում տեղեկությունը: Տարբեր օրենքներ տարբեր կերպ են սահմանում «հանրային տեղեկատվություն» հասկացությունը:

Արտիկլ 19 կազմակերպությունը տեղեկության հետեւյալ սահմանումն է տալիս.

«Տեղեկությունը ներառում է բոլոր տվյալները, որոնք տնօրինվում են պետական մարմնի կողմից՝ անկախ դրանց պահման ձեւից (փաստաթուղթ, ձայնագրություն, էլեկտրոնային ձայնագրություն եւ այլն), տեղեկատվության անկախ պետական մարմնի կամ այլ կազմակերպության կողմից պատրաստված լինելու հանգամանքից եւ ստեղծման ժամանակից»:

Եվրոպայի խորհուրդն առանձնացնում է «պաշտոնական փաստաթուղթ» սահմանումը.

«Պաշտոնական փաստաթուղթ» նշանակում է ցանկացած ձեւով գրառված այն տեղեկատվությունը, որը կազմվել կամ ստացվել է պետական իշխանությունների կողմից, պահվում է նրանց մոտ եւ առնչվում է այս կամ այն պետական

կամ վարչական գործառնություն՝ բացառությամբ նախապատրաստման փուլում գտնվող փաստաթղթերի:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը տեղեկություն հասկացության բավականին ընդգրկուն շրջանակ է ուրվագծում: Ըստ Օրենքի 3-րդ հոդվածի՝

«տեղեկություն են համարվում անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալները՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, զծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)»:

Կարելու է, որ Օրենքը տեղեկություն է դիտում ոչ միայն ավանդական կրիչի վրա առկա տվյալները, այլեւ չի դնում կրիչի որեւէ սահմանափակում՝ էլեկտրոնային, թե ֆիզիկական:

Տեղեկություն ստանալու հարցման ձեւերը

Տեղեկությունը ստանալու համար նախ պետք է հարցումով դիմել տեղեկատվություն տնօրինողին: Հարցումը տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմումն է: Օրենքի ձեւակերպումից երեւում է, որ հարցումը կարող է լինել գրավոր կամ բանավոր: Գործնականում նախընտրելի է հարցումի գրավոր տարբերակը, ինչի դեպքում խախտված իրավունքի վերա-

կանգնման հնարավորությունները մեծանում են: Օրենքը նշում է, որ դիմողը պարտավոր չէ հիմնավորել իր հարցումը: Օրենքը տեղեկություն ստանալու գրավոր եւ բանավոր հարցումին մի քանի պահանջներ է ներկայացնում.

Գրավոր հարցումը պետք է՝

- ստորագրված լինի,
- պարունակի դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության կամ աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ նրա անվանումը, գտնվելու վայրը):

Բանավոր հարցումով դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը:

Հարցումին ներկայացվող՝ վերը նշված պահանջները չբավարարելու դեպքում հարցումը կարող է վերացվել կամ դրան ընդհանրապես ընթացք չի տրվի: Գրավոր եւ անստորագիր հարցումը ենթակա է ոչնչացման:

Նշենք, որ մեր կատարած վերոնշյալ հարցումները եւ դրանց հիման վրա կազմված ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ տեղեկություններ ստանալիս լրագրողների 48%-ը մշտապես նախընտրում է հարցման բանավոր ձևը: Հաճախ են պաշտոնյաներին բանավոր դիմում լրագրողների 31%-ը: Հատկանշական է նաեւ, որ 105 լրագրողից 25-ը տեղեկատվությունը գրավոր ներկայացնելու անհրաժեշտություն երբեք չի ունեցել:

Գրավոր հարցումներից խուսափելու հիմնական պատճառն այն է, որ գրավոր հարցման պատասխանը հիմնականում տրվում է մի քանի օրվա ընթացքում (թեեւ օրենքը սահմանում է մինչեւ 5 օրյա ժամկետ, պաշտոնյաները հիմնականում խախտում են այս ժամկետը: Փոստային առաքումը եւս լրացուցիչ ժամանակ է պահանջում): Շատ հաճախ պահանջվող տեղեկատվությունը լրագրողներին անհրաժեշտ է սեղմ ժամկետներում: Միայն լրագրողական հետաքննության վրա աշխատող լրագրողը կարող է այդքան ժամանակ տրամադրել տեղեկատվությունը գրավոր ստանալու համար: Իսկ օրաթերթերի լրագրողների համար սա գրեթե անընդունելի տարբերակ է: Նկատենք, որ ոչ միայն լրագրողներն են նախընտրում բանավոր հարցման ձևը, այլեւ պաշտոնյաներն էլ մեծիմասամբ բանավոր են պատասխանում:

Մարմիններն առանձնահատուկ վերաբերմունք պետք է դրսևորեն այն դիմողների հանդեպ, որոնք ունեն արատներ, հաշմանդամ են կամ ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված՝ կարող են դժվարություններ ունենալ հարցումը ներկայացնելիս: Եվրախորհրդի հանձնարարականի 4-րդ եւ 5-րդ պարագրաֆներում նշվում է, որ պետական մարմինը հնարավորինս պետք է օգտակար լինի տվյալ դիմողին, օգնի նրան ճիշտ ձեւակերպել իր հարցումը: Բացի այդ, հատուկ դեպքերում (հաշմանդամ կամ անգրագետ մարդիկ, տարիքավորներ, լեզուն չտիրապետող օտարերկրացիներ եւ այլն), երբ դիմողներն առանց օգնության ի վիճակի չեն ընկալել տվյալ փաստաթուղթը, իշխանությունները պետք է հնարավորության եւ տրամաբանության սահմաններում օգնեն նրանց: Իհարկե,

տեղեկատվության ընկալման հարցում օգնություն ցուցաբերելը չի ներառում փաստաթղթերը թարգմանելու պարտականություն կամ բարդ տեխնիկական կամ իրավական խորհրդատվության տրամադրում:

Կարելու է նաեւ այն հարցը, թե ու՞մ կարող են դիմել մարդիկ տեղեկատվություն ստանալու պահանջով:

Տարբեր երկրներում տեղեկատվություն տնօրինողների շրջանակը խիստ բազմազան է: Օրինակ՝ ԱՄՆ-ում Տեղեկատվության ազատության դաշնային օրենքը վերաբերում է բացառապես դաշնային իշխանության գործադիր թեւին: Մինչդեռ ԱՄՆ-ի շատ նահանգներ դաշնային օրենքը լրացնում են սեփական ՏԱ օրենքներով, որոնցում ՏԱ սկզբունքները տարածվում են նաեւ նահանգային եւ տեղական իշխանությունների վրա:

Իռլանդիայում, ինչպես նաեւ մի շարք այլ երկրներում Տեղեկատվության ազատության մասին օրենքը տարածվում է ոչ միայն գործադիր, այլեւ՝ տեղական իշխանության եւ 50 տոկոսից ավելի պետական բաժնեմաս ունեցող եւ նույնիսկ պետական պատվերներ ստացած մասնավոր ընկերությունների վրա (վերջինս կարելու է մասնավորապես քաղաքացիական հասարակության այն խմբերի համար, որոնք նպատակ ունեն հսկել պետական գնումները): Օրենքի դրույթները պետական սեփականությամբ ընկերությունների վրա տարածելը հիմնավորվում է նրանով, որ դրանք հանրային սեփականություն են, ունեն «խառը» գործառույթներ եւ հասարակությունում ունեն կարելու դեր²⁸:

28. Տես նաեւ՝ «Տեղեկացնելու իրավունք», Համաշխարհային բանկի ինստիտուտ, Երեւան, 2003, էջեր 265-277:

ՀՀ Օրենքի գործողությունը, ըստ 3-րդ հոդվածի, տարածվում է հետեւյալ մարմինների եւ կազմակերպությունների վրա, որոնք եւ դիտվում են որպես տեղեկատվություն տնօրինողներ: Դրանք են՝

- պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական հիմնարկները,
- բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները,
- հանրային նշանակության կազմակերպությունները,
- դրանց պաշտոնատար անձինք:

Ինչու՞ է հատկապես կարելու պետական հանրային նշանակության մարմինները սույն օրենքում ներառելը:

Ավանդաբար տեղեկություն ստանալու իրավունքը կապվում է վերը նշված առաջին 4 կետերում ընդգրկված մարմիններից տեղեկություն ստանալու խնդրի հետ, քանի որ Տեղեկատվության ազատությունը կոչված է ապահովելու պետական իշխանության թափանցիկությունը: Սակայն աստիճանաբար պետությունը հասարակական մի շարք կարելու ոլորտների (էներգետիկա, տրանսպորտ, կապ, ջրամատակարարում եւ այլն) շահագործումն ու կառավարումը փոխանցում է մասնավոր սեկտորին: Սրանով այս ոլորտներին առնչվող տեղեկատվությունն ամենեւին չի կորցնում իր կարելուությունն ու անհրաժեշտությունը մարդկանց համար:

Այդ իսկ պատճառով օրենքի հեղինակները գնացել են համար-

ծակ ճանապարհով՝ օրենքը տարածելով նաեւ հանրային նշանակության մասնավոր ընկերությունների վրա: Ըստ Օրենքի՝ դրանք բաժանվում են 2 խմբի.

ա) Հանրային նշանակության մասնավոր ընկերություններ, որոնք շուկայում ունեն գերիշխող դիրք: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող, եթե նա որպես մատակարար կամ սպառող՝

- չունի մրցակից կամ չի հանդիպում որեւէ էական մրցակցության,
- իրացման ծավալներով գրավում է տվյալ ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը»:

Այսպիսի ընկերություններից են, օրինակ, «Երեւան Զուրը», «Հայաստանի էլեկտրացանցեր»-ը, «Հայռուսգազարդ»-ը եւ այլն:

բ) Երկրորդ խումբն են կազմում առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, առեւտրի, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները: Դրանք են, օրինակ, մասնավոր բուհերը, դպրոցները, հիվանդանոցները, որոնք եւս պարտավոր են տեղեկատվություն տրամադրել մարդկանց:

Տեղեկությունը ստանալու համար կարելի է դիմել վերոնշյալ մարմիններից/կազմակերպություններից: Վերջիններս պար-

տավոր են օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով տրամադրել պահանջվող տեղեկատվությունը դիմողին:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2002թ.ին ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» Հանձնարարականում բերվում են տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք տալու նվազագույն պայմանները: Դրանք են.

- պաշտոնական փաստաթղթին ծանոթանալու դիմումով պետք է զբաղվի տվյալ փաստաթուղթը տնօրինող ցանկացած պետական մարմին:
- Պաշտոնական փաստաթղթեր ստանալու մասին դիմումներին պետք է արձագանքել հավասարության սկզբունքով:
- Պաշտոնական փաստաթղթին ծանոթանալու մասին դիմումը պետք է արագ արձագանք ստանա: Որոշումը պետք է կայացվի, դրա մասին տեղյակ պահվի եւ այն իրականացվի նախապես սահմանված ժամանակահատվածում:
- Պետական իշխանությունը պետք է հնարավորության դեպքում օժանդակի դիմողին պաշտոնական փաստաթուղթը գտնելու հարցում, սակայն պետական իշխանության պարտականությունների մեջ չի մտնում պատասխանել այն փաստաթղթի հարցմանը, որը հնարավոր չէ գտնել:

Բանավոր հարցումով դիմելիս նախ պետք է պարզել, թե ո՞ր պաշտոնյան է պատասխանատու տվյալ տեղեկությունը տրամադրելու համար: Պարզելուց հետո դիմողը կարող է անմիջապես ուղղել նրան հարցումը՝ նշելով, թե ինչ տեսքով կամ կրի-

չի վրա է ուզում ստանալ տեղեկությունը՝ տեսնել կամ կարդալ փաստաթուղթը, ստանալ դրա պատճենը՝ թղթի կամ դիսկետի վրա ամրագրված:

Բոլոր դեպքերում դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը, թե իրեն ինչու է անհրաժեշտ տվյալ տեղեկատվությունը կամ ինչպես է պատրաստվում օգտագործել այն:

Գրավոր հարցման մեջ նախըտրելի է նշել, թե ինչ կրիչի վրա է դիմողը ցանկանում ստանալ տեղեկությունը, քանի որ գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով (թուղթ, դիսկետ, էլեկտրոնային նամակ եւ այլն): Եթե նյութական կրիչը նշված չէ, ապա այն տրամադրվում է պաշտոնյայի համար նախընտրելի կրիչով:

Տեղեկություն ստանալու հարցման մեջ անհրաժեշտ է հնարավորինս հստակ ձեւակերպել անհրաժեշտ տեղեկությունը, հատկապես, եթե դիմողը պահանջում է կոնկրետ փաստաթուղթ, ապա պետք է նշել բոլոր տվյալները, որ ունի կոնկրետ փաստաթղթի վերաբերյալ: Հստակ ձեւակերպումն անհրաժեշտ է, որպեսզի մարմինը/կազմակերպությունը ավելի հեշտությամբ կարողանա գտնել եւ կարճ ժամկետում տրամադրի պահանջած տեղեկությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը պահանջում է գրանցել տեղեկություն ստանալու յուրաքանչյուր հարցում: Հարցումները գրանցվում են կա՛ն գրանցամատյանում, կա՛ն համակարգում: Դիմողին անպայման պետք է տրվի ստացական եւ համապատասխան գրանցման համարը: Նույնիսկ եթե տեղեկատվությունը տրամադրվել է անմիջապես,

եւ հարցումն այլ գործողության կատարում չի պահանջում, յուրաքանչյուր հարցման գրանցումը պետական մարմնին թույլ է տալիս ստուգել, թե քանի հարցում է եղել եւ ինչի մասին են դրանք եղել: Դա նաեւ օգտակար կլինի բողոքարկման դեպքում:

Տեղեկություն ստանալու հարցումները պատասխանվում են հետեւյալ ժամկետներում եւ կարգով.

Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Բանավոր հարցման պատասխանը տրվում է այն դեպքում, երբ՝

- 1.** պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը,
- 2.** անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվության տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը,
- 3.** անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվության տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցումում նշված նյութական կրիչով՝ թղթի, տեսաձայնաժապավենի,

դիսկետի կամ այլ կրիչի վրա: Եթե հարցումում նշված չէ նյութական կրիչը, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցումին պատասխանելու համար սահմանված ժամկետում, ապա գրավոր հարցումի պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

- 1.** Եթե գրավոր հարցումում նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո *5-օրյա ժամկետում*,
- 2.** Եթե գրավոր դիմումում նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին դիմողին տեղեկացվում է հարցումը ստանալուց հետո *5-օրյա ժամկետում*,
- 3.** Եթե հարցումում նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումը ստանալուց հետո *30-օրյա ժամկետում*: Սակայն հետաձգման մասին *5-օրյա ժամկետում* անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը: Հետաձգումը հիմնավորելը կարելու պայման է, քանի որ բացառում է պատասխանի կամայական հետաձգումը:

Մեր հարցումները վկայում են, որ օրենքով սահմանված ժամկետներում՝ մինչեւ 5 օր, ինֆորմացիան ստացել է լրագրողների 27 տոկոսը: Այս ցուցանիշը բավականին ցածր կարելի է

համարել, փաստորեն միայն 27 տոկոսի համար է գործում օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը: Հարցված լրագրողների 16 տոկոսը նշել է, որ ինֆորմացիան ստացել է 1-ից 3 ամիս ուշացումով:

«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» Հանձնարարականում նշվում է, որ եթե մարմինը չունի անհրաժեշտ պաշտոնական փաստաթուղթը, ապա պետք է հնարավորության դեպքում դիմողին ուղղություն ցույց տալ դեպի համապատասխան մարմին, որը տիրապետում է տեղեկատվությանը:

ՀՀ Օրենքը նշում է, որ այն դեպքերում, երբ տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա *5-օրյա ժամկետում* պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այն տեղեկատվություն տնօրինողի, այդ թվում՝ արխիվի գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Եթե տեղեկատվություն տնօրինողն ունի փնտրվող տեղեկատվության միայն մի մասը, ապա նա այն տալիս է դիմողին, միաժամանակ հնարավորության դեպքում նշում է այն տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրը, որտեղ դիմողը կարող է գտնել իր փնտրած տվյալների մյուս մասը:

Առանցքային հարցերից է նաեւ տեղեկատվության տրամադրման դիմաց գանձվող վճարի հարցը:

Օրենքը նախատեսում է վճարների գանձում տեղեկատվության տրամադրման դեպքում: Վճար չի գանձվում միայն օրեն-

քով սահմանված դեպքերում²⁹:

Տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետևյալ դեպքերում.

- 1.** բանավոր հարցումներին պատասխանելիս,
- 2.** մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս: (Այսպիսով, տպագրված կամ պատճենահանված տեղեկատվության 11 էջից սկսած գանձվում է վճար):
- 3.** Տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս,
- 4.** օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս: Դրանք այն տեղեկություններն են, որոնց հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

Եթե մարմինը կամ կազմակերպությունը տրամադրել է ոչ հավաստի կամ ոչ լրիվ տեղեկություններ, ապա նա դիմողի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է անվճար տրամադրել ճշգրտված տեղեկությունը:

29. Օրինակ՝ ԱՄՆ-ում պետական շատ մարմիններ տեղեկատվության մեծ մասը տրամադրում են անվճար: Ծավալուն նյութերի դիմաց գանձվում է վճար, սակայն այն սովորաբար չի գերազանցում ծախսածածկումը:

Մեր հարցումներին մասնակից լրագրողների գերակշիռ մասը (93%-ը) երբեւէ չի վճարել տեղեկատվության համար: Սա թերեւս պայմանավորված է այն հանգամանքով, որ գրավոր ստացված տեղեկությունները հիմնականում չեն գերազանցել 10 էջի սահմանը, որը գերազանցելու դեպքում է միայն ՏԱ մասին օրենքը տեղեկատվություն տրամադրողին իրավունք տալիս գումար պահանջել:

Գործնականում օրենքի այս դրույթի կիրառման հետ կապված որոշ դժվարություններ են ծագում: Մի դեպքում, եւ դա հատկապես հատուկ է տեղական ինքնակառավարման մարմիններին, սահմանվում են տեղեկություն տրամադրելու բարձր եւ չհիմնավորված վճարներ: Օրինակ, մեկ էջի համար պահանջում են վճարել 100-500 դրամ գումար, հղում անելով համայնքի ավագանու որոշումը, մինչդեռ Օրենքն ասում է, որ գանձվող վճարի չափը չի կարող գերազանցել տրամադրման տեխնիկական ծախսը՝ թղթի, տպիչի ներկի կամ այլ նյութի ծախսը: Մյուս կողմից, իսկ սա հատուկ է պետական կառավարման մարմիններին, գումար ընդհանրապես չեն պահանջում՝ նույնիսկ այն դեպքում, երբ պահանջվող տեղեկության ծավալը գերազանցում է տասնյակ էջերը:

Կարծում ենք, անհրաժեշտություն է այս հարցում միասնական քաղաքականության եւ կարգի ընդունումը՝ հնարավոր չարաշահումներից եւ սխալ իրավակիրառ պրակտիկայից խուսափելու նպատակով:

ԳԼՈՒԽ Ե

Տեղեկության տրամադրման մերժումը

Երբ տեղեկատվությունը քաղաքական գործիչների եւ պետական պաշտոնյաների կամային հայեցողությամբ է տրվում, ոչ ձեռնառու տեղեկատվությունն արգելափակելու գայթակհությունը շատ հաճախ անհաղթահարելի է դառնում³⁰:

Գործնականում մարդկանց տեղեկատվություն ստանալու հարցումները մերժվում են ամենաանհեթեթ պատճառաբանություններով: Այդ իսկ պատճառով կարելու է, որ Օրենքում հստակ սահմանվեն տեղեկատվության տրամադրումը մերժելու սպառիչ հիմքերն ու կարգը: Նշենք նաեւ, որ մերժումը անպայման պետք է հիմնավորված լինի, որը տեղեկատվություն տնօրինողի պարտականությունն է: ՏԱ Օրենքում հստակ սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերն ու կարգը՝ չինովնիկներին զրկելով կամայականորեն մերժելու հնարավորությունից:

Հետեւյալ հանգամանքները չեն կարող տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմք լինել.

- անհարմարություն կպատճառի պաշտոնատար անձին կամ գերատեսչությանը,

30. Տես, օրինակ, 1995 թվականի օգոստոսի 21-ի «Գարդիան» թերթը (Միացյալ Թագավորություն). «Երկրի հնագույն եւ ամենից աղտոտող միջուկային ռեակտորներին վերաբերող ֆինանսական կարճոր տեղեկատվությունը գաղտնի է պահվում կառավարության կողմից, մինչեւ որ այն չնասնավորեցնի ավելի արդիական ատոմակայանները»:

- գերատեսչությանը կներկայացնի ոչ շահեկան լույսի տակ,
- դիմողի գործը չէ,
- տրամադրվող տեղեկատվությունը կարող է թուր ընկալվել դիմողի կամ ՁԼՄ-ի կողմից:

Մերժումը պետք է լինի միայն գրավոր, որում պետք է հստակ հիմնավորված լինի մերժումը՝ դիմողին տեղեկացնելով մերժման հիմքերը՝ հղում անելով օրենքով սահմանված այն կոնկրետ բացառությանը, որին առնչվում է պահանջվող տեղեկատվությունը՝ նշելով, թե օրենքի որ դրույթի համապատասխան է մերժվում տվյալ տեղեկության տրամադրումը:

Տեղեկատվություն տնօրինողը կարող է նաեւ չպատասխանել բանավոր հարցումին, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է իր հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի (հասարակական անվտանգությանը, մարդու առողջությանը սպառնացող վտանգ):

Գրավոր հարցումով պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողը 5-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ՝ բողոքարկման կարգը: Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը սահմանվում են ՏԱ մասին օրենքով: Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տրամադրել տեղեկությունը 2 հիմքով՝

- ա) Օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում,

բ) Տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

8-րդ հոդվածով սահմանվում են տեղեկատվության ազատության օրինական սահմանափակումները: Դա այն տեղեկությունն է, որը.

1. պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
2. խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,
3. պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
4. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
5. խախտում է հեղինակային եւ հարակից իրավունքը:

Այսպիսով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել վերոնշյալ կենսական շահերից որեւէ մեկին:

Սակայն այս սկզբունքը եւս բացարձակ չէ, եւ օրենքը նախատեսում է նաեւ այնպիսի դեպքեր, երբ տեղեկության տրամադրումն ընդհանրապես չի կարող մերժվել, նույնիսկ եթե այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք (8-րդ հոդվածի 3-րդ կետ):

Դրանք այն դեպքերն են, երբ տեղեկությունը.

- վերաբերում է քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ՝ տարերային աղետներին եւ դրանց հետեւանքներին,
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ՝ բնության, շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը,
- տեղեկությունը չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

ՏԱ շատ օրենքներ սահմանում են, որ այն դեպքերում, երբ տեղեկատվության միայն մի մասը կարող է տրամադրվել, պետական մարմինները պարտավոր են տալ փաստաթղթի պատճենը, որից հանված է հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը, եւ ոչ թե ընդհանրապես մերժեն դիմումը: ՏԱ մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն տնօրինողը պարտավոր է տեղեկություն տրամադրել մնացած մասի վերաբերյալ:

Պրակտիկան ցույց է տալիս, որ լրագրողների 71%-ը հազվադեպ է մերժում ստանում: Միայն հարցված լրագրողների 13% է մշել, որ հաճախ են պաշտոնյաները մերժել: Լրագրողները

սա բացատրում են այն հանգամանքով, որ հետեւողական են իրենց աշխատանքում եւ փորձում են ամեն կերպ ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկությունը: Հաճախակի մերժվողների թվում են ընդդիմադիր օրաթերթերի եւ մարզային լրագրողները: Քանի որ լրագրողների ճնշող մեծամասնությունը գերադասում է դիմել բանավոր, ապա տեղեկատվություն ստանալու մերժումներն էլ հիմնականում լինում են բանավոր: Ընդ որում, լրագրողներն ավելացնում են, որ նույնիսկ իրենց գրավոր հարցումներին պաշտոնյաները բանավոր են մերժում: Այս կերպ պաշտոնյաները կարողանում են իրենց ապահովագրել օրենքի առաջ պատասխանատվությունից:

Հատկանշական է, որ 2004թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից անցկացված հարցման ժամանակ լրագրողների 98%-ը նշել էր³¹, որ իրենց պրակտիկայում հաճախ են հանդիպել անօրինական մերժումների: Նշենք, որ այդ ժամանակ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը նոր էր կիրառության մեջ մտել (ընդունվել է 2003թ.-ին), թե՛ լրագրողները, թե՛ պաշտոնյաները գործնականում ծանոթ չէին օրենքի դրույթներին: Այսօր պատկերը զգալիորեն փոխվել է:

2007թ.-ին կատարած ուսումնասիրության արդյունքում՝ լրագրողների միայն 13%-ն է հաճախ հանդիպել տեղեկատվության անօրինական մերժումների: Կարելի է եզրակացնել, որ օրենքի կիրառումն արդեն իսկ զգալի փոփոխություններ է առաջացրել տեղեկատվության տրամադրման գործընթացում: Իրենք լրագրողներն էլ դա են փաստում: Լոռու մարզի լրագրողներից մեկը վկայակոչել է ՏԱ մասին օրենքը. «Օրենքի գո-

31. www.foi.am

յությունն արդեն իսկ շատ դեպքերում մեզ ապահովում է անօրինական մերժումներից: Մեր պրակտիկայում, ՏԱ մասին օրենքով առաջնորդվելով, արդեն իսկ վիճարկել ենք քաղաքապետարանի անօրինական մերժումը դատարանում եւ հօգուտ մեզ որոշում ստացել: Դրանից հետո թե՛ քաղաքապետարանում, թե՛ այլ պաշտոնյաները մշտապես տրամադրում են մեզ անհրաժեշտ ինֆորմացիան»:

Մերժման դեպքերի նվազումը լրագրողները բացատրում են նաեւ այն հանգամանքով, որ լրագրողներն առավել հաճախ են սկսել դիմել պաշտոնյաներին: Իրավական թեմաներով գրող մի լրագրող, օրինակ, նշում է, որ 2-3 տարի առաջ դատարաններում հատուկեմտ լրագրողներ կային, այն էլ մեծ աղմուկ հանած դատաքննությունների ժամանակ միայն: Այսօր լրագրողները սկսել են ավելի հաճախ ներկա գտնվել դատական նիստերին, գրել իրավական հարցերի մասին, եւ այս հանագամանքով պայմանավորված՝ դատավորները սովորել են աշխատել նաեւ լրագրողների հետ:

Այնուհանդերձ, լրագրողները գրեթե ամեն օր հանդիպում են անօրինական մերժումների: Ներկայացնենք նման մի քանի դեպք լրագրողների փորձից:

Էլեկտրոնային թերթի լրագրողներից մեկը պատմում է, որ Արմավիրի մարզպետին ուղղած իր գրավոր հարցմանն ի պատասխան, մարզպետը մերժել է տրամադրել տեղեկատվություն՝ պահանջելով հիմնավորել հարցման նպատակը: Մեկ այլ դեպքում Առողջապահության նախարարության պաշտոնյան հրաժարվել է տեղեկություն տալ թերթերից մեկի լրագրո-

դին՝ ասելով. «Ի՞նչ գիտեմ, ինչպես եք օգտագործելու այդ տեղեկությունը»:

Անօրինական մերժման մեկ այլ դեպք է պատմում Վանաձորի լրագրողներից մեկը: Նա դիմել էր Լոռու մարզպետարանի կրթության վարչություն՝ տեղեկություն ստանալու քաղաքի երկու դպրոցների միավորման մասին: Վարչության պաշտոնյաներից մեկը նրան բարեկամաբար խորհուրդ է տվել գրել այլ թեմաների մասին:

2006թ.-ին լրագրողներից մեկը դիմում է հարկային պետական ծառայությանը՝ խնդրելով տրամադրել այն պաշտոնյաների ցուցակը, ովքեր տուգանվել են 2006թ.-ին, գույքի եւ եկամուտների հայտարարագրերը չներկայացնելու կամ ուշացնելու պատճառով: Հարկային պետական ծառայությունը մերժում է տեղեկատվության տրամադրումը այն պատճառաբանությամբ, թե պահանջվող տեղեկությունները պարունակում են անձնական տվյալներ: Մեկ այլ դեպքում լրագրողը դիմել էր Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն՝ խնդրելով տրամադրել ՀՀ բոլոր պատերազմի հաշմանդամների ցուցակները ըստ բնակության վայրերի: Պատերազմի հաշմանդամների ցուցակը եւս համարվեց անձնական գաղտնիք եւ չտրամադրվեց լրագրողին:

Թվում է՝ նախագահության թեկնածուների կենսագրությունը չի կարող համարվել գաղտնի ինֆորմացիա եւ չտրամադրվել լրագրողներին: Սակայն 2003թ.-ին նախագահական ընտրություններից առաջ ԿԸՀ-ն նախագահության թեկնածուների կենսագրությունները տպագրելով «Հայաստանի հանրապե-

տություն» պաշտոնաթերթում, հրաժարվել է մյուս լրատվամիջոցներին տրամադրել՝ պատճառաբանելով, թե դրանց կարող եք ծանոթանալ «ՀՀ»-ի հրապարակումից: Սակայն բնական է, որ մրցակցության պայմաններում օրաթերթը չի կարող սպասել եւ ինֆորմացիա տպագրելու առաջնահերթությունը չի կարող զիջել մեկ այլ լրատվամիջոցի: «ՀԺ»-ի թղթակից Վ. Հովակիմյանը ստիպված դիմել է բոլոր թեկնածուների շտաբներին եւ այնտեղից ստացել անհրաժեշտ տեղեկատվությունը: 2008թ.-ի նախագահական ընտրություններից առաջ պատկերը դրականորեն փոխվել էր. ոչ միայն թեկնածուների կենսագրությունները, այլեւ նրանց գույքի եւ եկամուտների հայտարարագրերը տեղադրված էին www.elections.am պաշտոնական ինտերնետային կայքում:

Լրագրողները, հատկապես ընդդիմադիր լրատվամիջոցների ներկայացուցիչները, նշում են, որ լինում են դեպքեր, երբ պետական այս կամ այն մարմինը մերժում է տեղեկություն տրամադրել կոնկրետ թերթի հանդեպ կամ կոնկրետ լրագրողի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի պատճառով, այսինքն՝ խտրականություն են դրսևորում լրագրողների հանդեպ:

Պաշտոնյաների մերժման հիմքերը խիստ բազմազան են: Հարցված լրագրողներից 54% նշում է, որ պաշտոնյաները հիմնավորում են իրենց մերժումը, սակայն 42%-ի համոզմամբ՝ այդ հիմնավորումները շատ հաճախ օրենքից չեն բխում: Օրինակ, լրագրողներից մեկը նշում է, որ նոտարի կոնկրետ գործողության օրինականության մասին գրավոր հարցմանը Արդարադատության նախարարության նոտարիատի բաժնի

պետ Սարիամ Գաբոյանը պատասխանել էր, թե լրագրողի պահանջածը, ոչ թե տեղեկատվություն է, այլ օրենքի պարզաբանում, ինչը տալը իրենց լիազորությունների մեջ չի մտնում: Լրագրողը պահանջել էր նաև հարցը կարգավորող իրավական նորմի պատճեն, որը սակայն չէին տրամադրել:

Հաճախ հանդիպող մերժման անօրինական հիմքերից լրագրողները նշում են նաև այն, որ պաշտոնյաները մերժումը փաստարկում են այն բանով, որ կան չեն տիրապետում պահանջվող տեղեկատվությանը, կան իրավասություն չունեն այն տալու: Երբեմն նաև ասում են՝ տեղեկությունը դեռ մշակման փուլում է, պետք է սպասել:

Մարզային լրագրողներից շատերի խոսքերով՝ պաշտոնյաները հաճախ մերժում են տեղեկություն տրամադրել այն պատճառաբանությամբ, թե իրենք իրավասու չեն եւ «Երեւանից պիտի հրահանգ ստանան»: Օրինակ՝ մարզային լրագրողը պատմում է, որ Արարատի մարզում ժանտախտի կանխարգելման նպատակով կազմակերպված հանդիպման ընթացքում մարզի գլխավոր անասնաբույժը հրաժարվել է տեղեկություններ տալ՝ պատճառաբանելով, թե ավելի բարձր մարմիններից պետք է համապատասխան հրահանգ ստանա: Գորիսի լրագրողներից մեկի խոսքերով էլ, տեղեկություններ տրամադրելու ցանկություն չունենալու դեպքում, որպես կանոն, պաշտոնյաները ինչ-որ տեղ են շտապում՝ հիմնականում մայրաքաղաք:

Լրագրողներից 30%-ն ասում է, որ ավելի հաճախ պաշտոնյաները հակված են պարզապես մերժել՝ առանց հիմնավորելու, նշելու մերժման օրինական հիմքը կամ առանց հղում անելու

օրենքի համապատասխան նորմին: Լինում են դեպքեր, երբ հիմնավորում են մերժումը անհեթեթ պատճառաբանություններով: Օրինակ, «Առավոտի» լրագրողին Մշակույթի նախկին նախարարը մերժել էր այն պատճառաբանությամբ, որ դեռևս իր պաշտոնավարման 100 օրը չի լրացել: Մեկ այլ դեպքում, Արմավիրի քաղաքապետն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահի հարցմանն ի պատասխան՝ ասել էր, թե կպատասխանի, եթե անձամբ ծանոթանա հարցման հեղինակի հետ: Երբեմն էլ պաշտոնյաները այնքան են ձգձգում տեղեկատվության տրամադրումը, որ այն արդեն հարկավոր չի լինում լրագրողին:

Եւ վերջապես, մերժման հանդիպող հիմքերից մեկն էլ տեղեկատվությունն օրենքով պահպանվող գաղտնիք համարելն է: Պաշտոնյաները պատճառաբանում են, թե տվյալ տեղեկությունները լրագրողներն իրավունք չունեն ստանալու: Լրագրողներից մեկը նշել է, որ հանրային գործառույթներ իրականացնող կազմակերպություններից մեկից երկար ժամանակ չի կարողացել ստանալ սակագների բարձրացման հիմնավորման մասին տեղեկություն այն պատճառաբանությամբ, թե դա առևտրային գաղտնիք է: Լոռու մարզային հեռուստատեսության մի լրագրող էլ ցանկացել է նյութ պատրաստել իրենց շրջանում գտնվող զորամասի մասին: Նրան թույլ չեն տվել այցելել՝ հիմնավորելով, թե դա ռազմական գաղտնիք է:

Այսպիսով, ըստ լրագրողների՝ առավել հաճախ հանդիպող ապօրինի մերժման հիմքերն են՝

- ժամանակ չունեն 30.4%,
- իրավունք չունեք ստանալու 25%,
- հիմնավորեք հարցումը 23%,
- քեզ չեն տրամադրի տեղեկություն 14%,
- ցանկություն չունեն 9%:

Այլ պատճառաբանությունների մեջ լրագրողներն ավելացրել են նաեւ, որ պաշտոնյաները հաճախ իրենք են որոշում, որ տվյալ թեման հետաքրքիր չէ հանրությանը: Ինֆորմացիա չեն ուզում տալ «Դա ո՞ւմ է հետաքրքիր» կամ «Ի՞նչ պարտադիր է այդ մասին գրեք» հարց-պատճառաբանություններով: Իսկ ընդհանրապես ընտրություններին նախորդող ժամանակաշրջանում՝ շուրջ 2 ամիս, շատ դժվար է լինում տեղեկություն ստանալ: «Կարծես ամեն ինչ կանգ առած լինի: Պաշտոնյաները վախենում են որեւէ ավելորդ խոսք ասել: «Եկեք ընտրություններից հետո», - սա է միակ պատասխանը», - ներկայացնում է Գյումրիի լրագրողը:

Ռադիոլրագրողներից մեկն էլ պատմում է, որ պաշտոնյան մերժել է իրեն հարցազրույց տալ այն բանից հետո, երբ լրագրողը չի համաձայնել պաշտոնյայի պայմանին. պատրաստած վերջնական նյութը ներկայացնել նրան՝ խմբագրելու համար:

«Երբեւէ ձեզ տրամադրե՞լ են կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն» հարցին լրագրողների 55 տոկոսը դրական պատասխան է տվել: Այս դեպքում, օրի-

նակ, լրատվական գործակալության լրագրողը նախընտրում է կեղծ տեղեկատվությունը հրապարակել՝ հղում անելով այն տրամադրած պաշտոնական աղբյուրին:

Տեղեկությունների հետաձգման կամ դրանց մի մասի տրամադրման դեպքում լրագրողներից շատերը նախընտրում են այլ աղբյուրներ գտնել: Որոշ լրագրողներ պարբերաբար հիշեցնում են կամ սպասում մինչեւ կստանան իրենց անհրաժեշտ ինֆորմացիան: Սպասելը լրագրողները նշել են միայն այն դեպքում, եթե նյութը հրատապ չէ: Լրատվության կամ հրատապ նյութերի դեպքում լրագրողների օրինակները տարբեր են. մարզային լրագրողներից մեկը պատմում է, որ ավտովթարի մասին լուր հաղորդելու համար դիմել էր դեպքի վայր ժամանած ոստիկաններին, որոնք սակայն լրագրողին տեղեկություն չէին տվել՝ պատճառաբանելով, թե գործն ընթացքի մեջ է: Լրագրողը լուրը հաղորդել էր ականատեսների տեղեկությունների հիման վրա, նշելով, որ պաշտոնական տեղեկություններ չկան: Միայն 3 օր հետո, պարբերաբար զանգերից եւ այցելություններից հետո էր հնարավոր եղել ոստիկանությունից ճշտել վթարի պատճառները եւ այլ մանրամասներ: Նյութը սրանից, սակայն, տուժել էր:

Ցանցային լրատվամիջոցի մի լրագրող ասում է, որ կապված այս լրատվամիջոցի առանձնահատկությունների հետ իրենք ինֆորմացիան ամենաարագը հասցնելու խնդիր ունեն եւ երբեք չեն կարող սպասել: Ինֆորմացիայի հետաձգման դեպքում ինքը շտապում է մեկ այլ աղբյուր գտնել, իսկ եթե անհնար է, ապա այդ լուրը չի հրապարակում:

Լրագրողների մեծ մասն այն համոզմանն է, որ իրենց մասնագիտական պարտքն է ամբողջական եւ ստույգ տեղեկություն հասցնել հանրությանը: Այդ իսկ պատճառով, եթե պաշտոնյան մերժում է կամ տեղեկության մի մասն է տալիս, լրագրողներն առաջնահերթ փորձում են գտնել այլընտրանքային աղբյուրներ:

ԳԼՈՒԽ 2

Լրագրողների հավատարմագրման որոշ հիմնախնդիրներ

Հավատարմագրման նպատակն է աջակցել լրագրողներին կատարել իրենց մասնագիտական գործունեությունը պետական մարմինների աշխատանքը լուսաբանելիս: Սրանից հետեւում է, որ հավատարմագրման գործընթացը ոչ թե լրացուցիչ սահմանափակումներ պետք է ստեղծի լրագրողների գործունեության համար, այլ օժանդակի նրանց կատարել իրենց աշխատանքը: Լրագրողի ազատությունը եւ իրավունքները չեն կարող կախման մեջ դրվել հավատարմագրման կարգերից: Եվրախորհրդի նախարարների խորհրդի 1996թ. (96)4 Հանձնարարականի³² 11-րդ սկզբունքի համաձայն՝ հավատարմագրումը չպետք է օգտագործվի լրագրողի տեղեկություն ստանալու իրավունքը սահմանափակելու նպատակով:

Միջազգային չափանիշները նաեւ նշում են, որ հավատարմագրումը բացառապես տեխնիկական բնույթ պետք է կրի, այն կոչված է հեշտացնել տվյալ մարմնում լրագրողի աշխատանքը եւ նրանց մուտքը պետական մարմիններ: Այն միայն լրագրողի ինքնությունը ճանաչելուն պետք է ծառայի եւ չպետք է բովանդակային բնույթ ունենա:

32. <http://cm.coe.int/ta/rec/1996/96r4.html>

Հավատարմագրման իրավական կարգավորման հիմքերը տրված են «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ նոր օրենքի 6-րդ հոդվածում՝ «Լրագրողի հավատարմագրումը»: Այս հոդվածում տրվում են հավատարմագրման կարգի նվազագույն պայմանները, պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգի հիմնական սկզբունքները:

Կարելի է, սակայն, որ լրագրողի հավատարմագրման հիմնական սկզբունքները եւ պայմանները սահմանված են օրենքով եւ չեն թողնվել պետական մարմնի կարգավորմանը, որը կարող էր հանգեցնել անօրինական մերժումների եւ առանձին լրագրողների ու ՋԼՄ-ի հանդեպ խտրականության դրսևորման: Կարելի է սկզբունք է նաեւ այն, որ հավատարմագրման կարգ սահմանված չլինելը լրագրողի հավատարմագրումը մերժելու հիմք չի կարող լինել: Օրենքում տրված են հավատարմագրումը մերժելու սպառիչ հիմքերը՝ դրանով իսկ բացառելով հավատարմագրումը մերժելու կամայական հիմքերի կիրառումը: Հավատարմագրման կարգի սահմանված չլինելը նաեւ հիմք չի կարող դառնալ լրագրողին տեղեկատվության տրամադրումը մերժելու համար:

6-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է հավատարմագրման կարգերի հիմնական սկզբունքները եւ նշում, որ այդ կարգերում չպետք է սահմանվեն, իսկ սահմանվելու դեպքում իրավաբանական ուժ չեն կարող ունենալ այնպիսի դրույթներ, որոնք

1. կսահմանափակեն հավատարմագրված լրագրողի իրավունքը՝ մասնակցելու տվյալ մարմնի, դրա ստորաբաժանումների նիստերին, այլ միջոցառումներին, բացառությամբ

յամբ դրանց դռնփակ լինելու դեպքերի,

2. կբացառեն տվյալ մարմնում անցկացվող միջոցառումների մասին լրագրողների՝ ողջամիտ ժամկետում տեղեկացված լինելը,

3. կստեղծեն անհավասար պայմաններ հավատարմագրված լրագրողների համար,

4. կսահմանափակեն լրագրողի՝ տեղեկատվություն ձեռք բերելու օրենքով սահմանված իրավունքները:

Օրենքը, սակայն, չի կարգավորում պետական մարմինների նիստերին լրագրողների մասնակցության եւ մարմինների գործունեության լուսաբանման հարցերը: Դրանք թողնված են ենթաօրենսդրական ակտով կարգավորմանը: Օրենքը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում հավատարմագրման օրինակելի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հրապարակայնության սկզբունքից է բխում, որ հավատարմագրման կարգերը պետք է հրապարակվեն եւ մատչելի դառնան հանրությանը եւ ՋԼՄ-ին մասնավորապես:

Հավատարմագրման կարգը, մերժելու հիմքերը

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հավատարմագրվելու համար լրատվական գործունեություն իրականացնողը պետք է դիմի տվյալ պետական մարմին:

Պետական մարմինը պարտավոր է հնգօրյա ժամկետում հավատարմագրել լրագրողին:

Ովքե՞ր են համարվում «լրատվական գործունեություն իրականացնողներ»: Ըստ վերոնշյալ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի՝ լրատվական գործունեություն իրականացնող համարվում են «իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, որն իր անունից տարածում է լրատվության միջոց»:

Նշենք նաեւ, որ նոր օրենքի համաձայն լրատվության միջոց են համարվում նաեւ ցանցային լրատվամիջոցները, որոնք օրենքով սահմանվում են որպես՝ «հանրային հեռահաղորդակցության ցանցով որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի եւ լրատվություններ առող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից, պահման ժամանակի տեւողությունից եւ այլ չափանիշներից»:

Սրանից բխում է, որ հավատարմագրման համար պետական մարմիններ կարող են դիմել նաեւ ցանցային լրատվամիջոցները: «Լրատվական գործունեություն իրականացնող» հասկացության ձեւակերպումից բխում է նաեւ, որ հավատարմագրում կարող են ստանալ նաեւ «ազատ լրագրողները»՝ որպես լրատ-

վական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձիք:

«Պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգի» 9-րդ կետի համաձայն՝ հավատարմագրման ենթակա են յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող ոչ ավելի, քան երկու լրագրող եւ տեսաձայնագրման երկու օպերատոր կամ լուսանկարիչ: Հավատարմագրում ստանալու համար լրատվական գործունեություն իրականացնողը գրությամբ պետք է դիմի տվյալ պետական մարմին՝ նշելով հավատարմագրման ներկայացվող լրագրողի ազգանունը, անունը, հայրանունը, նրա ներկայացրած լրատվության միջոցի անվանումը, ինչպես նաեւ լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի էլեկտրոնային հասցեները, հեռախոսների ու ֆաքսի համարները:

Օրինակելի կարգն այս տեղեկություններից բացի որեւէ այլ լրացուցիչ փաստաթուղթ չի պահանջում ներկայացնել: Լրատվամիջոցին, օրինակ, չի կարող իր գրանցման կամ հաշվառման վկայական ներկայացնելու պահանջ ներկայացվել: Հավատարմագրումը մերժելու հիմքերը տրված են Օրինակելի կարգում, թեւս դրանք պետք է սահմանվեն օրենքով՝ կամայականությունները բացառելու համար: Կարգը նախատեսում է հավատարմագրումը մերժելու մի շարք հիմքեր:

Այսպես. հավատարմագրումը մերժվում է, եթե լրատվական գործունեություն իրականացնողի դիմումը չի բովանդակում սահմանված տեղեկությունները կամ առկա է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու՝ Կարգի 13-րդ կետի 1-ին պարբերության 1-ին, 2-րդ կամ 3-րդ ենթակետերում նշված

հիմքերից որեւէ մեկը: Այսինքն, եթե՝

- 1.** լրագրողն անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչվել դատական կարգով,
- 2.** դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, եւ նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,
- 3.** նա տարածել է պետական մարմնի գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանել իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով:

Կարծում ենք, որ Կարգի բացթողումներից մեկն այն է, որ այն թեւ պարտավորեցնում է մարմնին հավատարմագրումը մերժելու դեպքում այդ մասին 5-օրյա ժամկետում տեղյակ պահել լրատվամիջոցին, սակայն չի պարտավորեցնում մերժման մասին գրության մեջ պարտադիր նշել մերժման օրինական հիմքը, ինչպես նաեւ՝ բողոքարկման հնարավորության եւ կարգի մասին: Նշենք նաեւ, որ եթե տվյալ պետական մարմնում հավատարմագրման կարգ սահմանված չէ, ապա դա հիմք չի կարող լինել լրագրողի հավատարմագրումը մերժելու համար:

ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպության մշակած սկզբունքներում³³ նշվում է, որ հավատարմագրումը չպետք է խիստ սահմանափակ ժամկետով տրվի: Կարգը հավատարմագրման ժամկետ է սահմանում 1 տարին: Ըստ Կարգի՝ դրանից պակաս ժամկետով հավատարմագրում կատարվում է միայն, եթե նման պահանջ ներկայացնում է լրատվական գործունեություն իրականացնողն իր դիմումով:

33. www.article19.org/docimages/1231.htm

Իսկ, օրինակ, ՀՀ Ազգային ժողովի գործող հավատարմագրման կարգի համաձայն՝ այստեղ հավատարմագրումն իրականացվում է ամեն գարնանային եւ աշնանային նստաշրջանը մեկ, ինչը մեր կարծիքով խիստ հաճախակի է: Կարծում ենք՝ գործնականում առավել նախընտրելի է, որ տարվա ընթացքում հավատարմագրում իրականացվի միայն մեկ անգամ՝ ավելորդ թղթաբարությունից խուսափելու համար:

Օրինակելի կարգը (15-րդ կետ) սահմանում է հավատարմագրված լրագրողի իրավունքները: Այստեղ եւս առկա են մի քանի խնդիրներ, բացթողումներ: Առանցքային է այն, որ պետք է անպայման նշվի, որ կարգում սահմանվող իրավունքները չեն կարող դիտվել լրագրողի այլ իրավունքների իրացման բացառում, այսինքն՝ իրավունքների ներկայացվող ցանկը չի կարող սպառիչ համարվել:

Ըստ Կարգի՝ հավատարմագրված լրագրողն իրավունք ունի ստանալու լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվություն (սրանից բխում է, որ լրագրողը իրավունք չունի ստանալ այնպիսի տեղեկատվություն, որը չեն նախատեսել տրամադրել լրագրողներին, ինչն էական սահմանափակում կարող է լինել լրագրողի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման գործում), իրավունք ունի նախապես տեղեկացված լինել պետական մարմնի միջոցառումների անցկացման մասին եւ ծանոթանալ առկա տեղեկատու նյութերին, մասնակցելու պետական մարմնի միջոցառումներին, հավատարմագրված այլ լրագրողների հետ համահավասար օգտվելու հավատարմագրված լրագրողների համար ստեղծված պայմաններից:

Դրական է այն, որ Օրինակելի կարգը չի անտեսում նաեւ ոչ հավատարմագրված լրագրողների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման հնարավորությունը: Նշվում է.

«անկախ տվյալ մարմնում հավատարմագրված լինելու հանգամանքից՝ լրագրողներն իրավունք ունեն տեղեկատվության ազատության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել եւ ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկատվություն»:

Կարգում չեն նշվում հավատարմագրված լրագրողի պարտականությունները: Հավատարմագրման կարգի սահմանված չլինելը տվյալ մարմնում չի կարող հիմք դառնալ օրենքով սահմանված կարգով լրագրողին տեղեկատվության տրամադրումը մերժելու համար: Սա բխում է տեղեկատվության ազատության սկզբունքից, որի համաձայն պետական մարմինը պարտավոր է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում դիմողին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը՝ անկախ հավատարմագրված լինել-չլինելու հանգամանքից:

Հավատարմագրման հիմնական կանոնները բացառում են խտրականության որեւէ դրսեւորում տարբեր ՁԼՄ ներկայացուցիչների նկատմամբ: «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետը որոշակիորեն երաշխավորում է ՁԼՄ-ի ներկայացուցիչների նկատմամբ խտրականության դրսեւորումը: Այն նշում է, որ հավատարմագրման կարգում չպետք է սահմանվեն, իսկ սահմանվելու դեպքում իրավաբանական ուժ չունեն այնպիսի դրույթները, որոնք, օրի-

նակ, «անհավասար պայմաններ կստեղծեն հավատարմագրված լրագրողների համար»: 6-րդ հոդվածի 7-րդ կետը եւս երաշխավորում է խտրականության բացառումը.

«Հավատարմագրված բոլոր լրագրողների համար աշխատանքի պայմանները պետք է լինեն նրանց աշխատանքին նպաստող եւ ոչ խտրական՝ ողջամտության սահմաններում»:

Նշվում է նաեւ, որ լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվությունը հավատարմագրված բոլոր լրագրողներին պետք է տրամադրվի միաժամանակ, իսկ նախատեսվող միջոցառումների ճշգրիտ ժամանակի եւ վայրի մասին նրանք պետք է տեղեկացվեն դրանք սկսվելուց առաջ՝ ողջամիտ ժամկետում:

Կարգի 3-րդ կետում սահմանվում է, որ պետական մարմինը որեւէ ձեւով, որեւէ եղանակով չպետք է իրականացնի հավատարմագրված լրագրողի մասնագիտական գործունեության գրաքննություն եւ պետք է հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովի ոչ խտրական պայմաններ: Նշվում է նաեւ, որ պետական մարմինը հավատարմագրված բոլոր լրագրողներին հնարավորին չափ շուտ տեղեկացնում է պետական մարմնի միջոցառումների ժամանակի եւ անցկացման վայրի մասին:

Վերոնշյալ դրույթները խիստ կարեւոր գործնական նշանակություն ունեն, քանի որ պրակտիկայում բազմաթիվ են խտրականության ամենատարբեր դրսեւորումները, երբ ընդդիմադիր մամուլի ներկայացուցիչները դիտավորյալ չեն տեղեկացվում, հրավիրվում այս կամ այն միջոցառմանը, կամ նրանց

մուտքը պետական մարմիններ անօրինականորեն արգելվում է, նրանց համար ստեղծվում են ամենատարբեր տեխնիկական խոչընդոտներ:

Հավատարմագրումից զրկելու, հավատարմագրումը դադարեցնելու հիմքերը եւ կարգը

Հավատարմագրումից զրկելը նշանակում է, որ սահմանափակում են տվյալ լրագրողի՝ տեղեկություն ստանալու իրավունքը: Հետեւաբար սա պետք է տեղի ունենա բացառապես օրենքով նախատեսված հիմքերով եւ կարգով՝ սուբյեկտիվ եւ կամայական դրսեւորումները բացառելու համար: Կարելու է, որ օրենքով տրված լինեն մերժման եւ հավատարմագրումից զրկելու բոլոր սպառնիչ հիմքերը՝ նույնպես կամայականության տեղ չթողնելու համար:

Տարօրինակ է, որ ո՛չ «Ձանգվածային լրատվության մասին» օրենքը եւ ո՛չ Կարգը չեն կարգավորում հավատարմագրումից զրկելու հարցը: Օրինակ՝ արդյոք օրենքի եւ սույն կարգի դրույթները խախտելը կարող է հիմք լինել լրագրողին հավատարմագրումից զրկելու համար: Չկա նաեւ երաշխիք, որ տվյալ մարմնի գործունեության քննադատությունը կամ ոչ ցանկալի հրապարակումը ոչ մի դեպքում չեն կարող դառնալ լրագրողին հավատարմագրումից զրկելու հիմք: Օրենքը նաեւ չի անդրադարձել այն խնդրին, որ հավատարմագրումից զրկելը պետք է ժամանակավոր բնույթ կրի, կատարվի միմայն որոշակի ողջամիտ ժամկետով:

«Ձանգվածային լրատվության մասին» օրենքը հավատար-

մագրումը դադարեցնելու միայն մեկ հիմք է նախատեսում. լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով (6-րդ հոդված, 5-րդ կետ): Թվում էր, թե օրենքով ներկայացրած հիմքերը պետք է սպառնիչ լինեն, սակայն Կարգում ներկայացվում են հավատարմագրումը դադարեցնելու եւս 4 հիմք³⁴: Կարգի 13-րդ կետի համաձայն՝ դրանք են.

- 1.** եթե լրագրողն անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչվել դատական կարգով,
- 2.** եթե լրագրողը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, եւ նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,
- 3.** նա տարածել է պետական մարմնի գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանել իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով,
- 4.** դադարել է գործել լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը, եւ դադարեցվել է լրագրողի ներկայացրած լրատվության բոլոր միջոցների տարածումը:

Լրագրողի հավատարմագրման դադարեցումն իրականացվում է լրագրողների հավատարմագրման մատյանում համապատասխան գրառում կատարելու միջոցով:

34. Առաջին երեք հիմքերը կարող են նաեւ հավատարմագրումը մերժելու հիմք լինել:

Պետական մարմնի պատասխանատուն լրագրողի հավատարմագրման դադարեցման մասին մեկօրյա ժամկետում գրությամբ հայտնում է լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողին:

Այստեղ կրկին բացթողումն այն է, որ պետական մարմնի գրության մեջ պարտադիր պետք է նշվի, թե որն է հավատարմագրումը դադարեցնելու հիմքը:

Օրինակելի կարգում նաեւ չի նշվում՝ հավատարմագրումը դադարում է ժամանակավորապե՞ս, թե՞ ընդմիշտ: Օրինակ՝ եթե լրագրողի դատվածությունը մարվում է, կարո՞ղ է նա հավատարմագրվել: Կամ եթե գործունեությունը դադարեցրած լրատվամիջոցը վերսկսվում է իր գործունեությունը, ապա այն կրկին կարո՞ղ է դիմել հավատարմագրման համար: Եվ, վերջապես, օրենքը պետք է լրագրողին եւ լրատվամիջոցին հնարավորություն տա հավատարմագրման մերժման կամ դադարեցման ցանկացած դեպք բողոքարկել:

Հավատարմագրման կարգով անպայման պետք է նախատեսվեր մերժումը անկախ մարմնին բողոքարկելու մեխանիզմ: Սակայն թե՛ սա, եւ թե՛ ընդհանրապես բողոքարկման հնարավորությունն անտեսված են «ԶԼ մասին» օրենքում եւ Օրինակելի կարգում, ինչը վտանգում է խոսքի ազատության իրավունքը:

Հավատարմագրման անօրինական մերժման կամ դադարեցման փաստը կարող է բողոքարկվել դատական կարգով, սակայն հայտնի է, որ դատական կարգով բողոքարկմամբ հարցի լուծումը կարող է բավականին երկար ժամանակ խլել,

ինչպես նաեւ ծախսատար է, մինչդեռ լրագրողի աշխատանքը պահանջում է խնդրի արագ եւ օպերատիվ լուծում: Ուստի անհրաժեշտ է նախատեսել բողոքարկման արտադատական մեխանիզմ:

ԳԼՈՒԽ Է

Տեղեկություն ստանալու իրավունքը եւ պետական գաղտնիքի պաշտպանությունը

Այսօր հատկապես կարեւորվում է այս հարցի ուսումնասիրությունը, քանի որ կառավարություններն ավելի հաճախ են դիմում ազգային անվտանգության շահին՝ լրագրողների արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության իրավունքների սահմանափակումները հիմնավորելու նպատակով:

Ամերիկյան լրագրողները բազմիցս իրենց բողոքի ծայրն են բարձրացրել նախագահ Բուշի կողմից Հայրենասիրության ակտի ստորագրման փաստի առիթով, որը լրջորեն սահմանափակում է լրագրողների խոսքի ազատության իրավունքը ԱՄՆ-ում՝ արգելելով լուսաբանել ազգային անվտանգությանն ու հասարակական շահին առնչվող կարեւորագույն հարցեր՝ վերահսկելով լրատվամիջոցների կողմից Իրաքյան պատերազմի լուսաբանումը:

Իրաքում զոհված ամերիկացի զինվորների մասին տվյալները՝ մասնավորապես նրանց լուսանկարները երկար ժամանակ գաղտնի էին պահվում մինչ այն օրը, երբ «Ազգային անվտանգության արխիվներ» հասարակական կազմակերպությանը հաջողվեց շահել դատական գործը՝ հիմնվելով ԱՄՆ Տեղեկատվության ազատության մասին Ակտի վրա, որով դատարանը պարտավորեցրեց բացահայտել Իրաքից ԱՄՆ բերվող զին-

վորների՝ ամերիկյան դրոշով ծածկված դիակների լուսանկարները³⁵: Դրանից հետո միայն Պենտագոնին այլ բան չէր մնում, քան 2004թ.-ի ապրիլին հրապարակել զոհված զինվորների իրական տվյալներն ու լուսանկարները³⁶:

Իշխանության գործունեության հրապարակայնության սկզբունքից է բխում պաշտոնական փաստաթղթերի բաց լինելու կանխավարկածը: Դրանք պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարեւոր հանրային կամ պետական շահ տեղեկությունը չհրապարակելու համար: Անգամ եթե լրագրողը, քաղաքացին դիմում է պետական գաղտնիք համարվող տեղեկություն ստանալու համար, իշխանությունները պետք է մտարի վրա դնեն մի կողմից այդ տեղեկատվությունը ստանալու հասարակական շահն ու հետաքրքրությունը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի 10-րդ հոդվածը, ինչպես նաեւ խոսքի ազատությունը սահմանող միջազգային այլ փաստաթղթեր նշում են, որ խոսքի եւ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել պետական անվտանգության պաշտպանության անհրաժեշտությամբ, որը դիտվում է որպես այս հիմնարար իրավունքների սահմանափակման օրինական հիմք:

Պետական գաղտնիքի ինստիտուտն ընդունել են բոլոր երկրները: Սա լիովին հասկանալի եւ տրամաբանական է, քանի որ պետության անվտանգության տեսանկյունից պետական

35. Գործը հարուցվել էր Կոլումբիայի օկրուգի ֆեդերալ դատարանում: Գործ հ. 1:04-cv-01697 (EGS).
36. www.nsarchive.org

գաղտնիքի հրապարակումը կարող է իրական սպառնալիք դառնալ: Հայաստանում պետական գաղտնիքի մատչելիության սահմանափակումը ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված խոսքի եւ տեղեկատվության ազատության իրավունքից բացառություն է:

- ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը նշում է. «իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Ուստի այս սահմանափակումը նախատեսված է նաեւ ՀՀ Սահմանադրությամբ:

- «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը (*ընդ.՝ դեկտեմբերի 30, 1996թ.*) սահմանում է պետական գաղտնիք հասկացությունը, կարգավորում է ՀՀ անվտանգության, քաղաքացիների, հասարակության եւ պետության կենսական շահերի ապահովման նպատակով որոշակի բնագավառի տեղեկություններ պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքը դասելու, դրանք գաղտնագերծելու եւ պաշտպանելու կապակցությամբ ծագող հարաբերությունները եւ այլն:

Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է «պետական գաղտնիք» հասկացությունը. «Պետական գաղտնիքը ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել ՀՀ անվտանգության համար»:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է ծառայողական գաղտնիք հասկացությունը. դրանք վերը նշված ոլորտների այն տեղեկություններ են, որոնք «պահպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է վնաս հասցնել ՀՀ անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը»:

- «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն արգելում է պետական գաղտնիքի հրապարակումը՝ որպես քրեորեն պատժելի արարք. «Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաեւ այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը»:
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասը նույնպես արգելում է հրապարակել այնպիսի տեղեկատվություն, որը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք:

Թեև օրենսդրությունն արգելում է պետական գաղտնիքի հրապարակումը, միեւնույն ժամանակ այն չի հստակեցնում «պետական գաղտնիք» հասկացության սահմանները, այլ միայն մեկ հոդվածով (հ. 2-րդ) տալիս է համապատասխան տեղեկությունների ընդհանուր ուրվագիծը: «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությունը «մշակում եւ հաստատում է պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը»:

Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի 173 որոշմամբ: Ցանկը պարունակում է 33 կետ, այնուամենայնիվ, այստեղ եւս որոշակիացված չեն պետական գաղտնիքի սահմանները: Օրինակ՝ վերոհիշյալ ցանկի 3-րդ կետի համաձայն՝ պետական գաղտնիք են համարվում «զորքերի զարգացման թվի մասին տեղեկությունները»: Հարց է ծագում՝ արդյոք զորակոչիկների թիվը կարո՞ղ է համարվել պետական գաղտնիք: Եթե այո, ապա ինչո՞ւ են այդ մասին տվյալներ հրապարակում ՁԼՄ-ը կամ ոլորտի պաշտոնյաները:

Անհասկանալի է նաեւ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկում տեղ գտած 12-րդ կետի ձեւակերպումը, համաձայն որի՝ պետական գաղտնիք է համարվում «ՀՀ սահմանապահ զորքերի էությունը բացահայտող տեղեկությունները»: «Զորքերի էությունը» չափազանց լայն հասկացություն է: Ցանկացած տեղեկատվություն, որն առնչվում է սահմանապահ զորքերին, կարող է համարվել վերջինիս էությունը բացահայտող:

18-րդ կետի համաձայն՝ պետական գաղտնիք է համարվում նաեւ «հիդրոօդերեւութաբանական եւ գեոֆիզիկայի բնագավառում աշխատանքի արդյունքները բացահայտող տեղեկությունները»: Այստեղ եւս չի որոշակիացվում, թե հատկապես ո՞ր աշխատանքների արդյունքները բացահայտող տեղեկություններն են դասվում պետական գաղտնիքի շարքը:

Գոյություն ունի պետական գաղտնիքի 3 աստիճան՝ **գաղտնի, հույժ գաղտնի եւ հատուկ կարեւորության** կախված գաղտնի տեղեկությունների կարեւորությունից, բնութից եւ դրանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների ծավալից (*Օրենքի 4-րդ հոդված*):

Գաղտնիության աստիճաններին համապատասխան գաղտնիք համարվող փաստաթղթերի վրա դրվում են «գաղտնի», «հույժ գաղտնի» եւ «հատուկ կարեւորության» մակագրությունները:

Խոսքի ազատության պաշտպանության միջազգային ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպությունն իր մշակած տեղեկատվության ազատության մասին օրինակելի օրենքում³⁷ նշում է երեք մասից բաղկացած թեսթի մասին, որն առաջարկվում է պետական պաշտոնյաներին կիրառել այն բոլոր դեպքերում, երբ տվյալ տեղեկատվությունը գաղտնագրելու հարց է ծագում: Թեսթի համաձայն՝ առաջին փուլում պաշտոնյան պետք է պարզի, թե արդյոք տվյալ տեղեկությունն առնչվում է Տեղեկատվության ազատության մասին օրենքով սահմանված օրինական բացառություններին (օրինակ՝ ազգային անվտանգության կամ ան-

37. www.article19.org:

ծի անձնական կյանքի գաղտնիության պահպանության շահ): Երկրորդ փուլում պետք է պարզել, թե արդյոք տեղեկության բացահայտումն էական վնաս կհասցնի՞՞ այդ նպատակին: Եվ վերջում, այնուամենայնիվ, պետք է պարզել՝ արդյո՞ք այդ տեղեկության հրապարակումն ավելի մեծ օգուտ չի տա հասարակությանը, քան այն գաղտնի պահելը:

Ենթադրենք, պաշտպանության նախարարության պաշտոնյան քաղաքացուց հարցում է ստանում՝ տրամադրել տեղեկություններ բանակի համար ձեռք բերված զինվորական հագուստի որակի եւ գնի մասին: Արդյոք այս տեղեկությունն առնչվո՞ւմ է օրինական նպատակներից որեւէ մեկին: Այո, հարցումն առնչվում է ազգային անվտանգության շահին: Բայց միթե դրա հրապարակումը կվնասի՞՞ այդ շահին: Այս կոնկրետ օրինակում վստահաբար կարելի է բացասական պատասխան տալ: Հրապարակումը չի կարող վնասել երկրի անվտանգությանը: Վատագույն դեպքում թշնամին կիմանա, որ մեր բանակում զինվորները վատորակ հագուստ են հագնում:

Հիշենք, որ խոսքը գնում է էական, ոչ թե ընդհանրապես վնասի մասին: Կառավարության պարտականությունն է ապացուցել, որ տվյալ տեղեկության հրապարակմամբ իսկապես կարող է էական վնաս պատճառվել:

Տեղեկություն ստանալու հարցումով դիմողի պարտականությունը չէ ապացուցել, որ հրապարակումն անվտանգ է: Եթե հարցումով դիմողը խնդրել է տրամադրել զենքի որակի մասին տեղեկություն, ապա սա արդեն կարող է էական վնաս պատճառել անվտանգությանը, հատկապես մեր քաղաքական վի-

ճակում գտնվող երկրի համար, սակայն թեսթի երրորդ փուլի համաձայն՝ դեռ պետք է հստակեցնել, թե արդյոք դրա հրապարակումն ավելի կարելո՞ր չէ, քան այն գաղտնի պահելը: Ասենք, հրապարակումը կարող է ավելի օգտակար լինել ազգային անվտանգության պաշտպանության համար, կամ դրա շնորհիվ կմեծանա հասարակական ճնշումը անորակ զենքերը փոխարինել որակյալով, կամ ցույց կտա պաշտպանության նպատակով կատարվող գնումների անարդյունավետությունը, որն ի վերջո կհանգեցնի գնումների գործընթացի բարեփոխման:

Նշենք, որ պետության կողմից հաճախ սխալ է մեկնաբանվում «հանրային հետաքրքրություն» հասկացությունը. հասարակությունը հետաքրքրված է դրանով: Սա դեռ ամբողջական մեկնաբանում չէ: Այն պետք է հատկապես տարբերակել հասարակական հետաքրքրասիրությունից: «Հանրային հետաքրքրություն» նշանակում է, որ հանրությունը տեղեկատվության հրապարակման հետեւանքով շահելու է:

Միացյալ Նահանգներում, օրինակ, իշխանությունները հրաժարվեցին հանրությանը տրամադրել Համաշխարհային առևտրի կենտրոնում տեղադրված գաղտնի տեսախցիկների նկարահանած կադրերը սեպտեմբերի 11-ին՝ դրանք համարելով չափազանց ցավոտ զոհվածների ընտանիքների անդամների համար³⁸: Մեկ տարի անց, այնուամենայնիվ, դրանք հրապարակվեցին, քանի որ որոշվեց, որ գերակշռող հանրային շահը պահանջում է իմանալ, թե ինչպես են մարդիկ տե-

38. ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպության ինտերնետային էջ՝ www.article19.org:

ղահանվել շենքից: Եւ դա հետագայում շենքերը ճիշտ կառուցելու համար լավ դաս եղավ:

ՏԱ շատ օրենքներ սահմանում են, որ այն դեպքերում, երբ տեղեկատվության միայն մի մասը կարող է տրամադրվել, պետական մարմինները պարտավոր են տալ փաստաթղթի պատճենը, որից հանված է հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը, եւ ոչ թե ընդհանրապես մերժեն հարցումը: ՏԱ մասին ԶԶ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է պետական գաղտնիք համարվող տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն տնօրինողը պարտավոր է տեղեկություն տրամադրել մնացած մասի վերաբերյալ, ոչ թե ընդհանրապես մերժել տվյալ փաստաթղթի տրամադրումը:

ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության պաշտոնական ինտերնետային էջում կարելի է տեսնել նման բազմաթիվ փաստաթղթեր, որոնք մատչելի են հասարակությանը մասնակի: Գաղտնազերծված փաստաթղթերի չգաղտնազերծված հատվածները խնամքով ջնջված են, այնպես որ փաստաթուղթն ստացողը չի կարող կարդալ դրանք³⁹:

Պետական գաղտնիքի պահպանման ժամկետները

Պետական գաղտնիքն անժամկետ չէ. օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ գաղտնիքների գաղտնազերծման համար:

39.Տես ԿԶԿ-ի պաշտոնական ինտերնետային էջը՝ <http://www.foia.cia.gov/records.asp>:

«Պետական գաղտնիքի» մասին ԶԶ օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է, թե որքան ժամանակով կարող է տվյալ տեղեկությունը գաղտնիք համարվել: Այսպես՝

- «հատուկ կարեւորության» եւ «հույժ գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող տեղեկությունները իրենց գաղտնիությունը պահպանում են մինչեւ 30 տարի, ընդ որում՝ անհրաժեշտության դեպքում կառավարությունը կարող է սահմանել գաղտնագրման առավել երկար ժամկետ:
- «Գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող տեղեկություններն իրենց գաղտնիությունը պահպանում են մինչեւ 10 տարի: Պետական մարմինները կարող են երկարացնել գաղտնագրված տեղեկությունների պահպանության՝ նախկինում սահմանված ժամկետները, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամանակով: Կառավարության որոշմամբ դրանք կարող են գաղտնազերծվել նաեւ ժամկետից շուտ:

Գաղտնազերծումից հետո տեղեկությունները պետք է եռամսյա ժամկետում հանձնվեն ԶԶ պետական արխիվի պահպանությանը, որտեղ արդեն դրանք մատչելի են դառնում հասարակության բոլոր անդամների համար: «Արխիվային գործի մասին» ԶԶ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ Արխիվային փաստաթղթերից օգտվողն իրավունք ունի ազատ որոնելու եւ ուսումնասիրության նպատակով պետական եւ համայնքային արխիվներից ստանալու արխիվային փաստաթղթեր: Անհասկանալի է այն միտքը, թե ինչու պետք է արխիվային փաստաթուղթ փնտրողը հիմնավորի, թե ինչու է իրեն անհրաժեշտ տվյալ արխիվային փաստաթուղթը: Օրենքից բխում է, որ արխի-

վային փաստաթուղթ կարելի է ձեռք բերել միայն մեկ նպատակով, այն է՝ ուսումնասիրություն կատարելը: Սա միանշանակ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի անհիմն սահմանափակում է: Նշենք, որ օրինակ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության պաշտոնական ինտերնետային էջում⁴⁰ յուրաքանչյուր ոք կարող է գտնել բոլոր այն պետական գաղտնիքները, որոնք արդեն գաղտնազերծվել են: Բայց, օրինակ, Ռուսաստանի անվտանգության ֆեդերալ ծառայության ինտերնետային էջում⁴¹ ընդհանրապես տեղակայված չեն գաղտնազերծված տեղեկություններ:

Տեղեկատվություն, որ չի կարող գաղտնագրվել

Պետական գաղտնիքի մասին օրենքները սահմանում են նաեւ այն տեղեկությունների ցանկը, որոնք չեն կարող գաղտնագրվել եւ համարվել պետական գաղտնիք: Սովորաբար պետական գաղտնիքի կարգավիճակին չեն կարող համապատասխանել.

- հասարակական բնույթ ունեցող տեղեկությունները, որոնք, ասենք, առնչվում են հասարակության անվտանգությանն ու բարօրությանը սպառնացող աղետներին,
- շրջակա միջավայրի, առողջապահության, կրթության, մշակույթի եւ գյուղատնտեսության վիճակին,
- մարդու իրավունքների ոտնահարումներին,
- պետական հաստատությունների եւ պաշտոնատար ան-

40. <http://www.foia.cia.gov/records.asp>

41. <http://www.fsb.ru/>.

ձանց անօրինական գործողություններին:

Վերջինս (պաշտոնատար անձանց անօրինական գործողություններին առնչվող տեղեկությունները գաղտնագրելու անթույլատրելիությունը) բացակայում է մեր օրենքում, որով խիստ նվազում է իշխանության մարմինների վրա հասարակական հսկողություն իրականացնելու հնարավորությունը:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել՝

ա) քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաեւ տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետեւանքների մասին տեղեկությունները,

բ) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկություններ,

գ) քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների եւ սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկություններ,

դ) այն տեղեկությունները, որոնք եթե դասվեն պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական

ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական եւ ճյուղային ծրագրերի իրականացման վրա:

Օրենսդրությունը ոչ միայն սահմանում է գաղտնագրման ոչ ենթակա տեղեկատվությունը, այլեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնյաներին պարտավորեցնում է անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրել հետեւյալ խումբ տեղեկությունները, եթե դրանց համար դիմում են տվյալ պետական մարմնին: Դա այն տեղեկությունն է, որը՝

- 1.** վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,
- 2.** ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առելտրի, մշակութի բնագավառում տիրող իրական վիճակը,
- 3.** չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

ՏԱ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն էլ Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեւ-

ով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

Այսինքն, վերոնշյալ տեղեկություններն անհապաղ հրապարակելու պահանջ է դրվում տեղեկություն տնօրինողի վրա՝ անկախ հարցումով դիմողի առկայությունից: Խնդիրը, սակայն, այն է, որ օրենսդրությամբ պատասխանատվություն չի նախատեսվում այս պարտավորությունը չկատարող պաշտոնյայի նկատմամբ:

Մեր կարծիքով, այս տեղեկությունները թաքցնող պետական պաշտոնյան պետք է կրի քրեական կամ վարչական պատասխանատվություն՝ կախված հասարակությանը եւ առանձին քաղաքացիներին պատճառված նյութական եւ բարոյական վնասի ծավալից:

Պատասխանատվություն պետական գաղտնիքի հրապարակման համար

Պետական գաղտնիքի հրապարակմամբ կարող է վնաս հասցվել երկրի անվտանգությանը, ուստի պետական գաղտնիք հրապարակելը ՀՀ-ում քրեորեն պատժելի արարք է:

ՀՀ Քրեական օրենսգրքի 306-րդ հոդվածը՝ «Պետական գաղտնիք հրապարակելը» սահմանում է.

«**1.** Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ դի-

տավորությամբ հրապարակելն այն անձի կողմից, ով պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ուներ, եւ ուն դա վստահված է եղել կամ հայտնի է դարձել ծառայության բերմամբ, եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները՝ պատժվում է կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Պետական գաղտնիքն անզգուշությամբ հրապարակելը՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Նախ, պարզենք՝ ի՞նչ է նշանակում պետական գաղտնիքի հրապարակում: Հարցի պատասխանը տրվում է «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում՝

«պետական գաղտնիքի հրապարակումն օրենքով գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցումն է, տրամադրումը,

առաքումը, ինչպես նաեւ որեւէ ձեւով մատչելի դարձնելն է այն անձանց, ովքեր այդպիսի տեղեկություններին իրազեկ լինելու իրավունք կամ սահմանված կարգով ծանոթանալու թույլտվություն չունեն»:

Քանի որ պետական գաղտնիքի հրապարակումը քրեական պատասխանատվություն է առաջ բերում, հետեւաբար խիստ կարեւորվում է այն հարցը, թե ո՞վ պետք է պատասխանատվություն կրի պետական գաղտնիքի հրապարակման համար՝ հրապարակողը (ասենք՝ լրագրողը), թե՞ պետական պաշտոնյան: ՀՀ Քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածը նշում է, որ պետական գաղտնիքի հրապարակման համար պատասխանատվության ենթարկվում է այն անձը, ով պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ուներ, եւ ուն դա վստահված է եղել կամ հայտնի է դարձել ծառայության բերմամբ: Որպես հանցագործության սուբյեկտ ու՞մ նկատի ունի օրենսդիրը այս հոդվածով:

Ո՞ւմ են վստահվում պետական գաղտնիք համարվող տեղեկությունները: «Պետական գաղտնիքի մասին» օրենքը կարգավորում է պետական գաղտնիք համարվող տեղեկությունների մատչելիության ընթացակարգը:

Հրապարակման համար պատասխանատվության կարող է ենթարկվել նա, ում գաղտնիքը հայտնի է դարձել ծառայության կամ աշխատանքի բերումով: Այս դեպքում տեղեկությունը հայտնի է դառնում միայն այն անձին, ով ունի համապատասխան լիազորություն: Խիստ անորոշ է ձեւակերպված «աշխատանքը», քանի որ այն լայն հասկացություն է եւ սկզբունքորեն

դրա տակ կարելի է հասկանալ ցանկացած քաղաքացու պրոֆեսիոնալ գործունեության ցանկացած ձեւ, որի ընթացքում նրան հայտնի է դարձել պետական գաղտնիքը: Սակայն պետք է ուշադրություն դարձնել «Պետական գաղտնիքի» մասին օրենքի 1-ին հոդվածին, որը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց վրա տարածվում է սույն օրենքի գործողությունը: Հոդվածը նշում է, որ օրենքի դրույթները ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների (անկախ սեփականության ձեւից), պաշտոնատար անձանց եւ քաղաքացիների կողմից, որոնք իրենց կարգավիճակով պարտավոր են կամ պարտավորություն են ստանձնել կատարել պետական գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Այս իմաստով կարելու է նաեւ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (2001թ., դեկտեմբերի 4), որի 23-րդ հոդվածը որպէս քաղաքացիական ծառայողի հիմնական պարտականություններից մեկը նշում է նաեւ պետական, ծառայողական եւ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը: Այսինքն՝ գաղտնիքը պահպանելը քաղաքացիական ծառայողի պաշտոնական պարտականություններից է, որն անպայման ենթակա է կատարման: «Պետական գաղտնիքի մասին» օրենքը նաեւ նշում է, որ պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները «համարվում են ՀՀ սեփականությունը եւ պետական գաղտնիքը պահպանվում է պետության կողմից»:

Օրենքի 19-րդ հոդվածով «պետական եւ ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովումն իրականացնում են այդպիսի գաղտնիք կազմող տեղեկություններ տնօրինող, դրանց օգտագործմանը աշխատանքներ կատարող պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները՝ իրենց իրավասության սահմաններում եւ իրենց առջեւ դրված խնդիրներին համապատասխան»:

Այս բոլոր նորմերը հիմնավորում են այն, որ պետական գաղտնիքի պաշտպանությունը դրված է պետության, պետական մարմինների ու պաշտոնատար անձանց վրա: Այս ցանկում քաղաքացիները, այդ թվում եւ լրագրողները ընդգրկված չեն:

Այնուամենայնիվ, ինչպէ՞ս պետք է վարվի լրագրողը, եթե իր մասնագիտական պարտականությունները կատարելիս իրեն հայտնի են դառնում պետական գաղտնիք համարվող տեղեկություններ:

Բավականին թերի ձեւակերպումներ է պարունակում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որը լրագրողներին պարտավորեցնում է չհրապարակել պետական գաղտնիք: Սույն օրենքի 24-րդ հոդվածի գ կետն արգելում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել «օրենքով պահպանվող պետական եւ այլ գաղտնիքներ հրապարակելու» նպատակով: Այս հոդվածը ՁԼՄ-ի համար երկու վտանգ է ներկայացնում: Նախ, թեպետ պետական գաղտնիքը պահպանելու պարտավորությունը օրենքով դրված է պետության վրա, սակայն վերը նշված դրույթով լրատվամիջոցներին է պարտավորեցվում պահպանել այն:

«Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի մյուս թերութունն այն է, որ անհասկանալի է, թե ինչ ասել է «այլ գաղտնիքներ»: Եթե օրենսդիրը փորձ է արել օրենքով սահմանել խոսքի ազատության բոլոր հնարավոր սահմանափակումները երկիմաստ մեկնաբանությունները հետագայում բացառելու համար, ապա այս դեպքում միանգամայն անորոշ է, թե որո՞նք են «այլ գաղտնիքները» եւ որքա՞ն ընդարձակ կարող են դրանք մեկնաբանվել: Պետք է նշված լիներ «օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ», այսինքն պետք է պահպանվի միմիայն այն գաղտնիքը, որը սահմանվում է պահպանվում է օրենքով: Գաղտնիքների սպառնիչ ցանկը սահմանվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով: «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում առկա թերի ձեւակերպումները, մեր կարծիքով, շտկվում են:

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշվում են այն դեպքերը, երբ լրագրողը կամ լրատվական գործունեություն իրականացնողն ազատվում է պատասխանատվությունից, որոնց թվում նշվում է նաեւ հետեւյալը.

«Օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով, կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել»:

Հոդվածը պաշտպանությամբ է ապահովում բոլոր այն լրագ-

րողներին, որոնք եթե պետական գաղտնիքը կամ օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկությունները ձեռք են բերել օրինական ճանապարհով (ասենք, հարցազրույցի ժամանակ, կամ նրանց տրվել է պաշտոնյայի կողմից), ապա դրա հրապարակման համար չեն կարող պատասխանատվություն կրել: Օրենքի պաշտպանությունն ավելի հեռուն է գնում՝ տալով իրական երաշխիքներ: Լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվությունից ազատվում է նույնիսկ այն դեպքում, երբ տեղեկատվության գաղտնի լինելն ակնհայտ է եղել, եթե «այդ տեղեկատվության տարածումը բխել է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունից...» («ՁԼ մասին» օրենք», հոդված 9, կետ 3):

Այսպիսով, պետությունն ինքը պետք է ապահովի պետական գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանությունը: Գաղտնիքը բացահայտելու համար պատասխանատվություն կարող է կրել միայն գաղտնիքը կրողը, ով պաշտոնապես իրավունք է ստացել ձեռք բերել այդ գաղտնի տեղեկությունները եւ պարտավորվել է չբացահայտել: Լրագրողին պետական գաղտնիք կարող է հայտնի դառնալ, ասենք, պետական ծառայողի հետ զրուցելիս: Վերջինս դիտավորյալ կամ անզգուշորեն կարող է լրագրողին պետական գաղտնիք հայտնել: Գաղտնիքը հետագայում հրապարակելու համար լրագրողը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Սակայն եթե այդ տեղեկությունները լրագրողը ձեռք է բերել օրինական ճանապարհով, լրագրողի վրա չի դրվում պարտականություն ստուգել ստացված տեղեկատվության կարգավիճակը: Լրագրողը չի դասվում «Պետական գաղտնիքի» մա-

սին օրենքի 1-ին հոդվածով սահմանված անձանց շարքը, որոնց վրա տարածվում է այդ օրենքի գործողությունը:

Քաղաքացին, այդ թվում եւ լրագրողը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության պետական գաղտնիքի հրապարակման համար, եթե այն ձեռք է բերել օրինական ճանապարհով:

Պետությունը պարտավոր է պատշաճ պահպանել իր գաղտնիքները, եւ եթե լրագրողին հաջողվում է իմանալ որոշ գաղտնի տեղեկություններ, ապա պատասխանատվության պետք է ենթարկվի ինֆորմացիայի արտահոսքը թույլ տված պետական մարմինը կամ պաշտոնյան: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը լուրջ երաշխիք է պարունակում տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշտոնյաների համար: Արտահոսքը կամ հոսակորուստը, ինչպես սահմանում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքը, գաղտնիք կազմող տեղեկություններին իրազեկ լինելու իրավունք ունեցող, ինչպես նաեւ դրանց պահպանության համար պատասխանատու անձանց անփութության հետեւանքով տեղեկությունների արտահոսքն է կամ կորուստը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն նույնիսկ եթե տեղեկատվությունը պարունակում է պետական գաղտնիք, այն ենթակա է տրամադրման եւ հրապարակման, եթե այդ տեղեկությունը.

ա) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային աղետներին եւ դրանց հետեւանքներին,

բ) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առելտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը,

գ) տեղեկությունը չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Միեւնույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ իրավասու պետական մարմինը կամ պաշտոնյան պարտավոր է հրապարակել կամ տրամադրել ինֆորմացիա քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, ինչպես նաեւ աղետների, շրջակա միջավայրի պաշտպանության, տնտեսության ընդհանուր վիճակի, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության մասին: Տվյալ դեպքում, նրանք ենթակա չեն պատասխանատվության ըստ օրենքի 14-րդ հոդվածի, քանի որ գործել են՝ ելնելով պետության եւ հասարակության շահերից:

Այսպիսով, արտահոսք թույլ տված պաշտոնյաները կամ միջազգային եզրաբանությանը՝ whistleblowers պատշաճ պաշտպանված են ՀՀ օրենսդրությամբ, սակայն հարցն այն է, որ պաշտոնյաները ձեռնպահ են մնում գաղտնիքներ բացահայտելուց բաց աշխատելու մշակույթի բացակայության պատճառով: Օրինակ, եթե պաշտոնյան տեղյակ է, որ իր գերատեսչությունում կատարվել է քրեական հանցագործություն, կամ իր

ղեկավարը չի կատարում իր օրինական պարտավորությունները, կամ իր մարմնի գործունեությունը սպառնում է հասարակության առողջությանը կամ շրջակա միջավայրին, պետք է պաշտոնյան բացահայտի⁶, թե՞ թաքցնի այս տեղեկությունները դրանց գաղտնի լինելու պատճառով: Հարցին հրաշալի պատասխանում է հետեւյալ օրինակը (*աղբյուրը՝ ԱՐՏԻԿԼ 19*).

2003թ.-ի սկզբին Քեթրին Գանը՝ Մեծ Բրիտանիայի կառավարության էլեկտրոնային լուսմների կազմակերպության հաղորդակցության բաժանմունքի աշխատակիցը, ամերիկացի մի պաշտոնյայից էլեկտրոնային մի նամակի կրկնօրինակ է ստանում: Նամակում նշվում էր ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ պետությունների դիվանագետներին գաղտնալսելու ծրագրի մասին: Մեծ Բրիտանիան եւ ԱՄՆ-ը խիստ ցանկանում էին ստանալ Իրաք ներխուժելու գործողությունները թույլատրելու մասին Անվտանգության խորհրդի ռեզոլուցիան: Գանը ստանալով այս նամակը՝ այն տրամադրում է թերթերին՝ հրապարակման: Այս պատմությունը լուրջ խնդիրներ է առաջացնում երկու պետությունների համար էլ: Գանն ընդունեց, որ ինքն է հրապարկել էլեկտրոնային նամակը, նրան մեղադրեցին լրտեսության մեջ: Սակայն 2004թ.-ի փետրվարին նրա դեմ բերված մեղադրանքները հանվեցին:

Խնդիրն այն էր, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն ավելի լուրջ խնդիրներ կունենար, եթե դատարանը նրան պարտադրեր ներկայացնել Իրաքի ներխուժման իրավական հիմնավորումները: Չէ՞ որ Բեծ Բրիտանիայի բնակչության կեսը դեմ էր Իրաքի պատերազմին, հետեւաբար հավանականությունը խիստ փոքր էր, որ դատարանը Գանին մեղավոր կճա-

նաչեր: Քեթրին Գանը պաշտպանված չէր Անգլիական օրենքներով: Նա կորցրեց իր աշխատանքը եւ խուսափեց քրեական պատասխանատվությունից միայն այն պատճառով, որ կառավարությունը վախեցավ դրանից:

Պետական գաղտնիքի ինստիտուտը շատ հաճախ պարզապես խաղաթուղթ է ծառայում պետական պաշտոնյաների ձեռքին՝ տեղեկատվության մատչելիությունը սահմանափակելու նրանց մշտական ձգտումն իրականացնելու համար: Փաստեր քողարկելու ցանկությունը արդարացնում են ազգային անվտանգության պաշտպանությամբ: Անշուշտ, պետական գաղտնիքի բացահայտումը կարող է վտանգել պետության անվտանգությունը, սակայն վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ պաշտոնյաները դիմում են անվտանգության գործունին, որպեսզի թաքցնեն տեղեկատվությունը:

Տեղեկատվություն ստանալու իրավունքի արտադատական եւ դատական պաշտպանությունը

Տեղեկատվության ազատության նպատակը կառավարության աշխատանքը դժվարացնելը չէ: Եթե հարցումներն անմիտ են կամ նպատակ ունեն ուղղակի անհանգստություն պատճառել, իրավասու պաշտոնյաները կարող են մերժել այդ հարցումները: Սակայն այդ մերժումները, ինչպես նաեւ տեղեկատվության ազատության վերաբերյալ բոլոր այլ որոշումները պետք է ենթակա լինեն բողոքարկման:

Եթե հասարակության որեւէ անդամի տեղեկատվություն ստանալու հարցումը մերժվել է, նա կարող է դիմել նույն մարմնի ավելի բարձր ատյաններին կամ վարչական այլ մարմինների, որոնք ունեն պետական մարմինների որոշումները վերանայելու իրավասություն: Եվ վերջապես, անձը կամ կազմակերպությունն իրավունք ունի դիմել դատարան:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կարելու որոշումներից մեկը մերժումը բողոքարկելու ընթացակարգն է: Այն նախատեսում է մի մեխանիզմ, որով տեղեկատվություն ստանալու իրավունքի անօրինական սահմանափակումները կամ ՏԱ այլ խախտումները կարող են դառնալ անկախ քն-

նության առարկա: Առանց այս երաշխիքի ՏԱ օրենսդրության արդյունավետությունը խիստ նվազում է:

Ինչպես սահմանվում է Եվրոպայի խորհրդի հանձնարարականի 9-րդ բաժնում՝ հայցողը, ում պաշտոնական փաստաթղթից օգտվելու հայտը մասամբ կամ ամբողջովին մերժվել է կամ չի ընդունվել կամ չի քննարկվել սահմանված ժամկետում, պետք է հնարավորություն ունենա օգտվել վերանայման կարգից՝ դատարանում կամ օրենքով սահմանված մեկ այլ անկախ եւ անկողմնակալ ատյանում: Ի դեպ, վերանայման ընթացակարգը պետք է լինի արագ եւ ոչ թանկ:

Այս պահանջներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ ՏԱ օրենսդրության մեջ: Օրենսդրությամբ սահմանվում է պաշտպանության երեք ձեւ՝

- վերանայում վերադատության կարգով,
- դատական,
- պետական լիազորված մարմին, որ է՝ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

Որոշ պետական համակարգերում վերանայման ներքին ընթացակարգը համարվում է պարտադիր միջանկյալ քայլ՝ նախքան դատարանում կամ այլ անկախ մարմիններում հարցը բողոքարկելը: Բողոքը հղվում է խախտումը թույլ տված մարմնի վերադասին: Քաղաքացիները կարող են բողոքել՝ մարմնից պահանջելով ներքին կարգով վերանայել մերժումը: Եթե վերադասը ուժի մեջ է թողնում մերժումը, քաղաքացին, որպես հաջորդ քայլ, կարող է դիմել մարդու իրավունքների պաշտ-

պանին կամ ուղղակի դատարան: Ի դեպ, այս մարմիններին կարող է դիմել նաև առանց վերադասության կարգով բողոքարկելու:

Բողոքարկման երկրորդ փուլը կարող է իրացվել դատական համակարգի միջոցով: Դատարանի վրա է դրված մարդու իրավունքների պաշտպանության առաքելությունը: Ի դեպ, քանի որ ըստ Սահմանադրության մարդիկ ունեն իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունք: Որոշ երկրներում օմբուդսմենն իր հերթին իրավունք ունի բողոքն ուղարկել դատարան:

Դատական համակարգը պետք է ստուգող դեր կատարի գործադիր եւ օրենսդիր մարմինների նկատմամբ, որպեսզի վերջիններս կամայականորեն մարդկանց չզրկեն տեղեկատվություն ստանալու ազատությունից եւ հնարավորությունից կամ տեղեկատվության մատչելիությունը կախման մեջ չդնեն որեւէ մեկի սուբյեկտիվ ցանկությունից:

Տեղեկատվության ազատության պաշտպանության դատական պրակտիկան Հայաստանում սկսել է ձեւավորվել դեռեւս ՏԱ մասին օրենքի ընդունումից առաջ (ՏԱ մասին ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին եւ ուժի մեջ մտել նույն թվականի նոյեմբերի 15-ին): Այդ իսկ պատճառով ՏԱ դատական գործերը կարելի է բաժանել երկու խմբի՝ մինչ օրենքի ընդունումը եւ օրենքի ընդունումից հետո հարուցված դատական գործեր: Նշենք, որ ՏԱ մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն երեսունից ավելի դատական նախադեպեր են ստեղծվել ինչպես երեւանում, այնպես էլ մարզերում: Ի դեպ, դատա-

րան դիմել են թե՛ հասարակական կազմակերպությունները, թե՛ անհատ քաղաքացիները, թե՛ լրագրողները:

Ընդհանուր երեսուն դատական գործերից 23-ը ավարտվել է դրական, 4-ը՝ բացասական արդյունքով, իսկ 3 գործ բավարարվել է մասնակի: 6 դատական գործ տեղի է ունեցել մինչ օրենքի ընդունումը՝ 2001-2003թ.թ. ընկած ժամանակահատվածում: Դրանք դիպվածային բնույթ էին կրում, եւ բոլոր դատական գործերի հայցվորները ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպություններն էին՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Ավտովարորդների իրավունքների պաշտպանության «Աքիլլես» կազմակերպությունը, Հետաքննող լրագրողների ընկերակցությունը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը եւ Գյումրիի «Ասպարեզ» լրագրողական ակումբ:

Տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության առաջին դատական գործը «Գյումրիի «Ասպարեզ» լրագրողների ակումբը եւ «Իրավունք» շաբաթաթերթի թղթակից Գագիկ Նիկողոսյանն ընդդեմ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության» գործն էր՝ հարուցված 2001թ.-ի օգոստոսի 30-ին: Այն, սակայն, ավարտվեց լրագրողների պարտությամբ⁴²:

Մինչ օրենքի ընդունումը անհատ լրագրողի կամ քաղաքացու կողմից որեւէ հայց չի ներկայացվել: ՏԱ օրենքի բացակայության պայմաններում տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության հայցերը հիմնվում էին մասնավորապես եվ-

42. Դատական գործի մանրամասները տես՝ www.asparez.am, www.foi.am ինտերնետային կայքերում:

րոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի, ՀՀ Սահմանադրության խոսքի եւ տեղեկատվության ազատությունն ապահովող 24-րդ հոդվածի վրա, ինչպես նաեւ՝ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի վրա:

Այս փուլում հայցվորների համար բավականին դժվար էր դատարաններում խոսել Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի դրույթների, բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին Օրիոուսի կոնվենցիայի պահանջների մասին, երբ գործը քննող դատավորները զարմացած հայացքներով նայում էին հայցվորին եւ երբեմն նրանց խոսքն ընդհատում «Ասվածը քննվող գործին չի առնչվում» արտահայտությամբ: Օրենքի ընդունումից առաջ հարուցված 6 գործերից միայն երկուսում դատարանը որոշում կայացրեց հօգուտ հայցվոր ՀԿ-ի, այն էլ՝ մասնակի: Լրագրողների առաջին դատական գործի բացասական արդյունքից հետո արդեն պարզ դարձավ, որ դատարանները դեռեւս պատրաստ չեն ընդունել արդար եւ անկողմնակալ որոշումներ, երբ դատարանի դահլիճում մրցակցող կողմերից մեկը պետական մարմինն է կամ պաշտոնյան:

Օրենքի ընդունումն իրավիճակն անմիջապես չբարելավեց նախ այն պատճառով, որ առաջ եկավ ինչպես հասարակության ընդհանրապես, այնպես էլ մասնավորապես դատավորների՝ տեղեկատվության ազատության օրենսդրությանն անիրազեկ լինելու հանգամանքը:

Պետք է նշել, սակայն, որ տարեցտարի տեղեկություն ստանա-

լու իրավունքի պաշտպանության դրական դատական գործերի թիվն ավելանում է: Ինչպես նշեցինք, 2003թ.-ից՝ օրենքի ընդունումից մինչ 2008թ.-ի հունիսն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել 30 դատական գործ, որից ութի հեղինակը Ինֆորմացիայի ազատության կենտրոնն է: Կենտրոնն այս բոլոր դատական գործերը հարուցել է մարզերում իր մարզային իրավաբանների միջոցով: Կենտրոնն իր առջեւ նպատակ էր դրել ստեղծել տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության ռազմավարական դատական պրակտիկա, որը պետք է կյանքի կոչեր այս իրավունքի պաշտպանության իրավական մեխանիզմները, ինչպես նաեւ առաջնորդող դեր կատարեր իրավունքի պաշտպանության հետագա զարգացման եւ հարստացման համար: Այդ իսկ պատճառով կազմակերպությունը հատկապես ընտրում էր այնպիսի գործեր, որոնք շոշափում էին հնարավորինս մեծ թվով մարդկանց շահեր՝ դատական որոշումների միջոցով ապահովելով, օրինակ, համայնքային բյուջեների հրապարակայնությանը, քաղաքապետերի, ավագանու որոշումների մատչելիությունը եւ այլն:

Պետք է նշել, որ դատական գործերը կատարում են ոչ միայն խախտված իրավունքը վերականգնելու, այլեւ հզոր կանխարգելիչ գործառույթ: ԻԱ կենտրոնի հարուցած 8 գործերից 3-ը ավարտվել է մինչ դատական քննության սկիզբը. պատասխանող կողմը ստանալով դատական ծանուցագիրը դատարան ներկայանալու մասին՝ շտապել է օր առաջ տրամադրել մերժված տեղեկությունները՝ իր հեղինակությունը փրկելու եւ հետագա պրոբլեմներից խուսափելու համար:

Դրական էլք ունեցած դատական գրեթե բոլոր գործերում դա-

տարանը պատասխանող կողմին պարտավորեցրել է տրամադրել մերժված տեղեկությունները՝ որոշ դեպքերում նաև պարտավորեցնելով փոխհատուցել կատարված դատական ծախսերը (Տես, օրինակ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Արարատի մարզպետարանի», «Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Ապարանի քաղաքապետարանի», «ՂԼ-ն ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի»⁴³ դատական գործերը):

Ներկայացնենք տեղեկություն ստանալու իրավունքի դատական պաշտպանությանն առնչվող գործերից մի քանիսը:

- 2003թ. հոկտեմբերի 10-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիմել էր Վանաձորի քաղաքապետին 2002-2003թթ.-ին քաղաքապետի եւ ավագանու ընդունած որոշումների պատճենները ստանալու համար: Միաժամանակ նշել էր, որ պատրաստ է վճարել փաստաթղթերի պատճենների տրամադրման համար անհրաժեշտ ծախսերը:

Սակայն Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը մերժել էր տրամադրել որոշումները՝ պատճառաբանելով, թե որոշումների մեջ կան անհատական եւ ներքին իրավական ակտեր, որոնց կարող են ծանոթանալ միայն դրանց հասցեատերերը: Քաղաքապետի ու ավագանու մյուս որոշումներին ծանոթանալու համար Սամվել Դարբինյանը խորհուրդ էր տվել նայել «Համայնքի իրավական ակտերի տեղեկագիրը», որը ՀՔԱ

43. Տես՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եւ Հետաքննող լրագրողների պաշտոնական ինտերնետային կայքերը՝ www.foi.am, www.hetq.am:

գրասենյակի աշխատակիցները չէին գտել անգամ քաղաքապետարանում:

2003թ.-ի դեկտեմբերի 10-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը քաղաքապետի մերժումը բողոքարկեց Լոռու մարզի առաջին ատյանի դատարան: Առաջին դատական նիստի ժամանակ քաղաքապետարանը չառարկեց հայցի դեմ եւ խոստացավ տրամադրել պահանջված փաստաթղթերը: Սակայն Վանաձորի քաղաքապետարանը չկատարեց խոստումը՝ այս անգամ վկայակոչելով Վանաձորի ավագանու 2003թ.-ի տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը սահմանող «Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ ընթացիկ տարվա համար» որոշումը եւ մեկ որոշման տրամադրման համար պահանջեց 1000 դրամ:

2004թ.-ի ապրիլի 30-ին Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը (դատավոր Մ. Հարությունյան) բավարարեց ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հայցն ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի՝ «տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցվում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում», նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ «յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ/կամ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվությունը տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»: Փաստորեն, սա առաջին դատական որոշումն էր, որում դատարանը պաշտո-

նապես հղում էր անում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին:

Դատարանը Վանաձորի քաղաքապետարանին պարտավորեցրեց տրամադրել պահանջվող բոլոր որոշումների պատճենները, բացառությամբ այն որոշումների, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն հրապարակման ենթակա չեն: Իսկ քաղաքապետարանի պահանջած երկու միլիոն վեց հարյուր հազար դրամի փոխարեն կազմակերպությանը պարտավորեցրեց վճարել ընդամենը 1000 դրամ՝ որպես տեղական տուրք:

Սակայն, հետագայում զարմանալի շրջադարձ կատարվեց: Վանաձորի քաղաքապետարանը պաշտոնապես դիմեց դատարան՝ որոշումը մեկնաբանելու խնդրանքով: Մեկաբանելով որոշումը՝ դատարանը նշեց, որ քաղաքապետարանը պետք է տրամադրի փաստաթղթերը, սակայն կազմակերպությունը յուրաքանչյուր էջի համար պետք է վճարի հազարական դրամ: Այսինքն՝ դատարանի մեկնաբանությունն ամբողջովին հակասեց իր իսկ կայացրած որոշման բովանդակությանը:

- 2006թ.-ի մարտի 21-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Արմավիրի քաղաքապետարանի» գործով ամբողջությամբ բավարարեց հայցվոր կազմակերպության պահանջը (ԻԱ կենտրոնի):

2005թ.-ի հոկտեմբերի 14-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր Արմավիրի քաղաքապետ Ռուբեն Խլիլաթյանին՝ խնդրելով տրամադրել.

1. 2005թ.-ի 2-րդ եռամսյակի ընթացքում Արմավիր քաղաքի

ավագանու կողմից կայացված բոլոր որոշումների պատճենները,

2. 2005թ.-ի բյուջեի պատճենը, ինչպես նաև դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի (ապրիլ-հունիս ամիսների) համար:

Քաղաքապետ Ռ. Խլիլաթյանը 20.09.2006թ.-ին թվագրված գրությամբ համաձայնել էր պահանջվող տեղեկատվությունը տրամադրել այն դեպքում, եթե հարցումը ձեւակերպվի ձեւաթղթի վրա, տրամադրվի ԻԱ կենտրոնի կանոնադրությունը եւ վճարվի տեղեկատվության տրամադրման համար:

11.01.2006թ.-ին ձեւաթղթի վրա ձեւակերպված կրկնակի հարցում ուղարկվեց քաղաքապետին, որում նշված էր, որ Կենտրոնը պատրաստ է վճարել 10 էջից ավել տեղեկատվության պատճենահանման ծախսերը՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի: Հարցումում նշվել էր նաև, որ կանոնադրության պատճենը տրամադրելու պահանջն ապօրինի է եւ չի բխում «ՏԱ մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Արմավիրի քաղաքապետն այս հարցմանն ի պատասխան պահանջեց անձամբ տեսնել կենտրոնի ղեկավարին՝ պարզելու, թե ո՞վ է այդ համարձակը, որ իրենից նման տեղեկություններ է պահանջում: Նրա պահանջն, իհարկե, մնաց անպատասխան, իսկ Կենտրոնի հարցումն էլ՝ չբավարարված:

ԻԱ կենտրոնը տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու պահանջի մասին հայց ներկայացրեց դատարան ընդդեմ Արմավիրի քա-

ղաքապետարանի: Առաջին նիստը՝ 06.03.2006թ.-ին քաղաքապետարանի ներկայացուցչի խնդրանքով հետաձգվեց: 15.03.2006թ.-ին նշանակված երկրորդ նիստը նույնպես հետաձգվեց՝ այս անգամ արդեն քաղաքապետարանի ներկայացուցչի չներկայանալու պատճառով:

Քաղաքապետարանի ներկայացուցիչը ներկա չէր նաև դատական 3-րդ նիստին՝ 21.03.2006թ.-ին, որի ժամանակ էլ դատավորը վճիռ կայացրեց հայցվոր կազմակերպության օգտին՝ ամբողջությամբ բավարարելով հայցը, այն է՝ տրամադրել պահանջվող ողջ տեղեկատվությունը եւ վճարել հայցվորի դատական ծախսերը՝ պետական տուրքը: Սա 2006թ.-ին ԻԱ կենտրոնի օգտին ավարտված հինգերորդ դատական գործն էր: Պետք է նշել, որ Արմավիրի քաղաքապետը կազմակերպությանը տեղեկությունները տրամադրեց միայն հարկադիր կատարման ծառայության միջամտությունից հետո:

Ընդհանրապես, գրեթե բոլոր դատական գործերի հիմքում ընկած են իրավունքի ակնհայտ խախտումները եւ պաշտոնյաների՝ իրենց պարտականություններից անտեղյակությունը: Նշենք, որ զուտ դատարան դիմելու փաստն արդեն ունենում է կանխարգելիչ գործառույթ: Օրինակ դատական գործերն ընդդեմ Արարատի մարզպետարանի, Ապարանի եւ Գյումրու քաղաքապետարանների հայցվորի, այսինքն՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի միջնորդության հիման վրա կարճվել են, քանի որ պատասխանող կողմերը կատարել են իրենց պարտավորությունը մինչ դատական նիստի ավարտը: Անդրադառնանք նշված 3 գործերի մանրամասներին, քանի որ բավական հետաքրքիր են պատասխանող կողմերի պատճա-

ռաբանությունները՝ պահանջվող տեղեկությունները չտրամադրելու վերաբերյալ:

- 2005թ.-ի սեպտեմբերի 14-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Շիրակի մարզի մարզային իրավաբան Արտուշ Գրիգորյանը տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել Գյումրու քաղաքապետ պարոն Վարդան Ղուկասյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

 1. 2005թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Գյումրի քաղաքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումների պատճենները,
 2. 2005թ. բյուջեի պատճենը, ինչպես նաև դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի /ապրիլ-հունիս ամիսներ/ համար:

Հարցմանն ի պատասխան՝ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար պարոն Ա. Սազմանյանը գրել է⁴⁴.

«Գյումրու ավագանու կայացրած որոշումներին եւ 2005թ. բյուջեին կարող եք ծանոթանալ Գյումրիի ինտերնետային կայքից, որը պատրաստման ընթացքի մեջ է»:

Աննախադեպ հղում է սեփական ինտերնետային կայքի վրա՝ հաշվի առնելով, որ այն դեռեւս պատրաստ չէ:

2005թ.-ի նոյեմբերի 17-ին Ինֆորմացիայի ազատության

44. Նշենք, որ որ այս ակնհայտ զավեշտալի պատասխանի համար 2005թ.-ին Գյումրիի քաղաքապետարանը Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կազմակերպած Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է «Ժանգոտ կողպեք» բացասական մրցանակին՝ ամենազավեշտալի պաշտոնական գրության հեղինակ անվանակարգում հաղթող ճանաչվելով: Մանրամասները տես՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի www.foi.am ինտերնետային կայքում:

կենտրոնը հայց ներկայացրեց ՀՀ տնտեսական դատարանի Շիրակի մարզային նստավայր, սակայն գործը չհասցրեց վարույթ մտնել: Հայցը ետ վերցվեց, քանի որ Գյումրու քաղաքապետարանը տրամադրեց պահանջվող ամբողջ տեղեկատվությունը:

- 2005թ.-ի սեպտեմբերի 16-ին հարցում էր ուղարկվել Ապարանի քաղաքապետարան՝ հետեւյալ տեղեկատվությունը ստանալու նպատակով⁴⁵.

1. 2005թ.-ի ընթացքում հողահատկացումների (սեփականության եւ վարձակալության հիմքերով) վերաբերյալ կայացրած որոշումները,

2. այն անձանց ցանկը, ուն հատկացվել են հողատարածությունները,

3. ի՞նչ գնով են դրանք հատկացվել:

Ապարանի քաղաքապետարանը հարցումը թողել էր անպատասխան: Անպատասխան էր թողնվել նաեւ 2005թ.-ի դեկտեմբերի 22-ին ուղարկված կրկնակի հարցումը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայց ներկայացրեց Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու մասին:

2006թ.-ի հունվարի 18-ին Ինֆորմացիայի ազատության կենտ-

45. Այս եւ տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության դատական պրակտիկային առնչվող 2001-2006թթ տեղի ունեցած բոլոր գործերին կարող եք ծանոթանալ «Դատական գործերի ժողովածու» գրքում, խմբ. Շ.Դոյրոյան, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Երեւան, 2006թ.:

րոնի նախագահ Շուշան Դոյրոյանին զանգահարեց Ապարանի փոխքաղաքապետը եւ հայտնեց, որ պատվիրված նամակով ուղարկված հարցումներից ոչ մեկն էլ չեն ստացել: Նա նաեւ նշեց, որ փոստից պարզել են, որ հարցումները ստանալու համար ստորագրել եւ դրանք ստացել է քաղաքապետարանի հետ որեւէ կապ չունեցող մեկը:

Արդյունքում, Ապարանի փոխքաղաքապետը տրամադրեց սպառիչ պատասխան, բայց այն, որ քաղաքապետարանի նամակները ստանում է անհայտ մեկը՝ արդեն կասկածելի է:

- 2005թ.-ի սեպտեմբերի 16-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Արարատի մարզի մարզային իրավաբանը հարցում էր ուղարկել Արարատի մարզպետ Ա. Սարգսյանին՝ խնդրելով տրամադրել 2005թ.-ի 1-2-րդ եռամսյակների ընթացքում մարզպետի ընդունած որոշումների պատճենները:

Հոկտեմբերի 3-ին մարզպետարանից ուղարկված պատասխանն ուներ հետեւյալ բովանդակությունը.

«Հայտնվում է, որ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ Ձեր հարցումը չի բխում Ձեր իսկ մատնանշած օրենքի պահանջներից: Այն պարունակում է հաշվետվության պահանջի կամ վերահսկողության տարր: Ձեր խնդրանքը կարող է բավարարվել, եթե այն ներկայացվի անհրաժեշտ իրավական ակտի կոնկրետ համարանշումով»:

Հոկտեմբերի 28-ին կրկնակի հարցում ուղարկվեց Արարատի մարզպետարան, որը նույնպես մերժվեց:

ԻԱԿ կողմից հայց ներկայացվեց Արարատի մարզի առաջին

ատյանի դատարան: 2006թ.-ի հունվարի 20-ին նշանակված դատական առաջին նիստը հետաձգվեց՝ մարզպետարանի ներկայացուցչի խնդրանքով: 7 օր անց՝ հունվարի 27-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոն զանգեց Արարատի մարզպետի տեղակալ պարոն Մինասյանը եւ ասաց, որ նոր է իմացել հարցման գոյության մասին: Իր անտեղյակությունը բացատրեց այն բանով, որ մարզպետարանի իրավաբանը, ով զբաղվում է այդ գործերով, իրենց չի տեղեկացրել: Այսպես, մարզպետարանի իրավաբանները կարողանում են մարզպետի եւ մարզպետարանի անունից պատասխանել հարցումներին, ստիպել, որ մարզպետը ստորագրի պատասխանների տակ կամ նրա փոխարեն ստորագրել (հարցումներին ի պատասխան ուղարկված երկու գրություններն էլ մարզպետի անունից էին՝ նրա ստորագրությամբ), անգամ հանդես գալ դատարանում:

Տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության դատական պրակտիկայի զարգացման միտումները, սակայն, վկայում են, որ տեղեկություն ստանալու իրավունքը խախտած որեւէ պաշտոնյա չի ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության, թեւ թե՛ քրեական, թե՛ վարչական օրենսդրությունը տեղեկատվության ազատության խախտման համար նախատեսում են պատասխանատվություն: Ներկայումս ՀՀ քաղաքացիներից ուղարկված մեկ գործ է լսվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանում՝ տեղեկություն ստանալու խախտված իրավունքը վերականգնելու պահանջով:

Սա տեղեկատվության ազատության անօրինական սահմա-

նափակման հետ կապված ՀՀ-ից ընդունված դեռեւս միակ գանգատն է: 2004թ.-ին «Գերագույն խորհուրդ-պատգամավորական ակումբ» (այսուհետ նաեւ՝ Դիմումատու)՝ նախագահ Ռուբեն Թորոսյանի ղեկավարությամբ դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան, քանի որ խախտվել է տեղեկատվություն ստանալու եւ տարածելու իրավունքը, որն իրականացվել է Դիմումատուի դատավարական իրավունքների բազմաթիվ խախտումների միջոցով եւ, որպես հետեւանք, պետությունը չի կատարել իր պարտականություններն օրենսդիր մարմնի ազատ ընտրություններ անցկացնելու ուղղությամբ:

Բողոք-գանգատը ներառում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երեք հոդվածների խախտում՝ այդ թվում՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի:

- «Գերագույն խորհուրդ-պատգամավորական ակումբը» 26.05.03թ.-ին թիվ 191 դիմումով խնդրել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ընդունված կարգի համաձայն, հնարավորություն տալ ստանալու Ազգային ժողովի 2003թ.-ի ընտրություններին վերաբերող մի շարք փաստաթղթերի պատճեններ, մասնավորապես.

 - 1.** 2003թ.-ի մարտի 12-ից հետո ՀՀ ԿԸՀ ընդունած որոշումների պատճենները,
 - 2.** 2003թ.-ի մարտի 12-ից հետո ՀՀ ԿԸՀ նիստերի արձանագրությունների պատճենները,
 - 3.** ՀՀ ԱԺ համամասնական ընտրական ցուցակով առաջադրված կուսակցությունների /կուսակցությունների դաշինքներ-

րի/ նախընտրական հիմնադրամներում կատարվող կամավոր մուծումների եւ ծախսերի հաշվառման կարգի 3-րդ կետի համաձայն բացված գրանցամատյանի պատճենը:

ԿԸՀ-ն, սակայն, անպատասխան էր թողել դիմումատուի հարցումը: Նշյալ գանգատի առնչությամբ Եվրադատարանը գործով պատասխանող կողմ հանդես եկող ՀՀ կառավարությանը ի թիվս այլ հարցադրումների ներկայացրել է նաեւ այն, որ. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիմումատուին տեղեկությունները չտրամադրելով արդյոք չի՞ խախտել Դիմումատուի՝ տեղեկություն ստանալու իրավունքը, որը երաշխավորված է Ընտրական օրենսգրքի 30-րդ եւ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով»:

Սակայն կառավարությունը պնդում է, որ Դիմումատուի՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում առկա չէ՝ հետեւյալ հիմնավորումներով՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը չի սահմանում պետական մարմնի՝ իր կամքին հակառակ տեղեկատվության տրամադրման պոզիտիվ պարտականություն, Կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառելի չէ սույն գործի հանգամանքների նկատմամբ, Դիմումատուն չի դիմել ԿԸՀ՝ տեղեկատվություն ստանալու խնդրանքով, Դիմումատուի պահանջած տեղեկատվության չտրամադրումը չի խախտում «տեղեկատվության ազատության» եությունը:

Կառավարությունը տվյալ գործի կապակցությամբ ներկայացնում է նաեւ մի շարք այլ առարկություններ, որոնցում պնդում է. «... Կոնվենցիայի 10-րդ հոդվածը... չի պարտավորեցնում պե-

տական իշխանություններին տարածել իրենց կամքին հակառակ տեղեկատվություն»:

Սակայն տեղեկատվության տրամադրումը չպետք է կամային բնույթ կրի, հատկապես եթե այն ներկայացնում է հանրային շահ: Թեեւ Դիմումատուն ունի իր հարցման ուղարկումը հավաստող փոստային անդորրագիր, սակայն կառավարությունը պնդում է, որ Դիմումատուն փաստացիորեն չի դիմել ԿԸՀ (չնայած ԿԸՀ-ը եւս չի հերքում իրեն դիմելու փաստը): Կառավարությունը նաեւ պնդում է, որ Դիմումատուն տեղեկատվություն ստանալու պահանջ չի ներկայացրել: Այստեղ անտրամաբանական եւ հակասական մի խառնաշփոթ է ստացվում, քանի որ եթե Դիմումատուն ՀՀ ԿԸՀ-ին դիմել է մի շարք փաստաթղթերի պատճեններ ստանալու խնդրանքով, հետեւապես դա արվել է տեղեկատվություն ստանալու նպատակով:

Մյուս կողմից էլ ՀՀ Կառավարության կողմից բերված առարկությունների համաձայն՝ ԿԸՀ որոշումները, ընտրական հանձնաժողովի արձանագրությունները հրապարակային տեղեկատվություն են, որոնց կարելի է անարգել ծանոթանալ:

Դիմումատուն պնդում է, որ «Կառավարության կողմից բերված դատողությունները ապատեղեկատվություն են պարունակում»: Քանի որ ըստ «Գերագույն խորհուրդ-պատգամավորական ակումբ»-ի նախագահ Ռուբեն Թորոսյանի՝ «Կառավարությունն ակնհայտորեն խուսափում է օրենքով սահմանված տեղեկատվություն տրամադրել նախընտրական հիմնադրամներ կատարած մուծումների եւ ծախսերի հաշվառման գրանցամատյանների վերաբերյալ, որի հետեւանքով հնարավորու-

թյուն չի ստեղծում որեւէ համաձայնության գալ սույն գանգատի պահանջների բավարարման ուղղությամբ»:

Դիմումատուն Եվրադատարանին դիմել է ոչ միայն տեղեկատվության իր իրավունքը վերականգնելու, այլ նաեւ՝ իր իրավունքների խախտման հետեւանքով կրած բարոյական եւ նյութական վնասի արդարացի փոխհատուցում ստանալու խնդրանքով, որը հաշվարկվել է 150 հազար եվրո: Վերջին պահանջի առնչությամբ, ինչպես տեղեկացրեց «Գերագույն խորհուրդ-պատգամավորական ակումբ» նախագահ Ռուբեն Թորոսյանը, ՀՀ Կառավարությունը դիմել է Եվրադատարանին՝ պատճառաբանելով. «Մեր ժողովուրդը շատ ծանր վիճակում է գտնվում, դա պետք է հաշվի առնեք եւ հայցի բավարարմամբ փոխհատուցման խնդիրը համարեք լուծված»⁴⁶:

Ի՞նչն է, այնուամենայնիվ, խանգարում տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ դատական պաշտպանության համար: Մեր դիտարկմամբ, դա պայմանավորված է մի քանի հիմնային պրոբլեմներով.

1. Դատարանի կախվածություն գործադիր իշխանությունից:

Առաջին կարեւորագույն խնդիրն առնչվում է դատարանի անկախությանն ու անկողմնակալությանը: Դատարանի համար դժվար է որոշում կայացնել գործադիր իշխանության ներկայացուցիչների դեմ գործադիր իշխանության թելից կախվածության հետեւանքով: Արդար դատարանի առկայությունը մարդու իրավունքների պաշտպանության

46. Դու տեղյակ լինելու իրավունք ունես, Տեղեկագիր, N17, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Երեւան, 2006թ., էջ 17:

բացառիկ երաշխիք է:

2. Դատարանի նկատմամբ վստահության պակաս: Ֆիզիկական անձանց կողմից հարուցված ընդամենը երեք դատական գործի առկայությունը վկայում է այն մասին, որ մարդիկ պարզապես չեն վստահում դատարանին, նրանք չեն հավատում, որ դատարանը կարող է լինել իրենց խախտված իրավունքների վերականգնման երաշխիք:

3. Անկատար օրենսդրական դաշտ: Պակասում են տեղեկություն ստանալու իրավունքի ապահովման համար անհրաժեշտ երկու ենթաօրենսդրական ակտեր: Օրինակ, դատարանը երբեմն հիմնավորում է հայցի մերժումը նրանով, որ քանի որ կառավարությունը չի ընդունել ՏԱ մասին օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված պետական մարմինների կողմից տեղեկատվություն տրամադրելու կարգը, ուրեմն պետական մարմնի կողմից տեղեկատվության տրամադրման մերժումն օրինական է:

4. Իրազեկման պակաս դատական համակարգում եւ հասարակության մեջ ընդհանրապես: Փորձը ցույց է տալիս, որ առայժմ դատական համակարգում այնքան էլ լավ չեն տիրապետում ՏԱ մասին օրենսդրության հիմնական դրույթներին: Կարծում ենք, որ օրենսդրության չիմացության հետեւանք է այն, որ դատավորը կարող է իր որոշումը հիմնավորել այսպես. 2003թ.-ի դեկտեմբերի 15-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Գ.Կարախանյանը մերժելով «Աքիլէս» կազմակերպության հայցն ընդդեմ ՀՀ Ոստիկանության՝

հիմնավորեց նրանով, որ ՀՀ Ոստիկանությունը հասարակական կազմակերպությանը տեղեկատվություն տալու լիազորությամբ օժտված չէ:

5. Եւ վերջապես, դատական գործերի հաջողության համար կարեւոր է նաեւ այս հարցում իրավաբանների, փաստաբանների մասնագիտացած խմբի ստեղծումը:

Կարծում ենք, որ դատական պաշտպանության պրակտիկայի զարգացմանը զուգահեռ անհրաժեշտ է զարգացնել եւ ակտիվացնել նաեւ պաշտպանության մյուս ձեւերը, մասնավորապես, այնպիսի արդյունավետ մեխանիզմ, ինչպիսին մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն է: Դատարան դիմելը թանկ հաճույք է, ծախսատար եւ ժամանակատար է, հատկապես այն դեպքում, երբ գործ ունենք տեղեկատվության հետ: Մինչ դատական քննության ավարտը տեղեկատվությունը հնանում է եւ այլեւս պետք չէ: Լրագրողները չեն դիմում դատարան հիմնականում հենց այս պատճառով:

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումը բողոքարկելու երկրորդ միջոցը պետական լիազորված անկախ մարմնին դիմելն է:

ՀՀ-ում այդ լիազորություններով օժտված է օմբուդսմենը՝ մարդու իրավունքների պաշտպանը, որի լիազորությունների մեջ է մտնում քննել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վե-

րաբերյալ բողոքները՝ համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի:

Ի դեպ, պաշտպանն ունի միայն խախտումը թույլ տված մարմնին խախտումը վերացնելու մասին առաջարկությամբ կամ միջնորդությամբ հանդես գալու լիազորություն: Այս առաջարկությունը, սակայն, չունի պարտադիր բնույթ («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, հոդված 15-րդ):

Մարդու իրավունքների պաշտպանի արդյունավետ գործողության համար պետք է նրան վերապահվի նաեւ մարդու իրավունքների խախտման գործում մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ մեղադրանք առաջադրելու լիազորություն: Ինչպես նաեւ, իր լիազորությունները արդյունավետ կատարելու համար մարդու իրավունքների պաշտպանը պետք է զերծ մնա քաղաքական ու տնտեսական ցանկացած ճնշումներից, ուստի պետք է քաղաքական եւ ֆինանսական իրական անկախություն ունենա: Ի դեպ, որոշ երկրներում մարդու իրավունքների պաշտպանը կամ տեղեկատվության ազատության հանձնակատարը համարվում են տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման միակ եւ վերջնական օղակ:

ՏԱ միջազգային պրակտիկան, այնուամենայնիվ, զարգանում է այն գաղափարով, որ տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտի գոյությունն անհրաժեշտ է այս իրավունքի պատշաճ պաշտպանության համար:

Ներկայացնենք տեղեկատվության հանձնակատարի հիմնական լիազորությունները ըստ միջազգային պրակտիկայի.

- **Տեղեկատվության ազատության հանձնակատարը հասարակական մարմին է**, որն իր գործողություններում լիովին անկախ է կառավարությունից: Հիմնականում այն անմիջականորեն զեկուցում է պառլամենտին եւ կատարում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային դեր:

Տեղեկատվության ազատության հանձնակատարի գործունեության իրավական հիմքն է տեղեկատվության ազատության մասին օրենքը:

Այս ինստիտուտի ստեղծման նպատակն է վերահսկել տեղեկատվության ազատության ակտի կատարումը ու կիրառումը. այդպիսով երաշխավորելով հանրային մարմինների տեղեկատվության մատչելիությունը նրանց համար, ում դա անհրաժեշտ է: Միեւնույն ժամանակ այն պաշտպանում է անհատի անձնական տեղեկությունները:

Հանձնակատարների պրակտիկայի միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղեկատվության ազատության հանձնակատարի հիմնական պարտականություններն են.

- **վերահսկել** տեղեկատվության ազատության մասին օրենքի կատարումը հանրային մարմինների կողմից,
- **պատրաստել** ամենամյա զեկույց տեղեկատվության ազատության մասին օրենքի կիրառման վերաբերյալ,
- **հավաքել** վիճակագրական տվյալներ տեղեկատվության ազատությանը վերաբերող պահանջների եւ որոշումների մասին,

- **տեղեկատվության ազատության մասին օրենքը մատչելի դարձնել** հասարակության համար՝ հրատարակելով այն,
- **հրապարակել** ուղեցույցներ, որոնք կօգնեն օգտագործել եւ կիրառել տեղեկատվության ազատության մասին օրենքը,
- **իրականացնել** պաշտոնյաների ուսուցում,
- **անհրաժեշտության դեպքում ապահովել** տեղեկատվություն, խորհրդատվություն եւ աջակցություն դիմողներին, պետական մարմիններին եւ այն անձանց, ովքեր դրա կարիքն ունեն,
- **ապահովել** օրենսդրական-քաղաքական խորհրդատվություն տեղեկատվության ազատության մասին օրենքի վերաբերյալ,
- **պաշտպանել** անհատի անձնական տեղեկությունները,
- **ապահովել** պաշտոնական տեղեկատվության մատչելիությունը, եթե այն չբացահայտելու համար լուրջ պատճառ չկա (օրինակ՝ հասարակության անվտանգությունը),
- **վերանայել** հանրային մարմինների այն որոշումները, որոնք վերաբերում են տեղեկատվության ազատության պահանջներին, անհրաժեշտության դեպքում կայացնել նոր ու պարտավորեցնող որոշումներ,
- **իրականացնել** հարկադրական գործունեություն (իրավական սանկցիա) այն անձանց հանդեպ, ովքեր արհամարհում կամ հրաժարվում են կատարել իրենց պարտականությունները:

SU հանձնակատարի հիմնական պարտականությունները կարելի է եւս խմբավորել.

- **համոզվել**, որ հանրային մարմինները տեղյակ են տեղեկատվության ազատության մասին օրենքով սահմանված իրենց պարտականություններին,
- **համոզվել**, որ հասարակությունը տեղյակ է տեղեկատվության ազատության մասին օրենքին եւ գիտի իր իրավունքները,
- **աջակցել** հասարակության անդամներին եւ պետական մարմիններին տեղեկատվության ազատության մասին օրենքին առնչվող հարցերում,
- **Ազգային ժողովին խորհուրդ տալ** տեղեկատվության ազատության մասին օրենքի նպատակներին հասնելու համար իրականացնել օրենսդրական բարեփոխումներ:

SU հանձնակատարները հիմնականում հետեւյալ ծառայություններն են մատուցում.

- **հրապարակել** տեղեկատվություն եւ ուղեցույցներ կազմակերպությունների բարեխիղճ գործունեությունն այս ոլորտում խրախուսելու համար եւ օգնել մարդկանց հասկանալ իրենց իրավունքները,
- **լուծել** քաղաքացիներից ստացված համապատասխան բողոքները,
- **պահել** հասարակական գրանցումների մատյան եւ վերահսկել տվյալները,
- **հավանություն տալ** այն հրապարակայնացման նախագծե-

րին, որոնք ընդունվել են տեղեկատվության ազատության մասին օրենքով նախատեսված մարմինների կողմից,

- **դատական պատասխանատվության կանչել** այն անձանց, ովքեր խախտել են SU մասին օրենքը,
- **կազմակերպել** հանդիպումներ տարբեր խմբերի հետ Օրենքի մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,
- **հրապարակավ վերլուծել եւ անդրադառնալ** գաղտնիության եւ ինֆորմացիայի մատչելիության սկզբունքներին:

Եթե տեղեկատվության ազատության հանձնակատարը գտնում է, որ կայացված որոշումը անարդար է, ապա նա կարող է պահանջել ընդունելու նորը: Նա կարող է նաեւ ցանկացած անձից, որն իր կարծիքով տիրապետում է տվյալ գործին կամ հետաքննմանը վերաբերող ինֆորմացիային, պահանջել տրամադրել այդ տվյալները: Ավելին, նա կարող է պահանջել, որ տվյալ անձը ներկայանա եւ անձամբ ներկայացնի ինֆորմացիան: Նա կարող է անձամբ գնալ եւ հանրային մարմնից պահանջել ցանկացած արձանագրություն (փաստաթուղթ), որը նա կարող է պատճենել, ինչպես նաեւ պահել որոշակի ողջամիտ ժամանակահատվածում: Նա ցանկացած պահի կարող է հետաքննել հանրային մարմինների գործունեությունը:

Ցանկացած անձ, ով խոչընդոտում է լիազորին քննություն կամ հետաքննություն իրականացնել, օրինազանց է եւ կարող է կամ տուգանվել, կամ ձերբակալվել, կամ երկուսը միասին: Օրենքով նախատեսված ժամանակահատվածում տեղեկատվություն չտրամադրելը դիտվում է որպես մերժում:

SU հանձնակատարի գործունեության ձեւերն են.

- լսումներ,
- ուսուցում,
- վիճարկում դատական ատյաններում (Տեղեկատվության ազատության լիազորի գրասենյակի իրավաբանական աշխատակազմն իրավունք ունի ներկայացնել գրասենյակի շահերը գրասենյակին առնչվող բոլոր հարցերում, ինչպես նաեւ՝ հանձնակատարի բողոքարկումները պաշտպանել վերադաս ատյաններում):

Տեղեկատվության ազատության հանձնակատարին կարող է դիմել ցանկացած անձ (իրավաբանական կամ ֆիզիկական), որին զրկել են փաստաթղթերի, արձանագրությունների, տեղեկատվության ծանոթանալու, դրանք ստանալու կամ պատճենելու իրավունքից, ինչպես նաեւ՝ եթե նրան զրկել են մարմինների բաց նիստերին մասնակցելու իրավունքից: Անձն իրավունք ունի բողոք ներկայացնել նշված հանրային մարմնի դեմ՝ որոշակի ժամանակահատվածում (սովորաբար 20-30 օր)՝ կախված տվյալ երկրում սահմանված կարգից:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության լավագույն երաշխիքը Տեղեկատվության ազատության հանձնակատարն է: Կարծում ենք, Հայաստանում եւս մոտ ապագայում կներդրվի SU հարցերով հանձնակատարի ինստիտուտը: Նման մարմիններ հատուկ ստեղծվել են SU բողոքներն ուսումնասիրելու նպատակով (Ավստրալիա, Կանադա, Ֆրանսիա, Շվեդիա, ԱՄՆ եւ այլուր): Նույնիսկ կան երկրներ, որտեղ այս իրավունքի դա-

տական պաշտպանություն չի գործում ընդհանրապես: Նոր Զելանդիայում, օրինակ, օմբուցմենը հռչակվել է որպես SU բողոքարկման միակ եւ վերջնական մարմին. «Մենք համարում ենք, որ...կան համոզիչ պատճառներ, որ այս հարցում վերջնական որոշում կայացնելու իրավունքը չլինի դատարանների լիազորությունը: Մեր նախընտրած համակարգում պետք է հաշվի առնվեն բազմաթիվ նկատառումներ, եւ հաշվեկշռվեն հասարակական եւ անհատական մրցակցող շահերը: Եթե դատարաններին ընդհանուր իրավասություն տրվեր վերջնական որոշում կայացնել պաշտոնական տեղեկատվության մատչելիությանը վերաբերող հարցերում, դրանք ստիպված կլինեին քաղաքական հնչեղություն ունեցող խնդիրներ լուծել», - նշում է Ջուդիթ Աթթենը իր «Բաց կառավարությունը Նոր Զելանդիայում» աշխատության մեջ⁴⁷:

Հայաստանում մորաստեղծ մարդու իրավունքների պաշտպանը քննում է նաեւ SU բողոքները: Սակայն, պաշտպանն ունի միայն խախտումը թույլ տված մարմնին խախտումը վերացնելու մասին առաջարկությամբ կամ միջնորդությամբ հանդես գալու լիազորություն: Այս առաջարկությունը, սակայն, չունի պարտադիր բնույթ: Մարդու իրավունքների պաշտպանի արդյունավետ գործողության համար պետք է նրան վերապահվի նաեւ մարդու իրավունքների խախտման գործում մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ մեղադրանք առաջադրելու լիազորություն:

47. Ջուդիթ Աթթեն, «Բաց կառավարությունը Նոր Զելանդիայում», «Բաց կառավարություն՝ տեղեկատվության ազատություն եւ անձնական կյանքի անձեռնմխելիություն», խմբ.՝ Անդրյու Մաքդոնալդ եւ Գրեգ Թերիլ, (Macmillan, London, 1998):

Քանի որ ՀՀ-ում ՏԱ դատական եւ արտադատական պաշտպանության պրակտիկան դեռեւս զարգացման վաղ փուլում են, այս իմաստով խիստ կարեւորվում է ՏԱ զարգացած ավանդույթներ ունեցող երկրների փորձի ուսումնասիրումը, մասնավորապես՝ այս իրավունքի պաշտպանության մեխանիզմների ոլորտում: Այդ իսկ նպատակով կանդիդատականք տեղեկության ազատության հանձնակատարների միջազգային փորձին:

ՏԱ հանձնակատար կամ հանձնաժողովներ են գործում գրեթե բոլոր արեւմտյան երկրներում: Այդ մարմինները հատուկ ստեղծվել են ՏԱ բողոքներն ուսումնասիրելու նպատակով (Ավստրալիա, Կանադա, Ֆրանսիա, Շվեդիա, ԱՄՆ): Այդ մարմինների որոշումները կարող են բողոքարկվել դատարան:

- **Ֆրանսիայում** գոյություն ունի պաշտոնական փաստաթղթերի մատչելիության հատուկ Հանձնաժողով (Commission d'accès aux documents administratifs-CADA): Այն ստեղծվել է գործում է Ֆրանսիայում 1978թ.-ի հուլիսի 17-ին ընդունված ՏԱ մասին օրենքի 5-րդ հոդվածով: Հանձնաժողովն արդեն 30 տարի է հետեւում է կառավարության գործունեության թափանցիկությանը: Այն ուսումնասիրում է տեղեկատվության մատչելիության հետ կապված բողոքներն ու դժգոհությունները: Պրոբլեմների մեծ մասը հենց այստեղ էլ լուծում է ստանում: Մերժումը դատարանում գանգատարկելուց առաջ անհրաժեշտ է իմանալ CADA-ի կարծիքը: Սովորաբար պետական մարմինները համաձայնում են CADA-ի հետ, որն անկախ խորհրդատվական մարմին է: Հանձնաժողովը տեղեկություն ստանալու իրավունքը պաշտպանելու երեք մեխանիզմ է կիրառում.

1. Խորհրդատվություն՝ այսինքն գործադիր իշխանության ցանկացած մարմին կարող է դիմել հանձնաժողովին՝ այս կամ այն փաստաթղթի մատչելիության վերաբերյալ մեկնաբանություններ խնդրելով: Հանձնաժողովի տված կարծիքը պարտադիր գործողության ուժ չունի, բայց հիմնականում հաշվի է առնվում:

2. Յուրաքանչյուր անձ, ում մերժել են տեղեկություն տրամադրել կամ մեկամսյա ժամկետում պատասխան չեն տվել, կարող է դիմել հանձնաժողովին, որպեսզի վերջինս արտահայտի իր կարծիքը պահանջվող փաստաթղթի մատչելիության վերաբերյալ: Ի դեպ, հանձնաժողովին դիմելը պարտադիր է դատարան դիմելուց առաջ: Հանձնաժողովը միջամտելու լայն լիազորություններ ունի: Այն իրավասու է կառավարությունից պահանջել իրեն տրամադրել վիճելի փաստաթղթերը եւ ցանկացած այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Եթե հանձնաժողովը որոշում է, որ տվյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի այն հայցողին, ապա կառավարությունը կարող է, բայց պարտադրված չէ տրամադրել այն: Եթե կառավարությունը հանձնաժողովի դրական կածիքից հետո էլ համառում է, ապա քաղաքացին իր իրավունքը պաշտպանելու համար պետք է դիմի դատարան:

3. Հանձնաժողովը հսկող դեր է կատարում կառավարության գործունեությունն ավելի թափանցիկ դարձնելու համար: Տարեկան հաշվետվություններում հրապարակում է այն մարմինների անունները, որոնք խախտում են տեղեկատվության ազատությունը: Միաժամանակ մասնակցում է տեղեկատվության մատչելիությանը վերաբերող օրենքների եւ

իրավական ակտերի մշակմանը՝ համագործակցելով ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանության հետ: Նշենք, որ հանձնաժողովը տարեկան քննում է 4500 դիմում⁴⁸:

- **Կանադայում** եւս գործում է Տեղեկատվության հանձնակատարի անկախ ինստիտուտը, որը լուրջ հակակշիռ է կառավարության եւ պետական պաշտոնյաների կամայականությունների դեմ: Այն իրականացնում է քաղաքացիների տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքի պաշտպանությունը եւ գործում է «Տեղեկատվության մատչելիության մասին» ֆեդերալ օրենքի (1983թ.) հիման վրա:

Կանադայի Տեղեկատվության հանձնակատարը պետական մարմին է եւ մյուս պետական մարմինների գործողությունները վերահսկելու լիազորություն ունի: Այն սահմանափակվում է միայն հանձնարարականներ տալու լիազորությամբ, որոնք չունեն պարտադիր ուժ: Եթե պետական մարմինը չի կատարում հանձնակատարի հանձնարարականը, ապա վերջինս դիմում է դատարան: Ընդ որում, քաղաքացին չի կարող անմիջապես դիմել դատարան: Դրա կարիքը թերեւս չկա էլ, քանի որ, ինչպես ցույց է տալիս հանձնակատարի գրասենյակի վիճակագրությունը, ապա գործերի 99%-ը այստեղ էլ լուծում է ստանում հանձնարարականների միջոցով: Ի դեպ, քիչ չեն նաեւ այն դեպքերը, երբ պետական մարմիններն են դատի տալիս

48. Հարցազրույց Ֆրանսիայի Վարչական փաստաթղթերի մատչելիության հանձնաժողովի (Commission d'accès aux documents administratifs) գլխավոր քարտուղար Ժան Պատրիկ Լեբենդուի հետ, 2002թ. հուլիս, Ֆրանսիա (հարցազրույցը՝ Լիանա Սայադյանի): Տպագրվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագրում, 2002թ. սեպտեմբեր:

հանձնակատարին՝ չհամաձայնելով նրա հանձնարարականների հետ:

2002թ.-ին, օրինակ, Կանադայի կառավարությունը 35 անգամ հանձնակատարին դատի է տվել՝ վիճարկելու նրա հանձնարարականներն ուղղված վարչապետին, պաշտպանության նախարարին, ազգային անվտանգության նախարարին եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաների: Կանադայի Հանձնակատարի կարելուրագույն լիազորությունն այն է, որ նա կարող է հետաքննություն իրականացնել: Նրա պահանջով պաշտոնյաները պետք է ներկայանան եւ ցուցնունք տան, իրենց հետ ներկայացնեն փաստաթղթեր:

Առանցքային նշանակություն ունի նաեւ հանձնակատարի ինստիտուտի քաղաքական եւ ֆինանսական անկախության հարցը: Այս մարմինը ֆինանսավորվում է պետբյուջեից, բայց հաշվետվություն է ներկայացնում պառլամենտին, ասել է թե՛ հասարակության ընտրյալների առաջ: Կառավարությունը չի կարող վերահսկել հանձնակատարի գործողությունները: Անկախության երաշխիք է նաեւ հանձնակատարի նշանակման կարգը: Նա նշանակվում է Կառավարության կողմից, բայց նրա նշանակումը հաստատում է պառլամենտը: Կառավարության նշանակած անձին պառլամենտը կարող է պարզապես չընդունել: Հանձնակատարը ոչ թե պետական պաշտոնյա է, այլ պառլամենտական: Նա նշանակվում է 7 տարի ժամկետով: Այս ժամանակահատվածում նրան ոչ ոք չի կարող պաշտոնանկ անել: Նրան կարող են վերանշանակել, բայց չեն կարող ազատել պաշտոնից: Հանձնակատարին կարող է ազատել միայն պառլամենտը, այն էլ միայն այն դեպքում, երբ կատարել է

քրեորեն պատժելի արարք⁴⁹:

- **ԱՄՆ-ի Քոննեքթիքուս նահանգի օրինակը:** Այստեղ գործում է Միացյալ Նահանգներում ինֆորմացիայի ազատության միակ նահանգային պետական հանձնաժողովը: Նահանգային իշխանություններն են վճարում հանձնաժողովի գործունեության համար, իսկ վերջինս լիազորված է պատժել այն պաշտոնյաներին, ովքեր խախտում են հասարակության յուրաքանչյուր անդամի՝ տեղեկություն ստանալու իրավունքը:

Այս նահանգային հանձնաժողովը գործում է արդեն 30 տարի⁵⁰՝ տարեկան կայացնելով ավելի քան 700 որոշում, ստանալով 10.000 հեռախոսային բողոք ու 13.000 ինտերնետային ահազանգ ոչ միայն լրատվամիջոցների ներկայացուցիչների, այլև՝ հասարակության բոլոր անդամների կողմից (իրականում լրատվամիջոցներից եկած բողոքները կազմում են ընդամենը 15 տոկոսը, 85 տոկոսը գալիս է անհատ քաղաքացիներից եւ կազմակերպություններից):

Ի տարբերություն Ֆրանսիայի եւ Կանադայի՝ Քոննեքթիքուս նահանգի հանձնաժողովի որոշումները պարտադիր բնույթ ունեն եւ կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: «Մեր նահանգային կառավարիչը բավականին հիմար է եղել, որ համաձայնել է ֆինանսավորել մի մարմնի, որն իրեն պետք

49. Հարցազրույց Կանադայի տեղեկատվության հանձնակատարի ավագ իրավախորհրդատու Լերի Բերենդի հետ: Հարցազրույցը Շ. Դոյոյանի, 2002թ. մարտ, Օտտավա:

50. Freedom of Information Commission - սա է հանձնաժողովի պաշտոնական անվանումը, որը ստեղծվել է 1975 թ.-ի մայիսի 3-ին:

է վնասի»,- ասում է հանձնաժողովի նախագահ Միտչել Փիլըրմենը⁵¹:

Այսպիսով, ՏԱ հանձնակատարների միջազգային փորձը ցույց է տալիս, որ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության լավագույն միջոցն այս ինտիտուտն է, քանի որ այն գործում է քաղաքական եւ տնտեսական ճնշումներից անկախ՝ առաջնորդվելով մարդու իրավունքի գերակայության սկզբունքով:

51. Հատված հարցազրույցից, 8 մարտի, 2000թ., Հարթֆորդ, Քոննեքթիքուս, ԱՄՆ: Հարցազրույցը՝ Շ. Դոյոյանի:

Պատասխանատվություն տեղեկություն ստանալու իրավունքի ոտնահարման համար

Տեղեկություն տրամադրելուց ապօրինի հրաժարվելու կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաև տեղեկատվության ազատության օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար մեղավոր անձանց նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն:

1. 2003թ.-ի դեկտեմբերի 1-ին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվություն է սահմանվում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար:

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակեր-

պությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝

սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

2. ՀՀ Քրեական նոր օրենսգրքի 148-րդ հոդվածով՝ «Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը» քրեական պատասխանատվություն է նախատեսվում պաշտոնատար անձանց կողմից տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար: Սահմանվում է.

«Անձին տեղեկություն ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին եւ օրինական շահերին վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից մինչև 400-ապատիկի չափով»:

3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը եւս մեկ կարեւորագույն երաշխիք է ապահովում այս իրավունքի ապահովման համար: Օրենքը թեւ սահմանում է հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները, սակայն միաժամանակ պաշտպանության տակ է առնում զաղտնիք պարունակող տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշ-

տոնյաներին եւ բացառում է նրանց վարչական կամ քրեական պատասխանատվությունը, եթե այդ տեղեկատվության հրապարակմամբ կարող են կանխվել հասարակությանը սպառնացող վտանգը, մարդկանց անվտանգությանն ու առողջությանը, շրջակա միջավայրին սպառնացող աղետները, մի խոսքով՝ գաղտնիքի հրապարակումն օգուտ է բերում հասարակությանը:

Չամաձայն SU մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝ 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունների հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Օրենսդրությունը հատուկ պաշտպանության տակ է վերցնում լրագրողի տեղեկություն ստանալու իրավունքը՝ սահմանելով քրեական պատասխանատվություն այն խախտելու դեպքում: Սա չափազանց կարելի է ոչ միայն լրագրողի, այլև՝ ողջ հասարակության տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության համար:

ՀՀ Քրեական օրենսգրքի 164 հոդվածով՝

«Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը» պատասխանատվություն է սահմանվում լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքում:

1. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով:

2. Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով (փոփ. 01.06.2006թ.), կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Նշենք, որ եվրոպական երկրները հիմնականում առավել խիստ պատժաչափեր են սահմանում լրագրողի աշխատանքը խոչընդոտելու դեպքում: Օրինակ, Ֆրանսիայի Քրեական օրենսգիրքը սահմանում է 15000 եվրո տուգանք, իսկ եթե նույն արարքը կատարվել է՝

ա) ծեծով զուգորդված,

բ) բռնի գործողությունների գործադրմամբ, կամ

գ) գույքի ոչնչացմամբ կամ գույքին վնաս հասցնելով պատժվում է ազատազրկմամբ՝ երեք տարի ժամկետով եւ տուգանքով՝ 45000 եվրո գումարի չափով:

Շվեդիայի Քրեական օրենսգիրքը սպառնում է մինչեւ 6 տարի ազատազրկմամբ⁵²:

Այս երկրների համեմատությամբ ՀՀ-ում պատժաչափերն այն-

52. Աղբյուրը՝ Ինտերնյուս ՀԿ, www.internews.am:

քան էլ խիստ չեն: Ավելին, ՀՀ Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածը բավականին հազվադեպ է կիրառվում: Առաջին անգամ այն կիրառվեց 2004թ.-ի հոկտեմբերի 11-ին, երբ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանը լրագրողի օրինական մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու համար մեղավոր ճանաչեց այն թիկնապահին, ով Ծաղկաձորում հարձակվել էր լրագրողների վրա՝ թույլ չտալով լուսանկարել Աժ պատգամավորի առանձնատունը:

Դատարանը թիկնապահին դատապարտեց վեց ամիս ազատազրկման՝ լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու եւ նրանց մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար: Դա առաջին դեպքն էր Հայաստանում, երբ անձը դատապարտվեց ազատազրկման լրագրողների աշխատանքն ապօրինի խոչընդոտելու եւ տեղեկություններ ստանալու նրանց իրավունքը սահմանափակելու համար:

Այնուամենայնիվ, վերջին տարիների փորձը եւ Հայաստանում լրագրողների դեմ կատարված բազմաթիվ բռնարարքների փաստերի ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ թեև գործող քրեական օրենսդրությունը պատասխանատվություն է նախատեսում լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը համար, սակայն իրավապահ մարմինների կողմից միայն 2 դեպքում է կիրառվել ՀՀ Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածը:

Մյուս բոլոր դեպքերում մեղավորները պատժվել են քրեական օրենսգրքի այլ հոդվածներով, որոնք որեւէ կերպ չեն առնչ-

վում լրագրողի գործունեությանը խոչընդոտելու հետ: Որոշ դեպքերում նույնիսկ ընդհանրապես քրեական գործ չի հարուցվել, եւ մեղավորները անպատիժ են մնացել:

Այսպիսով, կարելի է ասել, որ լրագրողներն օրենքով պաշտպանված են իրենց մասնագիտական օրինական գործունեությունը իրականացնելու ժամանակ, սակայն անպաշտպան են պրակտիկայում, քանի որ օրենքը կիրառող մարմինները միշտ չէ որ ցանկանում են իրականացնել օրենքի պահանջները: Իսկ նրանց անգործության պատճառաբանությունները բազմաթիվ են⁵³: Ուստի, արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության իրավունքների լիարժեք պաշտպանության եւ պատասխանատվություն սահմանող նորմերի լիարժեք կիրառման համար, իհարկե, նախելառաջ կարելու է անկախ դատական հավակարգի առկայությունը:

53. Տես՝ Ինտերնյուս Հի, www.internews.am, home.media.am, ինչպես նաև Շ. Դոյրոյան, «Խոսքի ազատության սահմանադրական երաշխիքները», 2001թ., Երեւան, էջեր 25-37:

Վերջաբան

Հրապարակայնությունը կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական գործիքն է: ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդեն մի առիթով նշել է⁵⁴. «Մի փոքր արեւի լույսը լավագույն ախտահանումն է»: Առանց արեւի լույսի կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր կոչերն ու գործողությունները ծախսողման են դատապարտված:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի ընդունումը միայն առաջին քայլն էր երկրում հրապարակային եւ բաց կառավարում ձեւավորելու ճանապարհին: Հստակ է. օրենքի առկայությունը դեռեւս չի նշանակում, թե հրապարակայնության համար պայքարն ավարտված է: Դեռեւս առկա է հսկայական անդունդ տեղեկատվություն ստանալու իրավունքի եւ դրա իրական մատչելիության միջեւ: Հայաստանում արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության, ինչպես նաեւ մարդու այլ իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը առայժմ ոչ բավարար մակարդակի վրա է: Նշենք, սակայն, որ սրա պատճառը միայն իրավական լուծումների եւ երաշխիքների պակասը չէ, այլ նաեւ մեր իրականության մեջ արմատացած մարդու իրավունքների ոտնահարման անպատժելիությունն է: Քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես՝ մամուլը, իր խնդիրը պետք է համարի ոչ միայն իր իրավունքների, այլ նաեւ՝ յուրաքանչյուր անհատի իրավունքների եւ ազատությունների համար համառ պայքար մղելը:

54. Concept Paper on Media Law, ABA CEELI, November, 1996, p. 79.

ՀՀ-ում իշխանության թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է իրականացնել հետեւյալ ռազմավարական ուղղությունները.

- Պետական կառավարման մարմինների համար անհրաժեշտ է ընդունել տեղեկատվության տրամադրման մեկ միասնական ընթացակարգ, որը բխում է ՏԱ մասին ՀՀ օրենքից: Այն պետք է կարգավորի գրավոր, բանավոր, էլեկտրոնային հարցումներին ընթացք տալու գործընթացը, օրենքով սահմանված տեղեկությունների հրապարակման մեխանիզմները (ինտերնետով, գտնվելու վայրում, ցուցատախտակների վրա փակցնելու միջոցով, բրոշյուրներ, տեղեկագրեր տպագրելու, հեռուստահաղորդումներ հեռարձակելու եւ այլ միջոցներով): Այս կարգերը պետք է հստակեցնեն նաեւ տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու բաժինների կամ անձի գործառույթները, լիազորությունները, գործունեության շրջանակը:
- Անհրաժեշտ է արագացնել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձանց նշանակման գործընթացը, ուն հիմնական պարտականությունը պետք է լինի մարդկանց տեղեկություն ստանալու հարցումներն ընդունելը եւ ընթացք տալը: Այս պաշտոնյային տեղեկություն տրամադրելու հիմնական պատասխանատու ճանաչելով՝ կնվազի քաղաքական պաշտոնյաների սուբյեկտիվ գործոնը տեղեկատվության տրամադրման գործընթացում:

- Անհրաժեշտ է զարգացնել մարդկային ռեսուրսների ունակությունները, հմտություններն ու գիտելիքը: Առաջարկվում է ՏԱ հարցերին նվիրված դասընթացներ կազմակերպել պետական բոլոր մարմիններում աշխատող մամուլի եւ հասարակայնության հետ կապերի պատասխանատուների համար: Ուսուցումների կազմակերպումը պետք է պատվիրակվի քաղաքացիական հասարակության խմբերին:

Առաջարկվում է դասընթացներն ընդգրկել Կառավարման պետական ակադեմիայի եւ համալսարանների ուսումնական ծրագրերում, հատկապես ժուռնալիստիկայի եւ իրավաբանական ֆակուլտետներում: Որոշ հիմնական գիտելիքներ պետք է հաղորդվեն նաեւ դպրոցներում:

- Անհրաժեշտ է հզորացնել եւ զարգացնել տեղեկատվության մատչելիության տեխնիկական ռեսուրսները: Յուրաքանչյուր պետական մարմին պետք է հրապարակի տեղեկատվության ռեգիստր, որում մանրամասն նշելով, թե ինչպես պետք է քաղաքացին գրավոր հարցում պատրաստի, տվյալ մարմինն ինչ տեղեկատվություն է տնօրինում, որն է հարցումներին պատասխանելու ներքին ընթացակարգը: Պաշտոնական կայքերը պետք է մեկ միասնական ձեւի բերվեն, պարբերաբար թարմացվեն եւ պարունակեն հանրությանն ուղղված տեղեկություններ:

Պաշտոնական վեբ-կայքերում նշված էլեկտրոնային հասցեներով ուղարկված հարցումներին պետք է պատշաճ եւ ժամանակին ընթացք տրվի: Միեւնույն ժամանակ, տեղեկությունն ինտերնետում հրապարակելը չպետք է բացառի

գրավոր կամ բանավոր հարցումներին գրավոր կամ բանավոր պատասխան ստանալու հնարավորությունը:

- Առաջարկվում է, որ պետական ծառայողների եւ իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար քաղաքացիական հասարակության (մասնավորապես՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի) կողմից արդեն իսկ հրապարակված ձեռնարկներն ու ուղեցույցներն օգտագործվեն շարունակական ուսուցման համար, որի ընթացքում պաշտոնյաները պետք է սովորեն՝ ինչպես կիրառել ՏԱ օրենսդրությունը:
- Ջանգվածային լրատվամիջոցներում հրապարակված կոռուպցիոն ռիսկերին եւ կոռուպցիայի դրսեւորումներին վերաբերվող տեղեկատվությունը պետք է լրջորեն ուսումնասիրվի, դրանց պետք է արագ եւ արդյունավետ արձագանք տրվի, իսկ դրանց կիրարկման նկատմամբ վերահսկողություն սահմանվի:
- Առաջարկվում է, որ եւ կառավարությունը, եւ թե քաղաքացիական հասարակության կազմակերպությունները քայլեր ձեռնարկեն հանրությանը տեղեկություններ ստանալու իրավունքի եւ այդ իրավունքից օգտվելու մեխանիզմների մասին տեղեկացնելու ուղղությամբ: Այդ նպատակին կարող է ծառայել քաղաքացիների համար ՏԱ հարցերով ուղեցույցների հրատարակումը եւ տարածումը պետական բոլոր մարմիններում:
- Անհրաժեշտ է ձեւավորել տեղեկություն ստանալու խախտված իրավունքի բողոքարկման անկախ մեխանիզմ: Հաշվի

առնելով, որ միջազգային պրակտիկայում ընդունված եւ հաջողությամբ կիրառվող Տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտի ձեւավորումը ներկայումս ՀՀ-ի համար կարող է լինել ոչ ռացիոնալ լուծում, նպատակահարմար է սույն գործառույթը դնել Մարդու իրավունքների պաշտպանի՝ տեղեկատվության ազատության հետ կապված բողոքներով հատուկ տեղակալի վրա:

Ընդհանուր օմբուցմենի այս հարցով տեղակալի ինստիտուտի ներդրումը կդառնա լուրջ երաշխիք իրավունքի ապահովման համար մի կողմից, եւ կառավարությանն այս ոլորտում խորհրդատվական օգնություն ցուցաբերելու առումով՝ մյուս կողմից:

- Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները պետք է առաջ բերեն օրենքով սահմանված վարչական եւ քրեական պատասխանատվություն: Դատական հայցեր ներկայացնելիս՝ քաղաքացիական հասարակությունը պետք է ոչ միայն մերժված տեղեկատվությունը տրամադրելու պահանջ ներկայացնի, այլեւ՝ իրավունքը ոտնահարած պաշտոնյայի նկատմամբ պահանջի կիրառել քրեական եւ վարչական պատասխանատվություն սահմանող նորմերը:

2008թ.-ին ՀՀ երկրի բարձրագույն իշխանությունները հայտարարեցին հրապարակային եւ թափանցիկ աշխատելու՝ իրենց քաղաքական կամքի առկայության մասին: Երկրի թիվ մեկ հիմնախնդրի՝ կաշառակերության դեմ պայքարի լավագույն միջոցը հրապարակային գործունեությունն է:

«Մենք հրապարակային ենք գործելու, քանի որ այն մեզ ուժեղ

է դարձնելու»,- մի առիթով նշել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը⁵⁵:

Այն համոզմանն ենք, որ քաղաքական կամքի մասին հայտարարելը առաջին եւ ամենակարեւոր նախապայմանն է երկրում իրական բարեփոխումներ իրականացնելու համար: Սակայն այն պետք է զուգորդվի նաեւ այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ՝ որպես գործընկեր: ՁԼՄ-ը պետք է իրականացնեն կոռուպցիայի կանխարգելման գործառույթ՝ պահանջելով պետական մարմինների գործունեության հրապարակայնություն եւ բացություն: Իսկ այդ պահանջի լավագույն մեխանիզմը հասարակական հսկողությունն է⁵⁶: Համակարգը բաց կաշխատի, եթե լինեն պահանջող եւ օրենքն օգտագործող մարդիկ. նրանք պետք է հարցեր տան իշխանություններին եւ պատասխաններ պահանջեն:

ՁԼՄ-ի հիմնական առաքելությունը պետք է դառնա նաեւ այդ գործընթացների իրականացմանը հսկելը եւ երկրում բացության ավանդույթներ ձեւավորելը՝ կրթության, քարոզարշավների, օրենսդրական բարեփոխումների, օրինագանցներին պատասխանատվության կանչելու եւ այլ մեխանիզմների միջոցով:

55. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն այս հայտարարությունն արել է 2008թ. հունիսի 5-ին Կառավարությունում ՁԼՄ եւ ՀԿ ղեկավարների հետ հանդիպման ժամանակ:

56. Հասարակական վերահսկողության հիմնալի մեխանիզմ է ԻԿ կենտրոնի կողմից ամենամյա ՍԵԼ ցուցակի հրապարակումը: Ցուցակում ընդգրկվում են այն բոլոր պաշտոնյաներն, ովքեր խուսափում են պատասխան տալ մարդկանց հարցումներին, ովքեր նախընտրում են թաքցնել իրենց գործողությունները հասարակության աչքից: Մեկ այլ մեխանիզմ է Ոսկե բանալի-ժանգոտ կողպեք ամենամյա մրցանակաբաշխությունը, որի ընթացքում ոսկե բանալի է շնորհվում հրապարակային գործող գերատեսչությունների ղեկավարներին, եւ ժանգոտ կողպեք՝ գաղտնի աշխատողներին:

Քաղաքացիական հասարակությունը կարող է եւ պետք է աջակցի կոռուպցիայի դեմ պայքարին եւ երկրում հրապարակային ավանդույթներ ձեւավորելու գործընթացին, սակայն կառավարությունն է ի վերջո կրում այս ամենի հաջող իրականացման պատասխանատվությունը՝ քանի որ քաղաքացիները նրան են վստահել իրենց իշխանությունը:

«Ազատությունը տղամարդկանց եւ կանանց սրտերում է,- գրել է ամերիկյան դատավոր Լեոնիդ Յենդը,- եթե այն մեռնում է այնտեղ, այլեւս ոչ մի սահմանադրություն, ոչ մի օրենք, ոչ մի դատարան չի կարող օգնել ազատությանը: Իսկ քանի դեռ այն նրանց սրտերում է, որեւէ սահմանադրության, որեւէ օրենքի, դատարանի անհրաժեշտություն չկա այն պահպանելու համար»⁵⁷:

57. Concept Paper on Media Law, ABA CEELI, November, 1996, p. 82-83.